Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵՐԽԵՐՀԵՐԵՐ

ՀԱՄԱՌՕՏ

ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԸՍՏ

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Աշխատ.

ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ԽԱՉ. ԲԱՀԱՆԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՆՈՐ-ՋՈՒՂԱ.

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանաց

1907

35903

ԱՂՕԹԱԳԻՐՔ

ԸՍՏ

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ, ԵՒ ԲԱՑԱՏՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ե.
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԿ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ
Տ. ՍԱՀԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

35903

ՆՈՐ-ՋՈՒՂԱ.
Տպարան Ս. Ամենափրկչեան Վանաց
1907

ՄԱՇՏՈՑԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ԱԻՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

ԱՂԽԱՐՀԱԲԱՐ ԱՂՕԹԱԳԻՐՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՏԻԿԻՆ ԽԱՉԽԱԹՈՒՆ Ն. ԿՐԷՏԵԱՆԻ

Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՒՐ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՄՕՐ

Ի ՏԷՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵՊԱՇՏ

ՏԻԿԻՆ ՄԷՐՋԱՆ Գ. Տ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Եթէ մի աղաչաւոր անձը կարող լինի ներկայանալ երկրաւոր թագաւորի առեանը, անչուշտ չատ երկիւղածութեամբ և արժանավայել պատկառանքով կ՚մատուցանէ իւր խնդիրքը նորան, որպէս զի գտնէ իւր ցանկացածը, և իւր խնդրուածքը կատարուի։

Ուրեմն մենք Երկնաւոր Հօր որդիքս, որչափ աւելի պարտական ենք ջերմեռանդ հաւատով, մաքուր ու սուրբ սրտով և խոնարհութեամբ մեր խնդրուածքն աղօթքով մատուցանել մեր Երկնաւոր Հօրը, որ պարգևի մեզ առատապէս մեր ամեն հոգևկան և մարմնական պիտոյքները, «առաւել քան զոր խնդրեմք և իմանամք»։

Եւ թէ ինչ է աղօթքը, և որոնք բարւոք աղօթք անելու պայմանները, ինչ է պաշտամունքն և Աստուածպաշտութեան կանոնները, այս ամենը համառօտ բացատրուած կան աղօթագրքիս սկզբում։

Ս. Եկեղեցւոյ երանաշնորհ Հայրերը պատրաստած են հոգևրուղի Աղօթագիրք, որ կոչւում է «Ժամագիրք» և որ կարգաւորել, բաժանել են ինն դասակարգութեան՝ ընդհանրութեան աղօթից համար։ Այսինքն ժամերգութիւն Գիշերային, Առաւօտեան, Արևագալի, Երրորդ, Վեցերորդ և Ինն-

երորդ ժամերին, Երեկոյեան, Խաղաղական և Հանգստեան ժամերին։ Նաև որոշակի կարգաւորել են խորհրդաւոր և սրտաբուղխ Աղօթքներ և երգեցողութիւններ Ս. Պատարագի արարողութեան համար։

Ուստի ամեն հաւատացեալ ժողովուրդ՝ արք և կանայք, ծերք և աղայք, երիտասարդք և կուսանք, պարտական են միշտ երթալ Ս. Եկեղեցի, ուր բոլորն էլ ինչպէս Երկնաւոր Հօր զաւակներ՝ որպէս մի սիրտ և մի անձն կատարեն հրապարակական Աստուածպաշտութիւնը, մանաւանդ ամեն Կիրակէ և այլ Տէրունական ու Սրբոց մեծ տօներին, և յատկապէս Ս. Պատարագի ժամանակ՝ առանց ուշանալու ներկայ գտնուել ժամերգութեանը, ուր ջերմեռանդ հաւատով աղօթակից լինեն Եկեղեցւոյ հետ, մխիթարուն հոգեպէս և արժանանան մասնակից լինելու Աստուծոյ շնորհաց և օգնութեանը։ Բայց դեռ ժամերգութիւնն ու ահաւոր Ս. Պատարագի խորհուրդը չկատարած, չ՝պէտք է դուրս երթան Սուրբ Եկեղեցուց, որովհեան այդպիսի տգեղ ու անբարի սովորութիւնը յանցանք է և արհամարհանք ընդդէմ Աստուածպաշտութեան, երբ մէկը բոլոր սրտով և ուղիղ հաւատով աղօթակից չլինի համախմբեալ ժողովրդոց հետ Եկեղեցւոյ մէջ մինչև վերջը, նաև ճշմարիտ հոգւով չ՝պաշտէ Աստուծոյն, անպտուղ կը գտնուին նորա աղօթքն ու Աստուածպաշտութիւնը, և միանգամայն զուրկ Աստուծոյ շնորհքներից. ինչպէս ասում է մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը՝ «Զուր պաշտեն զիս» (Մատթ. ԺԵ. 9)։

Արդարև գրաբար լեզուով գրուած լինելով Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ պատուական Ժամագիրքը դժուար հասկանալի է լինում աղօթասէր ժողովրդոց, ուստի աղօթքի միտքն ու զօրութիւնը դիւրըմբռնելի անելու համար, այն աղօթագրքի գլխաւոր մասերը աշխարհաբառի փոխեցինք, որ մի համառօտ և դիւրիմաց աղօթագիրք լինի ամեն բարեպաշտ ժողովրդոց համար, որով կարենան թէ հրապարակական Աստուածպաշտութեան ժամանակ և թէ առանձին՝ իւրեանց աղօթքն ու խնդրուածքը մատուցանել Աստուծոյն։ Իսկ ժամագրքի մնացորդ աղօթքներին և պատշաճի աւուր ձայնաւոր երգեցողութիւններին, պէտք է ժողովուրդն ունկնդրութեամբ ձայնակից լինի և աղօթակից ամեն ժամերգութեանց հետ, որպէս զի արժանի լինի Աստուածային շնորհաց ապրիւրից գտնել բաղում օգնութիւն և յաւիտենական փրկութիւն։

ԱՂՕԹՔԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ.

Աղօթքը նշանակում է խնդրուածք, գոհութիւն և փառաբանութիւն մատուցանել Աստուծուն։ Աղօթքով խնդրում ենք Աստուծոյ շնորհն և ողորմութիւնը, մեղքի թողութեան և հոգւոյ փրկութեան, ոչ միայն մեր անձի համար, այլև մեր ընկերների, մինչ իսկ մեր թշնամեաց համար. «Խնդրեցէք և կը տըրուի ձեզ. հայցեցէք և կը գտնէք. բաղխեցէք և կը բացուի ձեզ». (Մատթ. Է. 7)։ «Արդ աղաչում եմ ամենից առաջ աղօթք անել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամեն մարդկանց համար». (Ա. Տիմ. Բ. 1)։ «Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին, և աղօթք արէք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար». (Մատթ. Ե. 44)

Աղօթքով գոհութիւն ենք մատուցանում մեր Արարչին իւր անբաւ բարերարութեան համար, որ միշտ ունի մեր վերայ. «Ոչինչ հոգս մի անէք, այլ ամեն բանում աղօթքով

աղաչանքով և գոհութիւնով՝ ձեր խնդրուածքները թող յայտնի լինին Աստուծուն». (Փիլ. Դ. 6)։ «Ես քո ողորմութեանն եմ յուսացած Տէր, իմ սիրտը ցնծացաւ քո փրկութիւնովը, օրհնում եմ իմ բարերար Տիրոջդ». (Սղմ. ԺԲ. 6)։

Աղօթքով փառաբանութիւն ենք մատուցանում Աստուծոյն, այսինքն հոգւով և մարմնով պաշտում ենք նորան, որպէս գերագոյն Տէր և Աղբիւր ամենայն բարութեանց. «Տուէք Տիրոջը փառք և պատիւ, տուէք Տիրոջն իւր անուան փառքը». (Սղմ. ԻԸ. 2)։ «Ամեն բարի տուրք, և ամեն կատարեալ պարգև վերևիցն է իջնում լուսոյ Հօրիցը». (Յակ. Ա. 17)։

Թէպէտ ամենաբարին Աստուած իւր Հայրական գթովն ընդհանրապէս խնամք է տանում բոլոր արարածներին, «Որովհետև նա իւր արեգակը ծագում է չարերի և բարիների վրայ, և անձրև է ածում արդարների և մեղաւորների վերայ» (Մատթ. Ե. 45), Սակայն մասնաւորապէս պահանջում է իւր հաւատացեալներից՝ որ իրենց կարօտութիւնները զգալով, անոխակալ ոգով և երկիւղած սրտով աղօթեն. «Եւ որ ժամանակ կանգնէք աղօթք անե-

լու. ներեցէք եթէ մէկի դէմ բան ունենաք, որպէս զի ձեր Հայրն որ երկնքումն է, ձեր յանցանքը թողնի ձեզ». (Մարկ. ԺԱ. 25)։ Բայց Աստուած երբէք չէ լսում մեղաւորների աղօթքը, երբ չկայ անկեղծ զղջում և մաքուր սիրտ «Եւ դուք երբոր ձեր ձեռքերը տարածում էք ես աչքերս ծածկում եմ ձեզանից, նաև երբ աղօթքը շատացնում էք, ես չեմ լսում, որովհետև ձեր ձեռքերը լիքն են արիւնով», (Ես. Ա. 15)։ «Եթէ ես անօրէնութիւն տեսնէի իմ սրտումը, Տէրը չէր լսիլ ինձ». (Սղմ. ԿԵ. 18)։

ԲԱՐԻՈՒ ԱՂՕԹՔ ԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Նախ՝ պէտք է մեր աղօթքը մատուցանենք Աստուծոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովը այնէ՝ անկեղծութեամբ հաւատալով նորան և կատարելով նորա բարձր և սուրբ պատուիրանները, ընդ նմին և պէտք է հայցենք Սուրբ Հոգւոյ օգնութիւն և բարեխօսութիւնը. «Եթէ ինչ որ իմ Հօրիցը խնդրէք իմ անունովս կը տայ ձեզ». (Յովհ. ԺԶ 23)։ «Այսպէս էլ Հոգին օգնում է մեր տկարութիւններին, որով-

հետև թէ ինչ բանի համար պիտի աղօթք անենք, ինչպէս արժան է, չ՚գիտենք. բայց ինքը Հոգին անբարբառ հառաչանքով բարեխօս է լինում». (Հռովմ. Ը. 26)։

Երկրորդ՝ պէտք է մեր աղօթքը մատուցանենք Աստուծոյ, հաւատով, ջերմեռանդութեամբ և մտադրութեամբ. «Ամեն ինչ որ աղօթք անելով խնդրէք, հաւատացէք թէ կառնէք, և կը լինի ձեզ». (Մարկ. ԺԱ. 24)։ «Աղօթք անեմ հոգւով, աղօթք անեմ և մտքով». (Ա. Կոր. ԺԴ. 15)։ Բայց առանց ջերմեռանդութեան և միայն շրթունքներով աղօթք անելն ընդունելի չէ Աստուծոյ՝ «Այս ժողովուրդը շրթունքներով է պատուում ինձ, իսկ նորանց սիրտը ինձանից հեռացած ջոկուած է։ Զուր տեղն են պաշտում ինձ». (Մարկ. Է. 6, 7)։

Երրորդ՝ պէտք է զգուշանալ, որ մեր աղօթքի նպատակը չ՚լինի մարդկանց ցոյց տալը՝ կեղծաւորութեամբ և շատախօսութեամբ. «Եւ երբ որ աղօթք անես, չ՚լինիս ինչպէս կեղծաւորները, որովհետև նորանք սիրում են ժողովարանների մէջ և հրապարակների անկիւններում կանգնած աղօթք

անել, որ մարդկանց երևան. ճշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այն է նորանց վարձքն»... Եւ աղօթք անելու ժամանակ մի եղէք շատախօս ինչպէս հեթանոսները, որովհետև նորանք կարծում են, թէ իրանց շատ խօսելու համար կը լսուին». (Մատթ. Զ. 5, 7)։ Ուրեմն ով որ աղօթքի մէջ միայն իւր սրտի չար բաղձանքներն ու յաժարութիւնները կը խնդրի և ոչ Աստուծոյ հաճելի բաները, նա շատախօս կը համարուի հեթանոսների նման, և նորա աղօթքն անպտուղ կը մնայ. «Խնդրում էք և չէք առնում, որովհետև չար կերպով էք խնդրում». (Յակ. Դ. 3)։ Բայց երբոր արժանապէս կաղօթենք Աստուծոյ կամքի համեմատ, այն ժամանակ նա կը պարգևէ մեզ ամեն հոգևոր և մարմնաւոր բարիքներ. «Սա է այն համարձակութիւնը որ ունենք դէպի նորան, թէ ինչ որ նորա կամքի պէս խնդրում ենք, լսում է մեզ». (Ա. Յովհ. Բ. 14)։ «Արդ՝ եթէ դուք չար լինելով, գիտէք բարի պարգևներ տալ ձեր որդւոցն, որքան աւելի ձեր Հայրն, որ երկնքումն է, բարիքներ կը տայ նորանց, որ խնդրում են իրանից». (Մատթ. Է. 11)։

Չորրորդ՝ թէ երբ և ուր պէտք է աղօթք մատուցանենք Աստուծոյ։ Արդարև մեր փրկիչ Յիսուս Քրիստոսը պատուիրում է մեզ անսահման ժամանակաւ յօժարակամ աղօթք անել. «Պէտք է ամեն ժամանակ աղօթք անեն նորանք՝ և չ'ձանձրանալ». (Ղուկ. ԺԸ. 1), այսինքն Աստուծոյ սուրբ խօսքն ու մեծ պատուիրանները մեր սրտերում միշտ պիտի թագաւորեն և միշտ արթուն պիտի լինենք և պատրաստ հոգւով։

Այլև յատկապէս պէտք է աղօթք անել առաւօտ, ցերեկ, երեկուն և գիշեր. «Ես առ Աստուած կանչեցի, և նա լսեց ինձ երեկուն, առաւօտն և կէսօրին». (Սղմ. ԾԴ. 15)։ «Կէս գիշերին վեր եմ կենում, որ խոստովանուեմ քո առաջ, քո արդար իրաւունքների համար». (Անդ. ՃԾԸ. 62)։ «Եւ բոլոր գիշերն անցրեց (Յիսուս) աղօթք անելով դէպի Աստուած». (Ղուկ. Զ. 12)։

Որովհետև ամեն տեղ է Աստուած, վասն որոյ և ամեն տեղ կարող ենք աղօթք անել դէպի նա. «Արդ կամենում եմ որ մարդիկ ամեն տեղ աղօթք անեն, սուրբ ձեռքերը վեր

բարձրացնեն առանց բարկութեան և երկմտութեան». (Ա. Տիմ. Բ. 8)։ «Վեր ելաւ (Յիսուս) սարը, առանձին աղօթք անելու» (Մատթ. ԺԴ. 23)։ Նաև առտնին առանձին պէտք է աղօթել առ Աստուած. «Բայց դու երբ որ աղօթք անես, մտիր քո սենեակը, և դուռդ փակած աղօթք արա ծածուկ դէպի քո Հայրը, և քո Հայրն՝ որ ծածուկ տեսնում է, յայտնապէս կը հատուցանէ քեզ». (Մատթ Զ. 6)։ Սա վերաբերում է թէ առանձին աղօթելու և թէ սրտի մաքրութեանը։

Աստուած ընտրած է նաև սուրբ տեղ—Եկեղեցին, ուր հաւատացեալները համախմբուելով միաբան և միասիրտ իւրեանց աղօթքի պաշտօնը հրապարակաւ նուիրեն Աստուծոյ, որի համար Եկեղեցին կոչւում է Տուն Աստուծոյ և տուն աղօթից. «Իմ տունը աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերի համար». (Ես. ԾԶ. 7։ Մատթ. ԻԱ. 13)։ «Բայց ես քո առատ ողորմութեամբը կը մտնեմ քո տունը, և դէպի քո սուրբ տաճարն երկրպագութիւն կանեմ քո երկիւղովը». (Սղմ. Ե. 7)։

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.

Քրիստոնէական ճշմարիտ կրօնն սովորեցնում է մեզ թէ ինչպէս ճանաչենք Աստուծուն և պաշտենք նորան. իսկ պաշտամունքն մեր Աստուածպաշտութեան ներքին և արտաքին եղանակն է, որ Եկեղեցական արարողութեամբ և ծէսերով կատարում ենք Աստուծոյ անուան փառաց համար, ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը հաստատեց մեզանում թէ ներքին սրբութեան պաշտօն, և թէ արտաքին երկրպագութեան պաշտօն, որպէս զի սրտով միանանք Աստուծոյ հետ և հոգւով պաշտենք նորան ճշմարիտ երկրպագութեամբ. «Աստուած հոգի է, և նորան երկրպագողները պէտք է հոգւով և ճշմարտութիւնով երկրպագեն». (Յովհ. Դ. 24):

Ճշմարիտ Աստուածպաշտութեան պատուիրանները երկու են. մէկը՝ ներքին, հոգւոյ և սրտի բարեպաշտական զգացմունքը, և երկրորդն՝ արտաքին բարեպաշտութիւնը—բանաւոր Աստուածպաշտութիւն, որ կը կատարուի ծէսերով և արարողութեամբ: Այս պատճառով

35903

եթէ չլինի ներքին սրբութեան պաշտօնը, թերի կը համարուի արտաքին բարեպաշտութիւնը. «Այս ժողովուրդ շրթունքներով է պատուում ինձ. իսկ նորանց սիրտն ինձանից հեռացած ջոկուած է». (Մարկ. Է. 6): Այնպէս էլ անկատար կը համարուի ներքին Աստուածպաշտութիւնը առանց արտաքին պաշտամունքի, որովհետև այնպէս միաւորուած է մեր հոգին մեր մարմնի հետ, որ անկարելի է մեր հոգւոյ և սրտի զգացմունքն արտայայտել առանց մարմնի զգայութեանցը: Արդ ճշմարիտ և կատարեալ Աստուածպաշտութիւնը այն է՝ որ հաւատով դաւանենք Աստուծոյն, բոլոր սրտով հնազանդենք նորա սուրբ կամացն և օրէնքներին. ջերմեռանդ հոգւով երկրպագութիւն տանք նորան, Եկեղեցւոյ սուրբ խորհուրդների ծէսերով և արարողութեամբ պաշտենք նորան, և հոգևոր երգերով փառաւորենք նորա սուրբ անունը, ահա այս իսկ է հոգւոյ և մարմնի կրօնը. «Որովհետև գնով գնուեցիք, ուստի փառաւորեցէք զԱստուած ձեր մարմնի և ձեր հոգւոյ մէջ». (Ա. Կոր. Զ. 20): «Քանզի

ՀԱՅԱՍՏԱՆ

սրտով հաւատում էք արդարանալու համար, և բերանով դաւանում էք փրկուելու համար». (Հռովմ. Ժ. 10)։

Արդ որովհետև Աստուածային պաշտամունքներն և Եկեղեցական արարողութիւններն և ծէսերը աղօթքով ենք կատարում, ուրեմն պարտական են թէ հոգևոր պաշտօնեաներն և թէ համախմբուած ժողովուրդները ժամերգութեան ժամանակը հոգւոյ ջերմեռանդութիւնով և մարմնի երկրպագութիւնով աղօթել դէպի Աստուած։ Ահա այս է Աստուածպաշտութեան արտաքին կանոնը— գլուխ խոնարհեցնելով խաչակնքել երեսի վերայ, որ Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ դաւանութիւնն է. նաև ծնրադրութեամբ, կամ երես անկեալ, կամ ոտքի վրայ կանգնած և կամ բազկատարած աղօթել. «Որ ինձ պիտի կրկնուի ամենայն ծունր և խոստովանուի ամենայն լեզու Աստուծոյն». (Ես. ԽԷ. 26։ Հռովմ. ԺԴ. 11)։ «Իւր երեսի վերայ ընկաւ ծունր դրաւ (Յիսուս) աղօթք էր անում». (Մատթ. ԻԶ. 39։ Ղուկ. ԻԲ. 41)։ «Որ Յիսուս Քրիստոսի անունով կրկնուի ամեն ծունկ. երկնաւորների և երկրաւորների և սանդարամետաներների». (Փիլ. Բ. 10)։ «Աղաղակեցի դէպի Տէրը ամեն օր, և բարձրացրի իմ ձեռքերը դէպի քեզ». (Սղմ. ՁԷ. 10)։

ԱՂՕԹՔ.

Սուրբ Եկեղեցի մտնելու ժամանակ

Սաղմոս ՂԹ.

Աղաղակեցէք դէպի Տէրը ամեն երկիր, ծառայեցէք Տիրոջն ուրախութիւնով։

Մտէք նորա առաջն ցնծութիւնով, ճանաչեցէք, որ նա է մեր Տէր Աստուածը։

Նա ստեղծեց մեզ, և ոչ թէ մենք էինք, մենք նորա ժողովուրդ և նորա արօտի ոչխարները։

Խոստովանեցէք Տիրոջը, և օրհնեցէք նորա անունը։

Քաղցր է Տէրն, յաւիտեան է նորա ողորմութիւնը, և ազգից մինչև ազգ է նորա ճշմարտութիւնը։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ.

Աղաչում ենք Ամենակալ Աստուծոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը, որ արժանի արեց

մեզ կալ այս փառաբանութեան տեղումը, և հոգևոր երգեր երգել։ Ամենակալ Տէր Աստուած մեր ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Տաճարիս մէջ և Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշաններիս և սուրբ Սեղանիս առաջ խոնարհած երկիւղով երկրպագութիւն ենք տալիս քեզ, ո՛վ Տէր. և քո սուրբ և հրաշալի և յաղթող Տէրութիւնդ փառաւորում ենք. և օրհնութիւն և փառք ենք մատուցանում քեզ՝ Հօր և Սուրբ Հոգւոյդ հետ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ա.ՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԻՆ

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։

Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո անունդ, գայ քո Թագաւորութիւնդ. քո կամքդ թող կատարուի. ինչպէս որ երկնքումը՝ այնպէս էլ երկրիս վերայ։ Մեր ամեն օրուայ հացը՝ տո՛ւր մեզ այսօր. և թող մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք թողնում ենք մեր պարտականներին։ Եւ մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ փրկիր մեզ չարիցը։ Որովհետև քոնն է արքայութիւնը և զօրութիւնը և փառք յաւիտեանս. ամէն։

Ո՞վ Տէր եթէ իմ շրթունքս բանաս, իմ բերանը կ՚երգէ քո օրհնութիւնները. (կրկնիր)։

Օրհնուած (է) համագոյ և միասնական անբաժանելի սուրբ Երրորդութիւնն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս Գ.

Ո՞վ Տէր, ինչպէս շատացան ինձ նեղութիւն տուողները, և շատերը վեր կացան ինձ վերայ։

Շատ մարդիկ ասում էին իմ անձիս համար, թէ սորան համար փրկութեան յոյս չ՚կայ Աստուծոյ մօտ։

Բայց ո՛վ Տէր, դու ես իմ օգնականն, իմ փառքը և իմ գլխոյ բարձրացնողը։

Իմ ձայնովն կարդացի ես (աղաղակեցի) դէպի Տէր և նա լսեց ինձ իւր սուրբ լեռնից։

Ես ննջեցի և քնեցի, և զարթնեցի և Տէրը եղաւ ինձ ընդունող։

Ես չեմ վախիլ նորանց բիւրաւոր զօրքերից, որ իմ շուրջս պատած պաշարուած պահում էին ինձ։

Ե՛կ ո՛վ Տէր, և փրկիր ինձ, ո՛վ Աստուած, որովհետև դու պատժեցիր բոլորին, որոնք զուր տեղ թշնամութիւն ունէին ինձ հետ. և մեղաւորների ատամները փշրում ես։

Տիրոջդ է փրկութիւնը. և քո օրհնութիւնը քո ժողովրդի վրայ։

(Սղմ. ԶԷ.) Ո՛վ Տէր իմ փրկութեան Աստուած, ես ցերեկ և գիշեր աղաղակեցի քո առաջը։

Թո՛ղ մտնեն իմ աղօթքները քո առաջը Տէր. թո՛ղ խոնարհի քո ականջը իմ խնդրուածներին։

Որովհետև իմ անձը լցուեց չարչարանքով, և իմ կեանքը մօտեցաւ դժոխքին. և համարուեցայ ես նորանց հետ, որ իջնում են գբի (խորի) մէջ։

Ես եղայ ինչպէս մի մարդ, որ օգնական չունի մեռածների մէջ ազատ։

Ինչպէս վիրաւորուած մարդիկ, որոնք գերեզմանների մէջ ննջում են։

Նորանց դու չ՛յիշեցիր, նորանք քո ձեռքից մերժուեցան։

Դրին ինձ խոր գբի մէջ, մութ տեղ ու մահուան շուաքումը։

Ինձ վերայ հաստատուեցաւ քո սրտմտութիւնը (բարկութիւնը) և քո ամեն զայրացմունքը ինձ վերայ թափեցիր։

Հեռացրիր ինձանից իմ ծանօթներս, և ինձ ծաղրալի արին իրենց համար։

Մատնուեցայ և չէի դուրս գալիս, աղքատութիւնից (կարօտութիւնից) իմ աչքերը

տկարացան։

Աղաղակեցի դէպի Տէր ամեն օր, և իմ ձեռքերս բարձրացրի դէպի քեզ։

Մի՞թէ քո սքանչելիքդ մեռածների համար կանես, կամ բժիշկները կը կենդանացնեն նոցա, որ քեզ Աստուած խոստովանեն։

Մի՞թէ մէկը երբէք կը պատմէ քո ողորմութիւնները գերեզմանի մէջ, կամ քո ճըշմարտութիւնդ կորստեան մէջ։

Մի՞թէ քո սքանչելիքդ խաւարի մէջ կը ճանաչուի, կամ թէ քո արդարութիւնը մոռացութեան երկրումը։

Ես դէպի քեզ աղաղակեցի Տէր, որ իմ առաւօտուայ աղօթքը հասնեն քեզ։

Տէր, ի՞նչու ես իմ անձը քեզանից հեռացնում, կամ քո երեսը դարձնում ինձանից։

Ես իմ մանկութիւնից աղքատ և վաստակաւոր եղայ. իմ բարձրութիւնից խոնարհեցայ և ափշեցայ (շուարեցի)։

Քո բարկութիւնդ ինձ վերայ հաստատուեց. և քո ահ ու դողդ ինձ վախեցրեց։

Ջրի նման իմ չորս կողմը պատեցին. և բոլոր օրն միատեղ ինձ պաշարեցին։

Հեռացրիր ինձանից իմ բարեկամներն և իմ ծանօթները, իմ թշուառութեան համար։ (Սղմ. ՃԲ.) Օրհնիր Տիրոջը ով իմ անձը, և իմ բոլոր ոսկորներս օրհնեցէք նորա սուրբ անունը։

Օրհնիր Տիրոջը ով իմ անձը, և մի մոռանար նորա բոլոր բարիքները։

Որ քաւում է (ջնջում է) քո մեղքերը. և բժշկում է քո բոլոր հիւանդութիւնները։

Որ փրկում է քո կեանքը ապականութիւնից, և պսակում է քեզ ողորմութեամբ և գթութեամբ։

Որ լցնում է քո իղձդ բարութեամբ. և արծուի պէս կը նորոգուի քո մանկութիւնը։

Ողորմութիւն է անում Տէրը. և իրաւունք (դատաստան) բոլոր զրկուածներին։

Ցոյց տուեց Մովսէսին իւր ճանապարհները. և Իսրայէլի որդւոցն՝ իւր կամքը։

Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ (համբերող) և բազումողորմ։

Իսպառ չի բարկանայ մեզ վերայ Տէրը. և մինչ յաւիտեան ոխ (քէն) չի պահիլ։

Տէրը չարեց մեզ մեր մեղքերի համեմատ. և ոչ մեր անօրէնութեան համեմատ հատուցումն արեց մեզ։

Բայց որքան բարձր են երկինքը երկրից. այնպէս զօրացրեց Տէրը իր ողորմութիւնը իւր երկիւղածների վերայ։

Որչափ հեռի են արևելքը արևմուտքից. այնպէս հեռացրեց մեզանից մեր անօրէնութիւնները (մեղքը)։

Ինչպէս որ հայրը կը գթայ իւր որդւոց վերայ, այնպէս գթութիւն կանի Տէրը իւր երկիւղածներին։

Որովհետև իմացաւ նա մեր ստեղծուած բնութիւնը և յիշեց թէ հող ենք։

Մարդոյս կենաց օրերը խոտի նման են. և ինչպէս վայրենի ծաղիկ այնպէս ծաղկում է։

Շնչում է նորա վերայ հողմը (քամին) և նա էլ չկայ, նորա բուսած տեղը այլևս չի երևում։

Բայց Աստուծոյ ողորմութիւնը մնում է յաւիտեանս յաւիտենից իւր երկիւղածների վերայ, և նորա արդարութիւնը որդւոց որդիների վերայ։

Որոնք պահում են նորա ուխտն (դաշինքը), յիշում են և կատարում են նորա պատուիրանքները։

Տէրը պատրաստեց իւր աթոռը երկնքումը, և նորա թագաւորութիւնը տիրում է բոլորին։

Օրհնեցէք Տիրոջը, նորա բոլոր զօրաւոր կարողութեամբ հրեշտակներ, որ լսելով նորա պատգամաց ձայնը. կատարում էք նորա խօսքերը։

Օրհնեցէք Տիրոջը, նորա բոլոր զօրութիւններ, պաշտօնեայք և նորա կամքի կատարողներ։

Օրհնեցէք Տիրոջը, նորա բոլոր ստեղծած գործքեր, որ ամեն տեղերում է նորա Տէրութիւնը. օրհնիր Տիրոջը և դու ո՛վ իմ անձը։ (Սղմ. ՃԽԲ). Ո՛վ Տէր, լսիր իմ աղօթքը, քո ճշմարտութիւնովը ականջ դիր իմ խնդրուածքներին։

Լսիր ինձ քո արդարութեամբ, և քո ծառայի հետ մի մտաներ դատաստանի, որովհետև չի կարող ոչ մէկ կենդանի մարդ արդարանալ քո առաջին։

Հալածեց թշնամին իմ անձը, խոնարհեցրեց իմ կեանքը երկրի վերայ, և նստեցրեց ինձ խաւարի մէջ ինչպէս յաւիտենական մեռածները։

Ձանձրացաւ (զզուեցաւ) ինձանում իմ հոգին, և իմ սիրտը իմ մէջ շփոթուեց։

Յիշեցի առաջին օրերը, խորհեցի քո ամեն գործքերդ, խորհեցի քո ձեռքի արարչագործութիւնները, և իմ ձեռքերը բարձրացրի դէպի քեզ։

Իմ անձը երկրի պէս ծարաւ է քեզ, շուտ լսիր ինձ Տէր, որովհետև նուաղեց ինձանից իմ հոգին։

Մի դարձնիր քո երեսը ինձանից, կը նմանուիմ ես նրանց, որք իջնում են գրի (խորի) մէջ։

Լսել տուր ինձ քո ողորմութիւնը առաւօտը, որովհետև ես քեզ եմ յուսացել Տէր։

Ինձ ցոյց տուր քո ճանապարհը, որ պիտի գնամ նորանում, որովհետև իմ անձը դէպի քեզ Տէր ուղղեցի։

Փրկիր ինձ Տէր իմ թշնամեաց ձեռքից, քանզի ես քեզ ինձ ապաւէն (յոյս) արի։

Սովրեցու ինձ քո կամքը կատարել, որովհետև դու իմ Աստուածն ես։

Քո բարի հոգին թող առաջնորդէ ինձ դէպի ուղիղ երկիրն կենդանեաց։

Քո անուան համար, ով Տէր, կ՚ապրեցնես ինձ, քո արդարութեամբը կը հանես իմ անձը նեղութիւնից։

Քո ողորմութեամբը սատկեցրու իմ թշնամիներին, և կորցրու իմ անձի բոլոր նեղիչներին, որովհետև ես քո ծառան եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՔԱՐՈԶ

Տ. Յովհան Մանդակունի Հայրապետին.

Մենք ամենքս որ զարթնեցինք քնի հանգստութիւնից, որ շնորհեց մեզ մարդասէրն Աստուած՝ մեր տկարութիւնը մխիթարելու և սփոփելու համար։ Մենք որ եկած ենք միաբանութեամբ և հոգևոր երգով փառաբանել ու պատուել մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի Ամենասուրբ Անունն, թող ահով և դողով աղօթքի կենամք նորա առաջին։ Եւ գոհանամք նրա առաջին այս գիշերային ժամիս մէջ՝ նորա իրաւանց և արդարութեան համար։ Որ ընտրեց մեզ իւր ողորմութեամբը, և շնորհեց մեզ երկնային հրեշտակների նմանութիւն ունենանք. մենք ևս փառաբանող լինելով մեր ամենիս Տէրն եղող Աստուծոյն։

Ուրեմն այսուհետև սրբելով մեր անձերը խղճի խայթերից, և չար գործերից, ձեռքներս բարձրացնենք սրբութեամբ, առանց բարկութեան և թերահաւատութեան։ Հաւատով խնդրենք նրանից թողութիւն ու քաւութիւն մեր յանցանաց համար։ Խոստովանենք մեր սրտերի գաղտնիքը Աստուծոյ առաջ, որ ամեն ծածուկները գիտէ, որպէս զի ընդունելով մեր աղաչանքն ամեն սրբոց բարեխօսութեամբն ու աղօթքով, շնորհէ մեզ մարդասէրն Աստուած առաքինութեամբ և անարատ վարքով ապրիլ այս աշխարհիս մէջ իւր կամքին համեմատ. և արժանի լինել յաւիտենական ու երկնային խորաններին (արքայու-

թեան), որ խոստացաւ իւր սիրելիներին Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածը, ով Տէր, կեցո՛ (ապրեցու) և ողորմիր։ Կեցո՛ Տէր։

Գիշերիս մնացած ժամանակը խաղաղութեամբ անցուցանելու համար հաւատով Տիրոջից խնդրենք։ Շնորհիր Տէր։

Խաղաղութեան հրեշտակը՝ մեր անձերին պահապան խնդրենք Տիրոջից։ Շնորհիր Տէր։

Մեր մեղքերուն քաւութիւն և թողութիւն խնդրենք Տիրոջից։ Շնորհիր Տէր։

Սուրբ խաչին մեծ և կարող զօրութիւնը՝ մեր անձերուն օգնական խնդրենք Տիրոջից։ Շնորհիր Տէր։

Եւ ամենքս միաբան՝ մեր ճշմարիտ ու սուրբ հաւատքի համար աղաչենք Տիրոջը։— Տէր ողորմիր։

Մեր անձերը և միմեանց Ամենակալ Տէր Աստուածոյն յանձնենք։— Քեզ կը յանձնուինք ով Տէր։

Ողորմիր մեզ, մեր Տէր Աստուած, քո մեծ ողորմութեանդ համեմատ. ամենքս միաբանութեամբ ասենք։

Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Տ. Յովհան Մանդակունի Հայրապետին

Գոհանում ենք քեզանից ով մեր Տէր Աստուած, որ խաղաղութեամբ հանգիստ քուն շնորհեցիր մեզ, և զարթնեցնելով հասցրիր մեզ կանուխ գալ, և երկրպագութիւն տալ քո ահաւոր և փառաւորեալ սուրբը Անուանդ։ Տո՛ւր մեզ Տէր, աղաչում ենք քեզ այս գիշերուայ մնացած ժամերը խաղաղութեամբ անցնել. և մեր պանդխտութեան այս կեանքին բոլոր ժամանակին մէջ քո երկիւղովդ ամրացրու և պահիր մեզ։ Որպէս զի զգուշութեամբ և անարատ վարքով՝ մեր կրօնքին համեմատ ապրելով այս աշխարհիս մէջ, ժամանենք (հասնենք) քո յաւիտենական կեանքիդ՝ ապահով և խաղաղ նաւահանգիստը։ Շնորհիւ և մարդասիրութեամբ մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի, որի հետ քեզ՝ Հօրդ և սուրբը Հոգւոյդ վայելում է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Նայեր, ով բարերար Տէր, քո ողորմութեամբդ՝ քո սուրբ Անուանդ երկրպագողներիս ու փառաբանողներիս վերայ։ Տէր զօրութեանց, խաղաղացրու մեր անձերը ամեն սատանայական խռովութիւնից և աշխարհային զբօսանքից։ Քո խաղաղութեան հրեշտակդ ուղարկիր մեզ, որ գայ և անխռով պահի մեզ գիշեր ու ցերեկ, մեր զարթուն և քուն եղած ժամանակ։ Որպէս զի բարեպաշտութեամբ և արժանաւոր կերպով քո Տէրութեանդ ծառայելով այս կեանքիս մէջ, հասնենք քո երկնային յաւիտենական արքայութեանդ, որ աշխարհիս սկզբից քո սուրբերիդ համար պատրաստած ես։ Եւ մենք նորանց հետ գոհանալով փառաւորենք Հայրը, Որդին և սուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ծան. Տէրունական տօներին ձայնով երգում են Ցիշեսցուք երգն իւր քարոզովն. և Առաւօտ լուսոյ երգը. Աղօթք, Կանոնագլուխ. Հանդատեան շարական. և Սաղմոսք ըստ ութ ձայնից,

ապա կարդում են Ս. Աւետարան ըստ ձայնի և ըստ պատչաճի աւուրն։ Ապա Աստուածանեղ երգը. եթէ խաչի տօն լինի, Այսօր անճառ երգը. Մաղթանք՝ Հոգւոց. և Հայր մեր։ Ապա երգում են Օրհնութեան շարական, և ասում են Մաղթանքներ, Քարոզներ, Աղօթքներ և Ալէլուք ըստ պատչաճի և ըստ ձայնի աւուրն։

Իսկ եթէ Սրբոց տօն լինի կամ Պահոց օր, ձայնով երգում են Աշխարհ ամենայն երգը. յետոյ ասում են Աղօթքը. և երգում են Օրհնութեան շարական, նաև ասում են Մաղթանքներ, Քարոզներ, Աղօթքներ, և Թագաւորք ըստ պատչաճի և ըստ ձայնի աւուրն։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԸՌԱՒՕՏՈՒԱՅ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:
Մեր Հայը, որ երկնքումն ես:

Սաղմոս ԶԹ. 13:

Լցուեցինք ով Տէր, քո առաւօտեան ողորմութեամբդ. ցնծացանք և ուրախացանք մեր կենաց բոլոր օրերումը:

Ուրախացանք փոխանակ այն օրերին, որ մեզ խոնարհեցրիր, և փոխանակ այն տարիներին, որ չարչարանք տեսանք:

Նայիր Տէր քո ծառայներիդ և քո ձեռաց ստեղծուածների վերայ. և առաջնորդիր նոցանց որդւոցն, և մեր Տէր Աստուծոյ լոյսը լինի մեր վերայ:

Մեր ձեռաց գործքն ուղղիր դէպի մեզ Տէր, և մեր ձեռաց գործքն յաջողիր մեզ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Փոխ.

Օրհնութիւն Երեք Մանկանցն
(Դանիէլ Գլ. Գ. համար 26—88):

Օրհնուած ես մեր հայրերի Տէր Աստուած, օրհնուած և փառաւորուած (է) քո անունը յաւիտեան:

Իրաւունքով անցուցիր այս ամեն բաները մեզ հետ, դու արդար ես Տէր, և քո բոլոր գործքդ ճշմարիտ են:

Քո ճանապարհներն ուղիղ են, և քո բոլոր դատաստաններն արդար են:

Արդարութեան դատաստան ածեցիր մեզ վերայ, ըստ ամենայնի՝ ինչ որ ածեցիր մեզ վերայ, և մեր հայրերի Երուսաղէմ սուրբ քաղաքի վերայ:

Արդարութեամբ և իրաւացի ածեցիր այս բոլորը մեզ վերայ. մեր մեղաց համար:

Անօրինեցանք և մեղանչելով ապստամբուեցինք քեզանից. ամեն մասամբ մեղանչեցինք և քո պատուիրաններին մենք չ'հնազանդեցինք:

Չ'պահեցինք և չկատարեցինք ինչպէս որ դու

պատուիրեցիր մեզ, որպէս զի մենք բարիք գտնենք քեզանից։

Արդ բոլոր բաներն որ արիր, և ինչ որ ածեցիր մեզ վերայ, արդար դատաստանով արիր։

Մատնեցիր մեզ մեր անօրէն՝ խստասիրտ և ապստամբ թշնամեաց ձեռքը։

Մատնեցիր մեզ անօրէն և քան բոլոր երկրի չար թագաւորի ձեռքը։

Եւ արդ չ՚կայ բերան բանալու ժամանակ մեզ համար, որովհետև ամօթալի և նախատինք եղանք քո ծառայից և պաշտօնէից մօտ։

Բայց մի՛ մատներ մեզ բոլորովին քո անուանդ համար, մի՛ ցրուեր քո ուխտն, և քո ողորմութիւնդ մի՛ հեռացներ մեզանից։

Քո սիրելի Աբրահամու, քո ծառայ Իսահակայ, և քո սուրբ Իսրայէլի համար։

Խոստացար նորանց և ասացիր, կը շատացնեմ ձեր զաւակն բազմութեամբ երկնքի աստղերի պէս, և ծովափի աւազի պէս։

Եւ արդ, ո՛վ Տէր, նուազեցինք մենք քանթէ բոլոր ազգերը, և այսօր տառապեալ (թշուառ) եղանք երկրի վերայ՝ մեր մեղքի համար։

Այս ժամանակում չ՚կայ իշխան, մարգարէ

և առաջնորդ. ոչ պատարագաց զոհ, ոչ օրինաց խունկեր, և ոչ տեղ պատարագ մատուցանելու քո առաջին, և գտնելու քեզանից ողորմութիւն։

Բայց խոնարհած անձերով և թշուառացած հոգւով ընդունելի կը լինենք մենք, ինչպէս ոչխարների և եզների, և բիւրաւոր պարարտ գառների ողջակէզներ։

Այնպէս ընդունելի կը լինեն այսօր մեր պատարագները քո առաջին, որպէս զի կատարեալ հետևող գտնուենք քեզ. քանզի չ՚լինի ամօթ քեզ յուսացողներին։

Եւ արդ՝ մեր բոլոր սրտերովը հետևող կը լինենք քեզ. կը վախենանք քեզանից. և կը խնդրենք քո երեսն, ո՛վ Տէր, մի՛ ամաչցներ մեզ։

Բայց արա դէպի մեզ, քո հեզութեան և քո շատ ողորմութեան համեմատ. փրկիր մեզ Տէր՝ քո զարմանալի գործոց համեմատ. և քո անունը կը փառաւորուի յաւիտեան։

Թո՛ղ ամաչեն բոլոր մարդիկ, որ չարչարում են քո ծառաներին, ամօթալի կը լինեն նորանց բռնութիւնները (ուժգնութիւնները), և

նորանց բոլոր զօրութիւնները կըխորտակուին։

Եւ կը ճանաչեն, որ միայն դու ես Տէր Աստուած, որ փառաւորուած ես բոլոր տիեզերաց վերայ, (15)։

(52) Օրհնուած ես դու, մեր հայրերի Տէր Աստուած, գովուած և աւելի բարձր ես յաւիտեան։

Եւ օրհնուած է քո սուրբ փառաց անունը, գովուած և աւելի բարձր ես յաւիտեան։

Օրհնուած ես քո սրբութեան փառաց տաճարի մէջ, գովուած և աւելի բարձր ես յաւ։

Օրհնուած ես քո թագաւորութեան աթոռի վերայ, գովուած և աւելի բարձր ես յաւ։

Օրհնուած ես, որ նստում ես քրովբէից վերայ և նայում ես անդունդին, գովուած և աւելի բարձր ես յաւիտեան։

Օրհնուած ես երկնքի հաստատութեան վերայ, գովուած և աւելի բարձր ես յաւիտեան։

Օրհնեցէք Տիրոջն՝ Տիրոջ ամեն գործքեր, օրհնեցէք և բարձրացրէք (փառաւորէք) նորան յաւիտեան։

Օրհնեցէք երկինք Տիրոջն, օրհնեցէք և բարձրացրէք նորան յաւիտեան։

Օրհնեցէք Տիրոջն, Տիրոջ հրեշտակներ, և երկնքի վերայ ջրեր, օրհնեցէք և։

Օրհնեցէք Տիրոջն, Տիրոջ զօրութիւններ, արեգակն և լուսին, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, երկնքի աստղեր, անձրևներ և ցօղեր, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, բոլոր հողմեր, հուր և ջեր (տաքութիւն), օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, սառն և պարզ, եղեամն (ցօղ) և ձիւն, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, ցերեկ և գիշեր, լոյս և խաւար, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, ամպեր և փայլատակունք (կայծակ) և երկիր, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, լեռներ և բլուրներ և երկրի բոլոր բոյսեր, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, աղբիւրներ և ծովեր և գետեր, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, կէտեր (մեծամեծ ձկներ) և ջրերի մէջի կայտառք (շարժուն կենդանիք), և երկնքի թռչուններ, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, գազաններ և անասուններ և մարդկանց որդիք, օրհն։

Կ'օրհնէ Իսրայէլ Տիրոջն, կ'օրհնէ և կը բարձրացնէ նորան յաւիտեան։

Օրհնեցէք քահանաներ Տիրոջն, օրհն։

Օրհնեցէք Տիրոջ ծառաներ Տիրոջն, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, արդարների անձեր և կենդանի շունչեր, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, սուրբեր և սրտով խոնարհներ, օրհն։

Օրհնեցէք Տիրոջն, Անանիա, Ազարիա և Միսայէլ, օրհն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտ։

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնեցէք բոլոր արարածներ՝ արարածների Ստեղծողին, տէրերի Տիրոջը, թագաւորների Թագաւորին, աստուածների Աստուծոյն։ Օրհնեցէք, գովեցէք, բարեբանեցէք, որովհետև քաղցր է, որովհետև յաւիտեան է նորա ողորմութիւնը։

Այստեղ երգում են հարցի, մեծացուսցէի, ողորմեայի և տէր երկնիցի շարականները, և ասում են նորանց մաղթանք, քարոզ և աղօթքը։

Օրհնութիւն Առաւօտուայ

Որ հրեշտակներն են ասել՝ Յիսուս Քրիստոսի ծննդեան պիտերը. (տես Ղուկ. Բ. 14)։ Այլև Կոստանդնուպօլսի սրբոյ Յովհաննէս Ոսկեբերանի հայրապետաքը։

Փառք Աստուծոյ երկնքումը, և երկրի վերայ խաղաղութիւն, մարդկանց մէջ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ երկնքումը. ո՛վ օրհնուած մեր Տէր Աստուած, օրհնում ենք քեզ, և գովում ենք քեզ. խոստովանում ենք քեզ Տէր, և երկրպագում ենք քեզ, փառաւորում ենք քեզ, գոհանում ենք քեզանից Տէր, քո մեծ փառքի համար։ Ո՛վ Տէր թագաւոր երկնային սուրբդ, Աստուած և ամենակալ Հայր։ Ո՛վ Տէր և միածին սուրբ Որդի Հօր Յիսուս Քրիստոս։ Տէր Աստուած Աստուծոյ գառն և Հօր Որդի, որ առար մերը (բնութիւնը) կուսից։ Ողորմեցիր, վերցրիր աշխարհի մեղքերն, և արդ ընդունիր մեր աղաչանքը, Սուրբդ որ նստած ես Հօր աջ կողմը՝ ողորմիր մեզ։ Որովհետև դու ես միայն սուրբ՝ դու ես միայն բարձրեալ. դու ես միայն մեր Տէր Յիսուս Քրիստոս։ Դու ես Տէր և սուրբ

Հոգիդ Աստուած, որ մէկ փառքի մէջ ես Հօր հետ. ամէն։

Եւ ամեն ժամ օրհնում ենք քեզ, ո՛վ Տէր, և գովում ենք քո սուրբ անունը յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա, ո՛վ Տէր, այս օրս խաղաղութեամբ, և առանց մեղաց պահիր մեզ։ Օրհնուած ես մեր հայրերի Տէր Աստուած, գովուած և փառաւորուած է քո սուրբ անունը յաւիտեանս, ամէն։ Օրհնուած Տէր՝ սովորեցրու ինձ քո արդարութիւնները. (երեք անգամ կրկնել)։ Ո՛վ Տէր՝ մեր ապաւէն (յոյս) եղար ազգից յազգ։ Ես աղաչում եմ Տէր, ողորմիր ինձ և բժշկիր իմ անձը, ես մեղանչեցի քեզ։ Ո՛վ Տէր, ցոյց տուր մեզ քո ողորմութիւնները և քո փրկութիւնը տուր մեզ։ Ո՛վ Տէր, քո ողորմութիւնը յաւիտեան, մի՛ անտես աներ քո ձեռաց գործերը։ Ո՛վ Տէր իմ, քեզ ինձ ապաւէն արի. սովորեցրու ինձ կատարել քո կամքը, զի դու ես իմ Աստուածը։ Քեզանից է Տէր՝ կենաց աղբիւր, և քո երեսաց լուսով տեսնում ենք լոյսը։ Ծագիր (երևեցրու) Տէր քո ողորմութիւնը, որոնք ճանաչում են քեզ։

ՄԱՂԹԱՆՔ.

Փառք, պատիւ և երկրպագութիւն երկընքումը Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԿԻՐԱԿԷԻ ՔԱՐՈԶ.

Ամենքս միաբանութեամբ ասենք, Տէր ողորմիր։

Ամենայն աշխարհի խաղաղութեան և սուրբ Եկեղեցւոյ հաստատութեան համար՝ Տիրոջն աղաչենք։

Ամեն սուրբ և ուղղափառ Եպիսկոպոսների համար՝ Տիրոջն աղաչենք։

Մեր (այս անուն) Հայրապետին կենաց, և նորա հոգւոյ փրկութեան համար՝ Տիրոջն աղաչենք։

Վարդապետների, քահանաների, սարկաւագների, դպիրների, և Եկեղեցւոյ բոլոր ուխտի մանկանց համար՝ Տիրոջն աղաչենք։

Բարեպաշտ թագաւորների, և Աստուածասէր իշխանների, զօրապետների և նորանց զօրքերի համար՝ Տիրոջն աղաչենք։

Որպէս զի ամենակալ Տէրը՝ նորանց առա-

ջին Հնազանդեցնի թշնամեաց ամեն պատերազմները՝ Տիրոջն աղաչենք։

Մեր հայրերի և եղբայրների համար, որ գերութեան ու չարաչար ծառայութեան մէջ են, Տիրոջն աղաչենք։

Ճանապարհորդների և նաւով գնացողների համար, որ խաղաղութեամբ բարի նաւահանգիստը հասնեն, Տիրոջն աղաչենք։

Հիւանդների և ամեն վշտացեալների համար՝ որ շուտով առողջութիւն գտնեն, Տիրոջն աղաչենք։

Օդերի բարեխառն լինելու, և քաղցր անձրևների, և պտուղների առատութեան համար, Տիրոջն խնդրենք։

Աստուծոյ սուրբ Եկեղեցին ուխտի եկողների, և ընծայ բերողների համար, Տիրոջն աղաչենք։

Նաև նորանց համար՝ որ անօրէնների ձեռք մատնուած են Քրիստոսի անուան համար, Տիրոջն աղաչենք։

Հանգուցեալ հոգւոց համար, որ ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, Տիրոջն աղաչենք։

Մեր Տէր Աստուածը մեզ փրկելու համար երևելի և աներևոյթ թշնամուցը, Տիրոջն աղաչենք։

ՄԱՂԹԱՆՔ.

Բարեխօս ունենք փառաւորուած և օրհնուած միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամին, սուրբ Յովհաննէս Մկրտչին. սուրբ Ստեփաննոս նախավկային, սուրբ Առաքեալներին և Մարգարէներին, քաջ յաղթող վկայներին և Քրիստոսի մեծ խոստովանող վկային մեր Հայրապետը տէր սուրբ Գրիգոր Հայաստան աշխարհի լուսաւորչին։

Նաև պէտք է յիշենք ամեն սուրբերը, և նորանցով Տիրոջը աղաչենք։

Այս լուսոյ առաւօտն և առաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանելու համար, հաւատով Տիրոջիցը խնդրենք։— Շնորհիր Տէր։

Խաղաղութեան հրեշտակը։

Մեր մեղքի քաւութեան և թողութեան համար։

Սրբոյ խաչին մեծ և կարող։

Եւ ևս միաբան։

Մեր անձերը և միմեանց։

Ողորմիր մեզ մեր Տէր Աստուած։
Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր։

ՔԱՐՈԶ.

Փառաւորում ենք ամենակալ Աստուծոյն, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօրը, և շնորհակալ ենք լինում նորանից՝ որ խաղաղութեամբ պահեց մեզ այս գիշերի մէջ, և առաջնորդեց մեզ խաւարիցը դէպի լոյս, և մահիցը դէպի կեանք, ապականութիւնից դէպի յանապականութիւն (մաքրութիւն), և տգիտութիւնից դէպի իւր ճշմարտութեան գիտութիւնը։ Աղաչենք և խնդրենք նորանից, որ ցերեկիս երկայնութիւնը խաղաղութեամբ և յօժարակամ զուարթութեամբ անցնէ մեզանից։ Եւ իւր Աստուածային զօրութեամբ պահէ պահպանէ իւր ժողովուրդն, քանզի ամենի վերայ իւր բարերարութեամբ իշխանութիւն ունի, մեր ամենակալ Տէր Աստուածը՝ ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Գոհանում ենք քեզանից մեր Տէր Աստուած, որ երևելի լուսովդ զուարճացրիր քո

ամեն արարածներիդ, իսկ քո պատուիրանացդ իմանալի լուսով՝ ամեն քեզ հաւատացողներիդ լուսաւորեցիր։ Զօրութիւն տուր մեզ, Տէր, պահել քո պատուիրանքդ այս ցերեկուայ մէջ, և ամեն ժամանակ։ Որպէս զի լուսաւորուած մտքով միշտ քեզ հաճելի եղածն անենք, և պատրաստած բարիքներիդ հասնենք քո ամեն սուրբերիդ հետ։ Շնորհիւ ու մարդասիրութեամբ մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսի, որում վայելում է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Մեր խաղաղութիւն ու կեանքը, որ Հօրից ուղարկուեցար, ո՛վ Միածին Որդի Աստուծոյ Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, տո՛ւր մեզ քո խաղաղութիւնդ՝ որ քո սուրբ առաքեալներիդ շնորհեցիր, փչելով նորանց վերայ քո կենդանացնող ու ամենազօր սուրբ Հոգիդ։ Որպէս զի մենք ևս խաղաղուելով աշխարհային ամեն փորձանքից, քո Աստուածային շնորհացդ տաճար ու բնակարան լինենք, և

գոհանալով փառաւորենք քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ. ով Քրիստոս Աստուած մեր, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

(Սուրբ Աստուած ըստ պատշաճի):

ՄԱՂԹԱՆՔ.

Փրկել մեզ փորձութիւնից և մեր ամենայն վտանգից:

ՔԱՐՈԶ.

Եւ եւս խաղաղութեան համար Տիրոջն աղաչենք.

Լսելի լինելու համար մեր աղաչանաց ձայնը Տէր Աստուծոյն՝ սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբն, և իջանելոյ մեզ վերայ Տէր Աստուծոյ ողորմութիւն և գթութիւնը: Ամենակալ մեր Տէր Աստուած ապրեցրու և ողորմիր:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս ՃԺԲ.

Օրհնեցէք մանկունք Տիրոջը, և օրհնեցէք Տիրոջ անունը:

Օրհնուած լինի Տիրոջ անունը, այսուհետ մինչև յաւիտեան:

Արևելքից մինչև արևմուտքը օրհնուած է Տիրոջ անունը:

Բարձր է Տէրը բոլոր ազգերի վերայ. և նորա փառքը երկնքումն են:

Ո՞վ է մեր Տէր Աստուծոյ նման, որ բնակուած է երկնքումը, և տեսնում է խոնարհներն երկնքումն և երկրի վերայ:

Յարուցանում է աղքատներին երկրից, և բարձրացնում է տառապեալներին աղբանոցներից (մեղաց ապականութիւնից):

Նստեցնում է նոցա իւր ժողովուրդի իշխանների հետ:

Բնակեցնում է ամուլն (անծինն) տան մէջ ուրախ մտքով, ինչպէս մայր ուրախացած որդիներով:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Կիւրակէ օրերում այստեղ կարդում են Աւետարան բժշկութեան ըստ ձայնին). և ապա Նոր-բաստեղծեալ երգը. Քարոզ և Աղօթք:

ՔԱՐՈԶ.

Բոլոր աշխարհի, և սուրբ Եկեղեցւոյ հաստատութեան համար աղաչենք Տիրոջը։ Ամենքըս ասենք միաբանութեամբ.

Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Սուրբ ես, ո՛վ մեր Տէր Աստուած, հզօր և փառաւորուած, որ քերովբէական կառքերի վերայ ես նստում, և լոյս ես ծագում քո արարածներիդ վերայ։ Լուսաւորիր մեզ Տէր, այս առաւօտուայ ժամին։ Որպէս զի այս ցերեկուայ լուսոյ ծագելու ժամանակը քո մարդասիրութեանդ գութը մեզ վերայ ծագի։ Հեռացրու մեզանից, ո՛վ Տէր, սատանայի խաբէութիւնը և նորա բռնութիւնը խորտակիր. բոլոր սրբոց աղօթքովն ու բարեխօսութեամբը։ Պաղաքեր արա մեր երկիրը. քո ծառաներիդ սնունդ տալու համար։ Որոնցից միշտ փառաւորուելով գովւում է ամենասուրբ Երրորդութիւնդ. այժմ և միշտ։

Ծան. Աղուհացի օրերում այստեղ ասւում է

Տէր ամենակալ աղօթքը. և Բանից խմոց սաղմոսը. իսկ սրբոց տօներին՝ Սիրեցի սաղմոսը. Մաղթանք, Քարոզ և Աղօթք. և ապա թէ տօն օրերին և թէ պահոց՝ Արարչական երգը. Մաղթանք, Քարոզ և Աղօթք։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԼՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԹԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:
Մեր Հայր, որ երկնքումն ես:

Տիրոջ անունը օրհնուած լինի յաւիտեան, որ արևից յառաջ է նորա անունը:

Նորանով կօրհնուին բոլոր երկրի ազգերը, և բոլոր ազգինք երանութիւն կ'տան նորան:

Օրհնուած Տէր (է) Իսրայէլի Աստուածը, որ միայն սքանչելիք է անում, և օրհնուած է նորա սուրբ փառաց անունը յաւիտեան, ամեն երկիր կը լցուի նորա փառքովն. եղիցի, եղիցի:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Այժմ և միշտ:

ԲԱՐՈՁ.

Արևելքից մինչև արևմուտք ամեն տեղ, ուր որ քրիստոնեայք են գտնուում, և Տիրոջ անունը սրբութեամբ են կարդում: Տէրը նորանց աղօթքովն ու բարեխօսութեամբը մեզ ողորմի: Ուխտ անելով Աստուծոյն ազաչենք,

որ ինքը փրկէ մեզ մեղքից և աշխարհիս ցանկութիւնից: Ընդունի մեր ուխտերն ու մեր սրտերի խնդիրքը, և արժանի անի մեզ իւր հաւատքն ու պատուիրանքները պահել իւր բոլոր սուրբերի հետ. ամէն:

ԱՂՕԹՔ.

Արևելքից մինչև արևմուտք օրհնուած ես, ով Տէր Աստուած մեր, վասն զի քաղցր թագաւոր ես, և քո անունդ բոլոր աշխարհի վերայ ահարկու (սարսափելի) է: Մեր սաղմոսերգութիւնները թող քաղցր երևան քո առաջդ. և քո արդարութիւնից իրաւունք թող ելնէ մեր տկարութեան վերայ, որպէս զի փառաւորուի քո ամենասուրբ անունդ, և մենք արժանի լենենք քո պատուիրանքդ պահել, և քեզ օրհնութիւն և փառք մատուցանել Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Ո՛վ Աստուած մշտնջենաւոր, ով Աստուած յաւիտենական, որ լոյս ծագեցար այս աստ-

ըին աշխարհիս վերայ, և լուսաւորեցիր մեզ մեր խաւարային մեղքերիցը, որ մեզ համար ի չափաւորութիւն եկար (խոնարհեցար), ո՛վ անչափդ Աստուած, և քո սուրբ Հոգւոյդ շնորհքը թափելով ծաւալեցիր քո արարածներիդ վերայ։ Այժմ և յաւիտենական ժամանակներում բարեբանուած ես, ո՛վ իմ ամենամեծ Աստուած, Հօրը և ամենասուրբ Հոգւոյդ հետ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ՂԹ.

Աղաղակեցէք դէպի Տէրը. (տես երես 20)։

ՄԱՂԹԱՆՔ.

Աղաչում ենք, ողորմիր, Տէր բարերար, աղաչում ենք, ողորմիր, սուրբ ճգնաւորների աղօթքի համար՝ աղաչում ենք, ողորմիր։

ՔԱՐՈԶ.

Սուրբ ճգնաւորներովն աղաչենք Տիրոջը, որոնք չարերին յաղթեցին, նեղութիւններին համբերեցին, լուսեղէն և երկնային անթառամ պսակներին արժանի եղան. նորանց աղօթ-

քով և բարեխօսութեամբ մեզ ողորմի. մեր ամենակալ Տէր Աստուած. ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Սուրբ ես Տէր, և սուրբերի մէջ հանգստացած ես. և մենք սուրբ վկաներովս աղաչում ենք քեզ. սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբը՝ և քո ամեն սուրբերի աղաչանքովը, քո ողորմութիւնիցը մի՛ հեռացնիր մեզ. այլ սորանց աղօթքովը ապրեցրու մեզ. որովհետև դու բազումողորմ Աստուած ես, և քեզ վայելում է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԿԲ.

Ո՛վ իմ Աստուած Աստուած, ես շուտով առաւօտանց զարթնելով դէպի քեզ եմ կանչում, ծարաւեց իմ հոգին քեզ համար, ևս առաւել իմ մարմինը։

Ինչպէս անբնակ և անջուր երկիր, ուր չ'կայ նորա համար ճանապարհ։

Ես այսպէս կ'երևամ քեզ քո սուրբերիդ հետ, որ տեսնեմ քո զօրութիւններն ու քո փառքերը։

Վասն զի լաւ է ինձ համար քո ողորմութիւնդ, քան այս իմ անցաւոր կեանքը, և իմ շրթունքը կը գովեն քեզ։

Այսպէս կ'օրհնեմ քեզ իմ կենաց մէջ, և քո անունովը կը բարձրացնեմ իմ ձեռքերը։

Կը լցուի իմ անձը քո Աստուածային շնորհքիցն, ինչպէս պարարտ ճարպից (ճրագուից), ուրախ շրթունքներով կ'օրհնի քեզ իմ բերանը։

Քանզի երբ գիշերն անկողնիս մէջ յիշում էի քեզ, առաւօտը կանուխ զարթնելով խօսում էի քեզ հետ։

Որովհետև դու եղար իմ օգնականը, կ'ուրախանամ ես քո թեւերի հովանու ներքոյ։

Քեզ հետևող գտնուեց իմ անձը, և քո աջը (ձեռն) ընդունեց ինձ, իսկ նոքա (թշնամիքը) զուր տեղը խնդրում էին կորցնել իմ անձը։

Թո՛ղ մտնեն նորանք երկրի անդնդոց տակը, մատնուեն սրոյ ձեռքը, և աղուէսների (սատանայի) բաժին լինեն։

Թագաւորն իւր Տիրոջն է յուսացել. բոլորն արժանի են գովութեան, որոնք երդւում են նորա անուամբը. և կ'փակուի նորանց բերանը,

որ անիրաւութիւն են խօսում։

(ԿԳ.) Լսի՛ր, ո՛վ Աստուած, իմ աղօթքներիս, երբ կ'աղաչեմ ես դէպի քեզ, թշնամու երկիւղից փրկիր իմ անձը։

Ծածկի՛ր (պահէ) ինձ չարերի ժողովներից, մարդկանց բազմութիւնից, որոնք անօրէնութիւն են գործում։

Նրանք որ սրեցին իրենց լեզուն թրի (սրի) նման, իրենց աղեղները դառն խօսքերի նետերով լարեցին։

Գաղտուկ ձգեն այն մարդոց, որոնց սրտերն ուղիղ են, յանկարծ կը ձգեն դէպի նորանց, և չեն վախենալ։

Զօրացրին (հաստատեցին) իրենց անձերի մէջ չարութեան խօսքեր. խորհուրդ տրին թագցնել ինձ համար որոգայթ (թալաք), և ասացին Աստուած չէ տեսնում այս։

Քննեցին անօրէնութիւն, և պատրաստեցին իրենց անձերը, որ այլոց սրտի քննութիւնը (խորհուրդն) ևս քննեն։

Եթէ մէկ մարդ իւր սրտի խորհրդին մտադիր լինի, կը տեսնէ թէ ո՛րչափ բարձր է Աստուած իւր անհասանելի խորհրդովը։

Տղայոց նետերի պէս յետ դառնալով կը վիրաւորէ նոցա, տկարացան նորանց մէջ իրենց լեզուքը, և խռովեցան բոլորը զարմացած, որոնք նայեցին նոցա վերայ։

Երկիւղ կրեց ամեն մարդ պատմելով Աստուծոյ գործերը, և նորա հրաշալի արածները միտ առին (իմացան)։

Կուրախանայ արդարը Տիրոջով և նորան կը յուսայ, նորանով գովութիւն կը գտնեն բոլոր մարդիկ, որոնք իրենց սրտերովն ուղիղ են։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Այժմ

ՄԱՂԹԱՆԲ.

Ո՛վ Քրիստոս, քո լուսովդ ամենքս լուսաւորուեցինք և ո՛վ Փրկիչ, քո սուրբ խաչին մենք հաւատացողներս ապաւինեցինք։ Լո՛ւր մեզ, ո՛վ մեր Փրկիչ Աստուած, տո՛ւր մեզ քո խաղաղութիւնդ. և արա դէպի մեզ քո ողորմութիւնդ, ո՛վ մարդասէր Տէր։

ՔԱՐՈԶ.

Եւս առաւել աղաչենք խաղաղութեան Տիրոջը.

Փառաւորենք ամենակալ Աստուծոյն, որ ծագեց առաւօտեան լոյսն իւր արարածների վերայ, և այժմ ծագէ իւր առատ ողորմութիւնը իւր անուան փառաբանողների վերայ։ Ամենակալ Տէր Աստուած ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ ամենակալ և ամենամեծդ Աստուած, ընդունի՛ր մեր այս առաւօտուայ աղօթքն և հոգևոր երկրպագութիւնը քո սուրբ և երկնային խորաններիդ մէջ։ Ծագի՛ր մեզ վերայ քո իմաստութեան ու արդարութեան լոյսդ, և լուսոյ և ցերեկի զաւակներ արա մեզ, որպէս զի այս գալու օրուայ մէջ երկիւղածութեամբ անցնենք մեր կեանքը. և առանց դայթակղութեան վերջացնենք։ Վասն զի դու ես մեր օգնականն ու փրկիչը, և քեզ վայելում է փառք իշխանութիւն ու պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԻԲ.

Տէրը կը հովուէ (կը կառավարէ) ինձ, և ինձ ոչինչ պակաս չի լինել։

Դալար (կանաչ) տեղում բնակեցրեց ինձ, հանգստեան ջրոյ մօտ սնուցրեց (զարգացրեց) ինձ։

Դարձրեց (ուղղեց) իմ անձը ինձանում, և ինձ առաջնորդեց արդարութեան ճանապարհի մէջ, իւր սուրբ անուան համար։

Թէպէտ և շրջում եմ ես մահուան շուքի մէջ, չեմ վախենալ չարիցը, որովհետև դու Տէր, ինձ հետ ես.

Քո ցուպդ (ձեռնափայտդ) և քո իշխանութեանդ գաւազանն ինձ կը մխիթարեն։

Իմ առաջը սեղան պատրաստեցիր, իմ նեղացնողների աչքերի յանդիման։

Սուրբ իւղով օծեցիր իմ գլուխը, և քո սուրբ բաժակն անապական գինւոյ նման հարբեցրեց ինձ։

Ո՛վ Տէր, քո ողորմութիւնդ ինձ հետ գայ իմ կենաց բոլոր օրերումը, որ ես երկար կեանքով բնակուիմ Տիրոջդ տան մէջ։

(Սաղմ. ՃԽԲ.) Յո՛յց տուր ինձ քո Աստուածային օրինաց ճանապարհն, որի մէջ կենցաղավար ուեմ, քանզի իմ անձը դէպի քեզ Տէր, ուղղեցի։

Ո՛վ Տէր, փրկիր ինձ իմ թշնամիների ձեռ-

քիցը, քանզի ես քեզ ինձ ապաւէն (յոյս) արարի։

Սովորեցրու ինձ կատարել քո սուրբ կամքդ, որովհետև դու իմ Աստուածն ես։

Քո բարի Հոգիդ թո՛ղ առաջնորդէ ինձ դէպի ուղիղ երկիրը։

Քո անուանդ համար, ո՛վ Տէր, կապրեցնես ինձ, քո արդարութեամբը կը հանես իմ անձը նեղութիւնից։

Քո ողորմութեամբդ սատակեցրու իմ թշնամիները, և կորցրու իմ անձնի բոլոր նեղիչները, որովհետև ես քո ծառան եմ։

(ԽԵ.) Ո՛վ Աստուած, մեր ապաւէն և զօրութիւն, օգնական եղար այն սաստիկ նեղութեանց մէջ, որոնք պատահեցին մեզ։

Ուստի մենք չենք վախենալ թէ երկիրս վեր ի վայր շարժի, և թէ լեռները տեղափոխ լինեն ծովի մէջը։

Գոչեցին և ալէկոծեցան ծովերի ջրերը, և լեռները նորա զօրութիւնից խռովեցան։

Սուրբ Հոգւոյ շնորհաց գետերի գնացքը կուրախացնեն Աստուծոյ քաղաքը, և բարձրեալն Աստուած սրբեց իւր բնակութիւնները։

Աստուած է նորանց մէջ, և նոքա չեն վախենալ, օգնական կը լինի նոցա Աստուած, մէկ առաւօտից մինչև միւս առաւօտ:

Խռովեցան հեթանոսները, և խոնարհեցան թագաւորութիւնները, բարձրեալ Աստուածն իւր ձայնը տուաւ, և երկիրը զարհուրեցաւ:

Զօրութեանց Տէրը մեզ հետ է, Յակոբայ Աստուածը մեր ընդունողն է:

Եկէք և տեսէք Աստուծոյ գործերն, որ հրաշքներ և սքանչելիք արար երկրի վերայ:

Որ յաղթահարում է պատերազմներն երկրիս մէկ ծայրից մինչև միւս ծայրը, փշրում է աղեղները, խորտակում է նիզակները, և ասպարները (վահանները) այրում է կրակով:

Ո՛վ մարդիկ, առաւօտը կանուխ ելէք և ճանաչեցէք, որ ես եմ Աստուած, իմ անունս հեթանոսների մէջ պէտք է բարձրանայ, և ես բարձր կը լինեմ երկրի վերայ:

Զօրութեանց Տէրը մեզ հետ է, և Յակոբայ Աստուածը մեր ընդունողն է:

(ԿԹ.) Ո՛վ Աստուած, օգնելու համար ինձ նայիր, և ինձ ընկերելու համար փութացիր:

Կամաչեն և ամօթով կը լցուեն իմ թշնամիները, որ կուզեն կորուսանել իմ անձը, և դարձեալ կրկին կ'ամաչեն նորանք, որոնք ինձ համար չար խորհուրդ են անում:

Շուտ յետ կը դառնան ամաչելով. որ ինձ համար վահ վահ աւաղ են կարդում:

Ցնծալով կուրախանան քո վերայ այնպիսի մարդիկ, որոնք խնդրում են քեզ Տէր:

Կասեն նորանք ամեն ժամանակ մեծ է Աստուած, և կ'սիրեն քո փրկութիւնը:

Ո՛վ Աստուած, ես աղքատ և չքաւոր եմ, դու ես իմ Տէր՝ օգնական և փրկիչը, մի ուշանար:

(ՁԵ. 15). Զօրութիւն տուր քո ծառային, ապրեցրու քո աղախնի որդւոյն, և արա ինձ համար բարութեան նշան:

Տեսնեն իմ ատողները և ամաչեն, որ դու Տէր, օգնեցիր ինձ, և մխիթարեցիր ինձ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՂԹԱՆՔ.

Ո՛վ Տէր, ուղղիր մեր ընթացքը խաղաղութեան ճանապարհի մէջ, ով Տէր, ուղղիր և ա-

առաջնորդիր մեր Հոգւոյն և ամեն հաւատացեալց գնալ արդարութեան ճանապարհի և յաւիտենական կենաց մէջ։

ԴԱՐՈՁ.

Աղաչենք ամենակալ Աստուծոյն, որ աջողելով ուղղի իւր ծառաների ճանապարհը բարւոյ և խաղաղութեան մէջ։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Օրհնուած ես ով մեր Տէր Աստուած, որ ամեն ժամանակ մեզ հետ ես, և ընաւ երբէք քո ձեռքիցն չես թողնում նորանց՝ որոնք հաւատով և ճշմարտութեամբ քեզ կանչում են։ Աղաչում ենք և խնդրում ենք քեզանից ով Տէր, քո ծառայներիդ ճանապարհորդակից եղիր քո վերակացութեամբդ՝ խաղաղութեան մէջ պահելով նոցա, և առաջնորդիր մեզ կրկին անդամ խաղաղութեամբ և ուրախութեամբ հասնել մեր իւրաքանչիւր ընակարանները՝ Քրիստոս Յիսուս մեր Տիրոջով։ Որին վայելում է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։

Մեր Հայր, որ երկնքումն ես։

—

Օրհնուած ճշմարիտ Սուրբ Հոգիդ Աստուած, ամէն։

Սաղմոս Ծ.

Ողորմիր ինձ, ով Աստուած, քո մեծ ողորմութեանդ և քո առատ գթութեանդ համեմատ՝ իմ անօրէնութիւններիս քաւութիւն շնորհիր։

Լուա՛ ինձ իմ անօրէնութիւններիցս, և իմ մեղքերիցս սրբիր ինձ։

Իմ անօրէնութիւններս ես ինձէն գիտեմ, և իմ մեղքերս ամեն ժամանակ իմ առաջին են։

Քեզ, միայն քեզ դէմ մեղանչեցի, ով Տէր, և քո առաջը չարութիւն գործեցի։

Որպէս զի արդար լինիս քո խօսքերիդ մէջ, և յաղթող լինիս քո դատաստանիդ մէջ։

Անօրէնութեամբ յղացաւ, և մեղքով ծնեց ինձ իմ մայրս։

Դու ով Տէր, ճշմարտութիւն սիրեցիր, և անյայտ ու ծածուկ բաները՝ քո իմաստութեամբդ յայտնեցիր ինձ։

Ցօղիր իմ վերայ մշտիկով (ջուր ցրցրիկով), որ մաքուր լինեմ, լուա ինձ, որ ձիւնից աւելի սպիտակ (ճերմակ) լինեմ։

Ո՛վ Տէր, ցնծութիւն և ուրախութիւն լսել տուր ինձ, որ ցնծան իմ չարչարուած ոսկորներս։

Դարձրու քո երեսդ իմ մեղքերից, և իմ անօրէնութիւնները քաւիր ինձանից։

Ո՛վ Աստուած, իմ մէջս մաքուր սիրտ հաստատիր, և իմ փորի մէջ ուղիղ հոգի նորոգիր։

Ո՛վ Տէր, մի՛ ձգեր ինձ քո երեսից, և քո սուրբ Հոգիդ ինձանից մի՛ հաներ։

Տո՛ւր ինձ քո փրկութեանդ ուրախութիւնը, և պետական Հոգւովդ հաստատիր ինձ։

Անօրէններին պիտի սովորեցնեմ քո ճանապարհներդ, և ամբարիշտները պիտի դառնան դէպի քեզ։

Ո՛վ Աստուած, իմ փրկութեան Աստուած,

փրկիր ինձ արիւնհեղութիւնից, որ ցնծալով խօսի լեզուս քո արդարութեանդ վերայ։

Ո՛վ Տէր, եթէ իմ շրթունքս բանաս, իմ բերանս օրհնութիւններ պիտի երգէ քեզ։

Եթէ կամենայիր, զոհի պատարագներ կը մատուցանէինք քեզ. բայց դու և ոչ իսկ ողջակէզներին հաճեցար։

Աստուծոյ հաճելի պատարագը խոնարհ հոգին է, մաքուր սիրտն ու խոնարհ հոգին՝ Աստուած չի արհամարհեր (չի անարգեր)։

Քո կամքովդ բարի արա Սիոնին, ո՛վ Տէր, և լիսող շինուին Երուսաղէմի պարիսպները։

Այն ժամանակ պիտի հաւանես արդարութեան պատարագներին, երբ ուխտի պատարագներ ու զուարակներ մատուցանեն սեղանիդ վերայ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

ՄԱՂԹԱՆՔ.

Ամեն ժամանակ իմ աղաչանքն այս են, ո՛վ Տէր, իմ մեղքերիցը սրբիր ինձ, և ո՛վ մարդասէր Տէր, քո ծառաներին պահպանիր օտար թշնամուց։

ԲԱՐՈՉ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ.

Յովհաննու Մանդակունեաց Հայրապետին

Ամենքս միաբան գոհութիւն տանք մարդասէր Աստուծոյ և մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսին: Որ մարդկային ազգը ազատեց (Ադամայ) անէծքի դատապարտութիւնից, և այս ժամիս իւր խաչով աշխարհի մեղքերը վերացրեց, և Հոգւոյն սրբոյ շնորհքը առատապէս պարգևեց երանելի առաքեալներին: Խնդրենք հաւատով, որ մեզ ամենքիս մասնակից անի այն ամենամեծ և Աստուածային բարութեանց, ամեն սրբոց աղօթքովն ու բարեխօսութեամբը, որոնք այստեղ և բոլոր աշխարհի մէջ կը գըտնուին: Որպէս զի իւր կամքին համեմատ՝ անարատ վարքով և ճշմարիտ առաքինութեամբ ապրելով այս աշխարհի մէջ, նորա ամեն սուրբերի հետ բաժին և վիճակ ունենանք ժառանգելու յաւիտենական ու երկնային խոբանների բնակութիւնը, որ խոստացաւ իւր սիրելիներին ճշմարիտ Աստուածն Յիսուս Քրիստոս մեր Տէրը, ապրեցրու և ողորմիր:

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Յիսուս, որ քերովբէից անպատմելի ամբոխին վերայ ես հանգչում, և միշտ այցելութիւն ես անում (խնամք տանում) քո արարածներիդ, որ և այս ժամիս մէջ՝ երանելի առաքեալների վերայ թափեցիր քո սուրբ Հոգւոյդ շնորհքը: Դու ո՛վ Տէր, այս առաջիկայ ժամից մինչև մեր կեանքին վերջը՝ մեր մըտքին մէջ տպաւորիր, որ միշտ յարդորունք (ջանանք) բարեգործութեան հետևիլ, և արժանի արա մեզ խոստացած բարիքներիդ մասնակից լինել, ո՛վ մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ օրհնուած ես Հօր և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Ո՛վ Բանդ Աստուած, Իակից Հօր՝ և արարչակից սուրբ Հոգւոյն, որ յաւիտենական ժամանակներից առաջ էիր, և որ նախաստեղծին Ադամայ արգելեալ պտուղը ճաշակելով արած պատուիրանազանցութիւնը, այս ժամիս

քո ամենայաղթ խաչովդ մէկ կողմ ձգելով, մեր նոյն մեղքով ժառանգած մեռելութիւնը՝ կենդանութեան փոխեցիր, և մեր անօրէնութիւնները նոյն խաչիդ վերայ բևեռելով (մեխելով), անապական կեանք՝ և կենաց նորոգութիւն խոստացար քեզ յուսացողներին։ Աղաչում ենք, ով Տէր մեր Յիսուս Քրիստոս, արժանի արա և մեզ մասնակից լինել այդ շնորհաց, որ օրհնուած ես Հօր և սուրբ Հոգւոյդ հետ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՊԱՀՈՑ.

Հաւատով խնդրենք Տիրոջից մեր հայրերի և եղբայրների համար, որ ծովով ու ցամաքով ճանապարհորդութիւն են անում, որպէս զի առաջնորդէ նորանց մեր Տէր Աստուածը, խաղաղութեամբ պահէ նոցա, և տանի հասցնէ ամեն մէկին իրենց տեղերը։ Վասն զի ինքն է մեր կեանքի առաջնորդը և փրկութեան յոյսը, որ յաջողում է իւր ծառաներին խաղաղութեամբ հասնել կենաց և փրկութեան նաւահանգիստը։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Տէր Աստուած, առաջնորդիր մեզ, և սովերեցրու մեզ քո արդարութեան ճանապարհիդ մէջ ընթանալ։ Խաղաղութեան մէջ պահիր մեր կեանքը, և մեր գնացքը (վարքը) քո հաճած կերպով թող լինի։ Քո ծառաներիդ հոգևոր և մարմնաւոր ընթացքը՝ քո անարատ ճանապարհովդ դէպի յաւիտենական կեանքիդ հասցրու։ Քո Միածին Որդւոյդ մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհիւ, որ եղաւ մեզ կենաց առաջնորդ և փրկութեան յոյս, որի հետ օրհնուած ես, ով Հայր ամենակալ, կենդանարար ու ազատիչ սուրբ Հոգւովդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԻԲ.

Տէրը կը հովուէ ինձ, և այլն (Տես երես 61)

ՔԱՐՈԶ.

Եւ ևս խաղաղութեան համար Տիրոջն աղաչենք։

Գոհաբանելով աղաչենք բարերար Հոգին

Աստուծոյն, և ողորմութիւն խնդրենք նորանից, որ իւր բարերարութեամբը մեր մեղաց պատժի բարկութիւնը հեռացնի մեզանից։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ սուրբ Հոգիդ Աստուած ճշմարիտ, քո խաղաղութեամբդ՝ որ մեր ամենից մտքից և խորհուրդներից վեր է, մխիթարիր քո ծառաներիդ անձերը՝ ընդունելով մեր աղաչանքը. քո բարերութեամբդ հեռացրու մեզանից՝ մեր մեղքերը պատժելու համար ունեցած բարկութիւնդ, ներիր և լսիր մեզ, քաւիր ու թողութիւն տուր մեր մեղքերին, արժանի արա գոհանալով փառաւորել քեզ Հօր և միածին Որդւոյն հետ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։

Մեր Հայր, որ երկնքումն ես։

—

Օրհնուած Հայր սուրբ ճշմարիտ Աստուած ամէն։

Սաղմոս Ծ.

Ողորմիր ինձ, ո՛վ Աստուած, քո մեծ ողորմութեանդ համեմատ (Տես երես 67)։

ՄԱՂԹԱՆՔ (Տես երես 69)

ԲԱՐՈՒ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ.

Արթուն մտքով և անշփոթ խորհրդով՝ միաբան աղօթքի կենանք մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի առաջին։ Հաւատով խնդրենք նորանից՝ որ խաղաղութեան հրեշտակը մեր անձերին պահապան շնորհի, որպէս զի գայ և տեղաւորուի մեր շուրջը, և աներկիւղ պահէ մեզ այսօր հասարակ ժամիս մէջ սա-

տանայի հրեղէն նետերիցն՝ որ յերեկով թըռչում է, և այն ամեն խաւարային ընթացք ունեցող բաներիցն ու դիւական դայթակղութիւնիցը։ Որից զգուշութեամբ պահելով մեզ՝ ամեն սրբոց աղօթքովն ու բարեխօսութեամբ, շնորհի մեզ մարդասէրն Աստուած, առաքինութեամբ ապրել մեր անձերի փրկութեան համար, և իւր կենդանութիւն տուող անուան պատուին և փառքին համար։ Յոյս ունենանք մասնակից գտնուելու Աստուծոյ Միածին Որդւոյն յայտնուած օրին, որ մեր խոնարհութեան մարմինը՝ իւր փառաւոր մարմնոյն նմանութեանը կերպարանակից պիտի անէ, վասն զի այսպէս խոստացաւ իւր սիրելիներին, մեր Տէր Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուածը, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Տէր Աստուած, զգեցո՛ (հագցրու) մեզ արդարութեան զէնքով, որ զօրաւոր և յաղթող լինենք սատանայական պատերազմների դէմ, և նորա ամեն կրակէ նետերը հանգցնելով՝ անկասկած լինենք խաւարային ընթացք ունեցող բաներից և դիւական դայթակղութիւնից՝ այս հասարակ օրիս մէջ (Եփես. 2. 11—17)։ Եւ մեր վայելած այս ցերեկուայ մէջ ևս զգաստանալով, առաքինութեամբ կենանք մեր անձերի փրկութեանը և սուրբ Երրորդութեանդ պատուոյն ու փառքին համար։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Քո երկնաւոր խաղաղութեամբդ՝ ամուր պահիր մեր անձերը, ո՛վ Տէր զօրութեանց, վասն զի դու ես խաղաղութեան Աստուածը, և բացի քեզանից ուրիշ մէկը չենք ճանաչում. և քո ամենազօր անունդ մեր անձերին օգնութիւն ենք կոչում։ Նայի՛ր մեր երկրպագութեան վերայ, և սովորեցրու մեզ ճշմարիտ արդարութեամբ գործել։ Եւ զոհութեամբ փառաւորել Հայրը և Որդին և սուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՐՈՉ ՀԱՍԱՐԱԿ ՊԱՀՈՑ.

Աղաչենք մեր Փրկիչ Քրիստոսին, հիւանդ-

ների և ամեն վշտացեալների համար, որպէս զի ողորմութիւն անի իւր մեծ ողորմութեան համեմատ, և բժշկի իւր ծառաների հոգւոց և մարմնոց ախտերը (ցաւերն) ու հիւանդութիւնները, և բոլորին կատարեալ առողջութեամբ հասցնի մշտնջենական և անախտ կեանքի մէջ։ Որ ուղարկուեց Հօրից՝ մարդկան ազգը բժշկելու համար, միածին Որդին Աստուծոյ և մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսը, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Տէր Աստուած, փարատիր ցաւերն ու բժշկիր հիւանդութիւնները քո ժողովրդներից, և քո ամենայաղթ խաչիդ նշանով կատարեալ առողջութիւն շնորհիր ամենին, որով (քո խաչովդ) մարդկային ազգի տկարութիւնը վերացրիր, և մեր կեանքի ու փրկութեան թշնամին դատապարտեցիր։ Դու ես մեր կեանքն ու փրկութիւնը, ո՛վ բարերար և բազումողորմ Աստուած, որ միմիայն դու կարող ես մեր մեղքերին թողութիւն տալ, և ախտերն ու հիւանդութիւնները հեռացնել մեզանից, և քեզ միայն յայտնի են մեր հարկաւոր պէտքերը։ Ո՛վ պարգևիչ բարեաց, պարգևիր քո առատ ողորմութիւնդ քո արարածներիդ վերայ. իւրաքանչիւր պէտքին համեմատ, որից միշտ փառաւորուելով գովւում է ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Սաղմոս Խ.

Երանի նորան՝ որ խնամք է տանում աղքատի և տնանկի (չքաւորի) համար, նեղութեան օրումն Տէրը կը փրկէ նորան։

Տէրը կը փրկէ և կ'ապրեցնէ նորան, երանելի կ'անէ երկրի վերայ. և իւր թշնամիների ձեռքը չի մատնել նորան։

Տէրը կը մխիթարէ նորան իւր հիւանդութեան անկողնումը. և նորա բոլոր անկողինը հիւանդութիւնից կը փոխէ ողջութեան մէջ։

Ես ասացի, Տէր, ողորմիր ինձ, և բժշկիր իմ անձը, որովհետև քո առաջը ես մեղանչեցի։ (Ղ.) Որ բնակուած է Բարձրեալի օգնութեան մէջ, նա Աստուծոյ շուքի ներքոյ կը հանգստանայ երկնքումը։

Նա կասէ Տիրոջը, դու ես իմ ընդունող, իմ ապաւէն Աստուածը, որին ես յուսացած եմ։

Նա կը փրկէ ինձ, որսողի որոգայթիցը, և խռովութեան խօսքերից։

Նա իւր թիկանց վերայ կ'ընդունէ քեզ. և դու նորա խնամոց թևերի տակ կը հանգըստուես։

Նորա ճշմարտութիւնը զէնքի նման քո շուրջը կը պահէ։

Դու գիշերային երկիւղից, և ցերեկուայ թռչող նետից չես վախենար։

Այն բանից, որ շրջում է խաւարի մէջ, և կէսօրուայ դիւական գայթակղութիւնից։

Հազար հոգի քո կողմիցը կ'ընկնեն, և տասն հազար քո աջ կողմիցը, բայց քեզ ոչինչ չեն մօտենալ։

Բայց դու միայն քո աչքերովը կը նայես, և մեղաւորների հատուցումը կը տեսնես, որովհետև դու ես, Տէր, իմ յոյսը։

Դու Բարձրեալին քեզ ապաւէն արիր, որ չար բան չը հասնի քեզ, և տանջանք չը մօտենան քո բնակարանին։

Իւր հրեշտակներին հրամայել է քեզ հա-

մար, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհների մէջ։

Նորանք ձեռքերի վերայ կ'առնեն քեզ, որ քո ոտը քարի չ'տաս երբէք։

Իժերի և քարբերի (օձերի) վերայ կը գնաս, և ոտի տակ կը կոխես առիւծն և վիշապը։

Որովհետև նա ինձ յուսացաւ՝ և ես կը փրկեմ նորան, հովանի կը լինեմ նորա վերայ, քանզի նա ճանաչեց իմ անունը։

Նա կը կանչէ դէպի ինձ, և ես կը լսեմ նորան և նորա հետ կը լինիմ նեղութեան մէջ։

Կը փրկեմ և կը փառաւորեմ նորան, երկայն օրերով կը կշտացնեմ նորան, և իմ փրկութիւնը ցոյց կը տամ նորան։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ այժմ և միշտ։

ԲԱՐՈՋ.

Եւ ևս խաղաղութեան համար Տիրոջը աղաչենք։

Հաւատով խնդրենք Հօրիցը՝ մեղքերի քաւութեան ու թողութեան համար, ցաւերից և նեղութիւններից փրկելու մեզ, և ամենակալ տէր Աստուծոյ ողորմութիւն և գթու-

թիւնը իջանելու մեր վերայ, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Հայր գթութեանց և Աստուած ամեն մխիթարութեանց, որ մխիթարում ես մեզ մեր ամեն նեղութեան մէջ. լսիր և այժմ քո ծառաների պաղատանաց ձայնին՝ ընդունելով մեր աղաչանքը, քո բարերարութեամբ անցո (հեռացրու) մեզանից մեր մեղաց պատժի բարկութիւնը։ Ներիր և լսիր մեզ, քաւիր և թող մեր մեղքերը, արժանաւորութիւն տուր մեզ գոհութեամբ փառաւորել քեզ Որդւոյ և սուրբ Հոգւոյդ հետ. այժմ և միշտ և։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր, որ երկնքումն ես։

—

Օրհնուած Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ, ամէն։

Սաղմոս Ծ.

Ողորմիր ինձ, ո՛վ Աստուած, քո մեծ ողորմութեանդ համեմատ։

(Տես երես 67)։

ՄԱՂԹԱՆՔ.

Ամեն ժամանակ իմ աղաչանքը այս են, ո՛վ Տէր, իմ մեղքերիցը սրբիր ինձ, և ո՛վ մարդասէր Տէր, քո ծառաները պահպանիր օտար թշնամուց։

ՔԱՐՈԶ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ.

Սուրբ սրտով և հաստատուն հաւատով՝ միաբան աղօթքի կենանք մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի առաջին, յիշելով նորա մե-

ծամեծ և անչափ շնորհներն. կենսատու (կեանք տուող) խաչի վերայ ունեցած համբերութիւնը, և ազատեցուցիչ (փրկարար) Արեան թափուելն, և սոցա նման չարչարանքներն՝ որ այս ժամիս մէջ մեզ մեղաւորներիս համար կրեց նա։ Մենք՝ այս ամենքը միտք բերելով՝ մեր խորհուրդները, մեր խօսքերն ու գործերը, մեղքից ազատ պահենք, և անձերի սրբութիւնը կատարեալ անենք Աստուծոյ երկիւղովը։ Չ'յապաղենք (չ'ուշանանք) խոստովանել նորան մեր մեղքերն և թողութիւն խնդրել, որ առանց ապաշխարութեան չ'կորնուինք յաւիտենական կորուստով։ Այլ մինչդեռ ժամանակը ձեռքներիս է, այս կեանքիս մէջ բարեգործութիւն անենք, մեր վարքին օրինակ ունենալով այն ամեն սուրբերն ու յաղթող նահատակներն՝ որ իսկզբանէ հաճելի եղած են մեր ամենիս Տիրոջը և Փրկչին։ Որոց աղօթքովն ու բարեխօսութեամբն շնորհի մեզ մարդասէրն Աստուած որ իւր հաճելի և մեզ օգտակար եղածն խորհենք միշտ՝ և կատարենք. և անպատում (անպատմելի) պարգևներին մասնակից լինենք, որ խոստացաւ իւր սիրելիներին մեր Տէրը Յիսուս Քրիստոս. ապրեցրու և ողորմիր։

ՍԱՂՄՈՍ.

Ով՛ Տէր զօրութեանց, որ քո կամաւոր մահուամբդ այս ժամիս մէջ ողջացրիր մեզ մեղքով մեռածներիս, և մեր դատապարտութեան կնիքը (վճիռը) խաչին վերայ բևեռեցիր (մեխեցիր), և քո սուրբ Արիւնդ թափելով, մարդկային ազգն ապականութեան (մեղքի) ծառայութիւնից հանեցիր, փառաւոր ազատութիւն շնորհելով նորան։ Ընդունիր այժմ մեր աղաչանքը, և յաջողութիւն տուր մեզ՝ ճշմարիտ հաւատով և առաքինասէր վարքով ապրիլ այս աշխարհիս մէջ, և արժանի լինել յաւիտենական ու երկնային ուրախութիւններին քո ամեն սուրբերիդ հետ, և գոհանալով փառաւորել քեզ Հօր և սուրբ Հոգւոյն հետ, այժմ և միշտ և յաւիտեանս։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Ո՛վ բազումողորմ և խաղաղութիւն պարգևող Աստուած՝ հաստատիր մեր անձերը քո խաղաղութիւնովդ, որով՝ քո բոլոր ստեղ-

ծածներդ իւրաքանչիւրն իւրենց կարգին մէջ կրպահես քո ուղիղ հրամաններովդ խնամելով նոցա, վասն զի քո կամքդ այդ է՝ որ մենք խաղաղ ու հոգևոր սիրով կենանք իրար հետ. և արթուն մտքով սպասենք միածնիդ Աստուծոյ և փրկչիդ մերոյ Յիսուսի Քրիստոսի յայտնուելուն, որին արժանի լինենք հանդիպիլ ամպերի մէջ՝ երբ ամպերով օդի միջէն Տէրութեանդ առաջն ելնենք: Զուարթ ցրեսով կենանք քո աջ կողմդ՝ քո բուրբ անուանդ հաւատացող սուրբերիդ ու սիրելիներիդ հետ, և ժառանգենք՝ աշխարհի սկզբից քո սուրբերիդ համար պատրաստած արքայութեանդ: Եւ նորանց հետ գոհանալով փառաւորենք քեզ Հօրը և ամենասուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս:

ԲԱՐՈՉ ՀԱՅՍԱՐԱԿԱՑ ՊԱՀՈՑ.

Աղաչենք մեր կենսատու փրկիչ Քրիստոսը, որ իւր կամաւոր խաչելութեամբն փրկեց արարածներին, և իւր արեան թափելովը թողութիւն շնորհեց իւր յուսացողներին. Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Բարերար և բազումողորմ Աստուած, քո առաջդ ընկնելով աղաչում ենք մեր բոլոր սրտով, և գթութիւն ենք խնդրում քեզանից, ինչպէս որ խոստացար քո ծառաներիդ և ասիր թէ՝ «Ամեն ինչ որ խնդրէք Հօրից աւատով՝ Որդւոյ անունով՝ կը տրուի ձեզ»: Ո՛վ Տէր, նոյն խոստումդ շնորհիր այժմ քեզ հաւատացողներիս, և մեր խնդրուածքն ի բարին կատարիր, քանզի քեզ ապաւինած ենք: Եւ քո առատ ողորմութեամբդ մխիթարիր մեզ մեր այս կեանքին մէջ, և մեզ առաջնորդելով հասցրու երկնքի անճառ արքայութեանդ, փառաբանելու և պատուելու համար ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Սաղմոս ՃԺԴ.

Ես սիրեցի, որ Տէրը լսի իմ աղաչանքի ձայնին. նա իւր ականջը խոնարհեցրեց դէպի ինձ, և ես իմ օրերումս կանչեցի նորան:

Մահուան ահն ու դողն իմ շուրջը պատեց. և դժոխքի վիշտերը գտան ինձ:

Նեղութիւն և թշուառութիւն գտայ ես, բայց Տիրոջ անունը կանչեցի ես։

Ո՛ Տէր, փրկէր իմ անձը, ով ողորմած Տէր Աստուած, ողորմութիւն արա քո պարզամիտ ծառաներին։

Ես խոնարհեցայ և Տէրը ապրեցրեց ինձ, ով իմ անձը, դարձէր քո հանգստութեան մէջը, որովհետև Տէրը օգնեց քեզ։

Փրկեց իմ անձը մահից, իմ աչքը արտասունքից. և իմ ոտները գայթակղութիւնից, ես հաճելի կը լինեմ Տիրոջ առաջին կենդանեաց երկրումը։

(ՃԺԵ). Ես հաւատացի, ինչ որ խօսեցայ բերանովս, ես շատ խոնարհ եղայ։

Ես ասացի իմ զարմանալում, թէ ամեն մարդ սուտ է։

Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նորա բոլոր բարութեան համար, որ տուաւ ինձ։

Փրկութեան բաժակը կ'ստանամ, և Տիրոջ անունը կը կանչեմ։

Իմ աղօթից ուխտերն Տիրոջը կը վճարեմ նորա բոլոր ժողովրդի առաջին։

Պատուական է Տիրոջ առաջին նորա սուրբերի մահը, ով Տէր ես քո ծառան եմ, քո ծառան և քո աղախնի որդին։

Դու իմ կապանքները արձակեցիր, քեզ գոհութեան պատարագ կը մատուցանեմ, և Տիրոջ անունը կը կանչեմ։

Իմ աղօթից ուխտերն Տիրոջը կը վճարեմ նորա բոլոր ժողովուրդի առաջին, Տիրոջ տան սրահների մէջ, և քո մէջ, Երուսաղէմ։

(ՃԺԶ) Օրհնեցէք Տիրոջը, ով ամեն ազգեր, գովեցէք նորան, ով ամեն ժողովուրդներ։

Որովհետև նորա ողորմութիւնը զօրաւոր է մեզ վերայ, Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտեան է։

(ԾԳ). Ո՛վ Աստուած, քո անունովը ազատիր ինձ, և քո զօրութեամբը իրաւունք արա ինձ։

Ո՛վ Աստուած, լսիր իմ աղօթքը, ականջ դիր իմ բերանի խօսքերին։

Որովհետև օտարները վեր կացան ինձ վերայ. և զօրաւորները խնդրում են իմ անձը, և քեզ Աստուած, ոչինչ համարեցին իրենց աչքի առաջին։

Ահա Աստուած իմ օգնականն է, Տէրը պահպանում է իմ անձը։

Նա չարը կը դարձնէ իմ թշնամիների մէ-

բայ, քո ճշմարտութեամբը կորցրու նորանց։

Ես յօժար կամքով պատարագ կը մատուցանեմ քեզ, և քո անունը կը գովեմ, ով Տէր, որովհետև բարի է։

Ամեն նեղութիւնից դու փրկեցիր ինձ, և իմ աչքը նայեց իմ թշնամիների վերայ։

(ԶԵ. 15). Զօրութիւն տուր քո ծառային, և ապրեցրու քո աղախնի որդւոյն, և արա ինձ համար բարութեան նշան։

Տեսնեն իմ ատողները և ամաչեն, որ դու Տէր, օգնեցիր ինձ և մխիթարեցիր ինձ։

Փառք Հօր և Որդւոյ։ Այժմ և միշտ։

Մեր Հայր, որ երկնքումն ես։

ՄԱՂԹԱՆՔ.

Մեր սաղմոսերգութիւններն և աղաչանքը ընդունիր ով մարդասէր Աստուած, քո բարերար կամայ հաճոյ լինելու համար. մեր շատ մեղքերին թողութիւն շնորհիր, չարից փրկիր, մեղքից պահիր, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնուած է Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյ թագաւորութիւնը, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴԻ.

—

ԱՋԴ

Սուրբ Պատարագը որ Տէրունական ընթրիք է կոչւում, կամ սուրբ Հաղորդութեան խորհուրդն է Քրիստոսի հաստատած ծէս և արարողութիւնը, որ հացի և գինւոյ տեսակաց ներքոյ պարունակում է մեր Տէր Յիսուս Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնը, որ կերակուր և սնունդ է լինում մեր հոգւոյ համար։ Այսպէս և եկեղեցւոյ միւս խորհուրդների ծէսերը և արարողութիւններն, արտաքին նշանների միջոցաւ արժանապէս ընդունողներին տալիս են սուրբ Հոգւոյ զօրութիւն և շնորհք։

Մեր Տէրն Քրիստոս հրամայեց Առաքեալներին, որ ընթրիքի խորհուրդն միշտ կատարեն իւր յիշատակի համար։ «Եւ հաց առաւ գոհացաւ, կոտրեց և տուաւ նրանց և ասաց։ Այս է իմ մարմինը, որ բազմաց համար տրրւում է, այս արէք իմ յիշատակի համար։ Այնպէս էլ ընթրիքից յետոյ բաժակն առաւ

և ասաց Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը, որ ձեզ համար թափւում է». (Ղուկ. ԻԲ. 19, 20)։ Վասն որոյ երբ Առաքեալները ժողովւում էին աղօթելու և սուրբ Աւետարանը քարոզելու հաւատացեալներին, կատարում էին ընթրիքի խորհուրդն. «Եւ միշտ հետևում էին Առաքեալների վարդապետութեանը, և հաղորդութեանը և հացի կտրելուն և աղօթքներին». (Գործ. Բ. 42)։

Սուրբ Հաղորդութեան խորհուրդը կոչւում է Նոր Ուխտի Պատարագ կամ Նոր Օրինաց Զոհ, որով միշտ ներկայացւում է հաւատացեալին խաչի Զոհն։ Որովհետև Քրիստոս միանգամ իւր անձը պատարագելով խաչի վերայ, իւր արիւնն թափելով զոհ եղաւ մեր փրկութեան համար. «Քրիստոս մեզ սիրեց և իւր անձը մեզ համար մատնեց, պատարագ և զոհ Աստուծոյ անոյշ հոտ լինելու». (Եփես. Ե. 2)։ Նոյն ինքն Քրիստոս անարիւն պատարագ մշտնջենապէս մատուցւում է քահանայից ձեռքով սուրբ սեղանի վերայ. Աստուծոյն պաշտելու և գոհութիւն մատուցանելու, և մեր մեղքերին թողութիւն խնդրելու

համար. «Որովհետև ես Տէրից ընդունեցի այն որ ձեզ էլ աւանդեցի. եթէ Տէր Յիսուս այն գիշերն որ մատնւում էր, հաց առաւ, գոհացաւ կտրեց և ասաց. Առէք կերէք, այս է իմ մարմինը՝ որ ձեզի համար բաշխւում է, այս արէք իմ յիշատակի համար։ Այնպէս էլ ընթրիքն ուտելուց յետոյ բաժակն առաւ և ասաց։ Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը. այս արէք, քանի անգամ որ խմէք իմ յիշատակի համար։ «Քանի անգամ որ այս հացը ուտէք և այս բաժակը խմէք, Տիրոջ մահը պատմեցէք, մինչև որ նա գայ». (Ա. Կորնթ. ԺԱ. 23—26)։

Երբ պատարագիչ քահանայն մանելով Աւանդաւանն Ս. Պատարագի զգեստն է հագնում. յատկացեալ սաղմոս և աղօթք կարդալով, այն ժամանակ դպիրներն երգում են զգեստաւորուելու չարականն «Խորհուրդ խորին»։

ԱՂՕԹՔ.

Ս. Գրիգոր Նարեկացւոյ

Բան ԾԲ.

Այս մարգարէների խնկելի (ախորժելի) ձայնը.

որոնք առաջուց ծանուցանում էին քո օրհնուած գալստեան ազատարար հրամանը, և որ հնար չէ նիւթական լեզուի խօսքով թուել անչափութեան համար. փոքր և նուազ են օրինակներ և նմանութիւններ՝ հին և ժամանակաւոր, քո աւետեաց յայտնութեան և խաչիդ փրկագործութեան համար։ Որ ամեն տեղ կանգնեցիր քո ուխտի արեան վկայութեան խորանը, որ Աբելի մահուան բողոքումից աւելի մեծաբարբառ միշտ աղաղակում են քո հանդիսի բարեաց յաղթանակը՝ կրկնակի և անմահական կենաց մէջ. շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, քեզ հետ որդեզրութեան, և միութեան սուրբ Հոգւոյդ հետ. քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենական մաքրութեան, խկապէս երանութեան, հրեշտակաց անկողոպտելի փառքի կցորդութեան. մեր շրթանց ձայնաւոր աղաչանքն է հաշտեցնող Աստուծոյն։ Եւ որ ահաւորն է ասել. յիշատակում եմ այստեղ մեծիդ երախտիքը, Աստուածանալ շնորհի ընտրութեամբը, և Արարչիդ հետ միանալ Տէրունի մարմնիդ ճաշակելովը, և կենդանի լու-

սոյդ խառնութեամբը. այսպիսի երջանիկ խոստման կատարումն չունէր օրէնքն՝ Պօղոսի ասութեան պէս։ Այլ դու փրկութիւն եկիր քո հայրենի հարստութեամբը արիր և կատարեցիր երկայն ակնկալութիւն, որ քո մօտ պահուած էր առանց վերջանալու, ամենի ներող։ Եւ քեզ փառք Հօր հետ, քո սուրբ Հոգւոյդ օրհնութեան գովեստի համար, յաւիտենից. ամէն։

Երբ պատարագիչ քահանայն զգեստաւորուած գալիս է սուրբ Սեղանի առեանը, և ձեռքերը լուանալով ասում է. «Լուացից սրբութեամբ զձեռս իմս» (Սաղմոս Իե). նշանակում է նախ քան սուրբ խորհուրդին սպասաւորելը, պէտք է սրբուել ամեն հոգւոյ և մարմնոյ աղտեղութիւնից։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Տէր Յիսուս Քրիստոս, երբ աղօթում էիր դէպի քո Հայրը, սրտի փղձկալով արտասուք թափեցիր քո աչքերից՝ նախահօր մեղքերի լուացման համար, շնորհիր մեզաւորիս ճշմարիտ զղջումն, որ ցերեկ և գիշեր

ողբալով իմ յանցանքն և խոստովանելով իմ մեղքերը, որ ամենառատ աղբիւրից ընդունեմ ներումն և թողութիւն։

Երբ պատարագիչ քահանայն հրապարակաւ խոստովանւում է Աստուծոյ և ամեն սրբոց և ժողովրդոյ առաջին իւր մեղքերի համար թողութիւն խնդրելով։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, երբ որ սաստկացաւ քո ցաւերն՝ արեան կաթիլ թափեցիր քո մարմնից, շնորհիր մեղաւորիս՝ որ քո չարչարանքների պատուի համար, արիւնի փոխարէն՝ արտասուքի աղբիւր թափեմ իմ աչքերից։

Ապա հետևեալ Սաղմոսն խՌ. «Մարդ առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած» ասելով ելնում են Սեղանը։

ԱՂՕԹՔ.

Այս սուրբ տանս և փառաբանութեան տեղւոյս մէջ, որ հրեշտակաց բնակարանն է և մարդոց քաւարան, Աստուածընկալ սուրբ խա-

չին և պայծառացեալ նշաններին և սուրբ Սեղանիս առաջին խոնարհելով, երկրպագութիւն ենք տալիս քեզ, ով Տէր, և քո սուրբ հրաշալի և յաղթող յարութիւնդ (կամ Տէրութիւնդ) օրհնում ենք ու փառաւորում ենք, և երկնային զօրաց (հրեշտակների) հետ օրհնութիւն ու փառք ենք մատուցանում քեզ՝ Հօր և սուրբ Հոգւոյն հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ապա Սեղանն ծածկում են վարագուրով, դպիրները մեղկի են երգում ըստ պատշաճի աւուրն, և պատարագիչ քահանայն նուիրեալ հացը և գինին պատրաստում է Սկիհի մէջ ծածուկ աղօթելով։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, որ իմ փրկութեան համար քաղցրութեամբ և հեզութեամբ անդորրապէս խօսեցիր քո դաւաճանող թշնամիների հետ, շնորհիր մեղաւորիս՝ որ իմ կեանք տուողիդ օրինակի նման՝ իմ բոլոր հալածողների և տողների հետ համբերութեամբ և երկայնմտութեամբ վարուիմ քո սուրբ անուան փառքի համար։

Երբ վարագոյրը բացւում է, քահանայն խնկարկում է սեղանի շուրջը, և սեղանից իջնելով խնկարկում է ժողովրդոց մէջ, և կրկին եկնում է Սեղանն, որ է նշանակ Քրիստոսի երկնքէն յերկիր իջնելու, և մարդոց հետ շրջելու և մանելու երկինքը։ Սոյն միջոցին դպիրներն երգում են «Յայս յարկ նուիրանաց» խնկարկութեան շարականը։

ԱՂՕԹՔ.

Խոստովանում եմ և հաւատում ամենակատար, ինքնակատար, և նախակատար, համագոյ և պաշտելի, երկրպագելի և գերագոյն ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայր և Որդի և սուրբ Հոգին։ Հայր անծին և անսկիզբն՝ Որդւոյ ծնող և սուրբ Հոգւոյ յառաջ առաքող։ Իսկ Որդին ծնուած Հօրից յառաջ քանթէ յաւիտեան անմարմնաբար և անժամանակապէս։ Եւ սուրբ Հոգին ելեալ Հօրից անհատաբար և անսպառապէս. Հօր համագոյակից և Որդւոյ փառակից։ Միութեամբն բաժանուած երեք անձինք, և Երրորդութեամբն միացած մի ընութեան և մի Աստուածութեան մէջ։ Եւ արդ աղաչում ենք քեզ երկնաւոր Հայր, քո միածին Որդւոյ միջնորդութեամբը, և սուրբ Հոգւոյ գթութեամբ տուր մեզ, Տէր, զգաստութեան հոգի, խորհրդոյ հոգի, հեզութեան հոգի, զօրութեան հոգի, իմաստութեան հոգի, գիտութեան հոգի, երկիւղի և աստուածպաշտութեան հոգի և լցրու ամեն բարեգործութեամբ, որպէս զի քո կամքը կատարելով այս աշխարհիս մէջ, Քրիստոսի շնորհքովն արժանի լինենք քո ողորմութեանը հանգերձեալ կեանքի մէջ. նորա հետ քեզ և սուրբ Հոգւոյդ վայել է փառք, պատիւ և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, որ հեզութեամբ և խոնարհութեամբ համբերեցիր դպիրների և փարիսեցւոց դառոզութեանը և սպառնալիքներին իմ փրկութեան համար, շնորհիր մեզաւորիս, որ երկայնմտութեամբ համբերեմ իմ երևելի և աներևոյթ թշնամեաց ամեն անարգանքների դէմ։

Ամեն անգամ որ սարկաւագն ասում է, Աստուծոյ երկրպագեսցուք, բոլոր ժողովուրդը պէտք է խոնարհի և երկրպագութիւն տայ Աստուծոյ՝ խաչակնքելով։ Եւ ապա դպիրներն երգում են շարական ըստ պատշաճի։

ԱՂՕԹՔ.

Իւղ թափուած անուն, ով Աստուծոյ Միածին Որդի ճշմարիտ Աստուած, որ հայրական ծոցոյ անճառելի փառքից խոնարհեցար, և սուրբ և անշաղախ Մարիամ կուսիցը մարմին առիր, ճշմարտապէս մարդ եղար. անփոփոխելիդ էութեան մէջ, մարդկային ամեն կրից մէջ անցնելով բացի մեղքերից, երկրի վերայ երևացիր և մարդկանց հետ շրջեցիր. և ամենն օրինաց համեմատ կատարեցիր, դու մարդարէից և օրինաց լրումն գոլով, քո Աստուածութեան անիմանալի և անհասանելի անուշահոտութիւնը բուրեցիր աշխարհի մէջ, մասնակից անելով բոլորին քո երկնաւոր և առատաբաշխ պարգևիդ, որի հետ կցուելով զմայլած անմահացան բոլոր մարդիկ։ Եւ արդ՝ դու նոյն ինքն բարերար և բազումողորմ, բաց իմ մտքի ճաշակն, որ հոտ առնեմ քո Աստուածութեան մարմնի անուշահոտութիւնից, և ընդունիր մեր աղօթքն ինչպէս անոյշ խունկ, և որպէս Աբելի, Նոյի և Աբրահամու պատարագն, և ինչպէս քո անուան սիրողների և սրբոց բանաւոր պատարագները, որ սկզբից

հաճոյ են եղած քեզ, որոց մասին և մեզ լինի ժառանգութիւն Միածնիդ շնորհքովն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ սարկաւագն քահանայի ձեռքից առնելով ս. Աւետարանը, շրջարկրում է ժողովրդեան համբուրելու համար, այն ժամանակ դպիրներն երգում են Սուրբ Աստուածն (երկք անգամ) խաչակընքելով։

ԱՂՕԹՔ.

Սուրբ Աստուած անմահ և հզօր, որ փառաբանուած պաշտւում ես հրեղէն և անմարմին հրեշտակներից. անլռելի և անդադար օրհնաբանութեամբ։ Նոյն երեքսրբեան երգն սոսկալի և ահեղ ձայնով երգում են Սերովբէքն օրհնելով քո անմահ Տէրութիւնդ, և Քերովբէքը գովասանական ձայնով փառաւորում են քո մեծազօր Աստուածութիւնդ, և ամեն երկնային զօրութիւնքը երկրպագութեամբ գոհաբանում են, փառաւորելով քո ամենազօր թագաւորութիւնդ։ Որոց հետ և մենք քո բանաւոր հօտ և քո անարատ ձեռաց ստեղծուածներս, ժողովուած քո սուրբ Եկե-

ղեցւոյ գաւթում կալով աստուածընկալ սուրբ սեղանիս առաջ, տկար անձով և մեղաւոր շրթունքներով երգում ենք երեքսրբեան սրբասացութեամբ երգեր, և աղաչում ենք քո առատաբուղխ գթութիւնդ, ընդունիր մեր շրթունքների պտուղն և մեր սրտերի բանաւոր պատարագը քո հաճոյից համար՝ հրեշտակաց արժանաւորութեան պէս, և թող մեզ մեր կամայ և ակամայ, գիտութեան և անգիտութեան, մտքի և խորհուրդների, խօսքերի և գործքերի, հոգւոյ և մարմնոյ, և ամեն անգամոց մասունքների բոլոր յանցանքը, որպէս զի կարողութիւն լինի մեզ արժանապէս օրհնել քեզ և գովել քո սուրբ անունը։ Տո՛ւր մեզ, ո՛վ Տէր, մտաց մաքրութիւն, սրտից զղջումն, շրթունքների ճշմարտութիւն, աչաց արտասուք, հոգւոյ անարատութիւն և մարմնոյ սրբութիւն, լցրու մեզ ամեն առաքինութեամբ, պայծառ հաւատով, աներկբայ յուսով և մաքուր սիրով։ Եւ զարդարիր մեզ խոհեմութեամբ, ողջախոհութեամբ, արիութեամբ և արդարութեամբ։ Զօրացրու մեզ յաղթող լինել սատանայի հնարքների դէմ, և

չարի ամեն կրակոտ նետերը շիջուցանել, արդարութեամբ և աստուածպաշտութեամբ կալ մնալ աշխարհիս մէջ քո հաճոյից և կամաց պէս, և այս կեանքից յետ անճառ բարիքը վայելել մեր Տիրոջովն, որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, որ իմ համար անարգուեցար և ծաղր եղար անօրէններից, շնորհիր մեղաւորիս՝ որ քո սուրբ չարչարանաց օգնութեամբը փրկուիմ սարսափելի հրապարակի խայտառակութիւնից։

Ապա աւուր պատշաճի Ս. Գիրքն և Աւետարանը կարդացւում է, որոց պէտք է ժողովուրդն ուշադրութեամբ ականջ դնէ։ Եւ յետոյ կը կարդան Հաւատամքը, նոյնպէս ամենքը միաբերան և ձեռնամած, որ է նշան անկեղծ խոստման՝ նոյնիսկ հաւատոյ դաւանութեան մէջ հաստատ մնալու։

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՑ.

Հաւատում ենք մի Աստուած, ամենակալ Հօրը, երկինքն ու երկիրը երևելիների և աներևոյթների Ստեղծողին։

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդւոյն, որ Հայր Աստուածանից է ծնել Միածին, այսինքն Հօր էութիւնիցն է, Աստուած է՝ Աստուածանից, լոյս է՝ լոյսից, ճշմարիտ Աստուած է՝ ճշմարիտ Աստուծուց ծնած՝ և ոչ թէ ստեղծուած: Նոյն ինքն Հօր (Աստուծոյ) բնութիւնիցն է, որով ամեն բան եղաւ երկնքի մէջ և երկրիս վերայ, երևելիներ և աներևոյթները: Որ մեզ մարդկանցս համար և մեր փրկութեան համար, երկնքից իջնելով, մարմին առաւ, մարդ եղաւ, և ծնաւ կատարեալ կերպով սուրբ կոյս Մարիամիցն սուրբ Հոգւովն: Որով (Ս. Հոգւով) առաւ մարմին, հոգի և միտ, և ամենն՝ ինչ կայ մարդոյս մէջ, ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով: Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ և նոյն մարմնովն երկինքն բարձրանալով Հօր աջ կողմը նստաւ: Պէտք է գայ նոյն մարմնով և Հօր փառքով, կենդանիներին ու մեռածներին դատելու համար, որի թագաւորութեանը վերջ չկայ:

Հաւատում ենք սուրբ Հոգւոյն, որ անեղ (անըստեղծ) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրինաց և Մարգարէից գրքերի և Աւետարանների միջոցով: Որ Յորդանան գետն իջաւ, Առաքելին (Քրիստոս Աստուածանից ուղարկուածին) քարոզեց, և սուրբերին մէջ բնակուեցաւ:

Հաւատում ենք, նաև միմիայն Ընդհանրական և Առաքելական եկեղեցւոյն, մի Մկրտութեան, Ապաշխարութեան, Մեղաց քաւութեան ու թողութեան, մեռելների Յարութեան, հոգւոց և մարմնոց վերջին Դատաստանին, երկնքի Արքայութեան, և Յաւիտենական կեանքին:

(Մինչև այստեղ են Հաւատոյ դաւանութիւնք:)

Իսկ նորանք որոնք ասում են թէ կար ժամանակ՝ երբ չկար Որդին Աստուծոյ, կամ ասում են թէ կար ժամանակ՝ երբ չկար ս. Հոգին, կամ ասում են Աստուծոյ Որդին կամ սուրբ Հոգին ոչընչից գոյացան, և Հօր Աստուծոյ էութիւնից չեն, այլ ուրիշ էութիւնից եղած են, և կամ թէ կարող են փոփոխուել և այլայլել: Այսպիսի խօսքեր ասողներին նզովում է Կաթուղիկէ և Առաքելական ս. եկեղեցին:

Աստուած է մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչից.

Իսկ մենք փառաւորում ենք յաւիտենից առաջ եղողին երկրպագելով սուրբ Երրորդութեան և մի Աստուածութեանը Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւետենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Աղօթքի ձևով.

Հաւատով աղաչում ենք ու խնդրում քեզանից այս աղօթքի և պաշտամունքի ժամիս, ով մեր Տէր Աստուած և Փրկիչ Յիսուս Քրիստոս: Ընդունելութեան արժանի արա և լսիր մեր աղաչանաց ձայնը: Մեր սրտերի խնդրուածքն ընդունիր, թողութիւն տուր մեր յանցանաց, և ողորմիր մեր վերայ: Մեր աղօթքն ու խնդրուածքը՝ ամեն ժամանակ քո մեծ Տէրութեանդ առաջ թող մտնեն, և տուր մեզ, միաբերան, մի հաւատով, արդարութեամբ բարի գործերի մէջ աշխատել. և քո ողորմութեանդ շնորհքը արա մեր վերայ, ով Տէր ամենակալ, ապրեցրու և ողորմիր:

— Կեցո՛ Տէր:

Խաղաղութեամբ անցուցանել այս սուրբ

Պատարագիս ժամը և առաջիկայ օրս:

— Շնորհիր Տէր:

Քո խաղաղութեան հրեշտակդ, որ մեր անձերին պահապան լինի: — Շնորհիր Տէր:

Քո սուրբը խաչիդ մեծ և կարող զօրութիւնը՝ որ մեր անձերին օգնական լինի:

— Շնորհիր Տէր:

Նաև միաբան մեր ճշմարիտ և սուրբ հաւատոյս համար, աղաչում ենք քեզ Տէր:

— Տէր ողորմիր:

Մեր անձերն և մէկզմէկ յանձնում ենք ամենակալ Տէր Աստուծոյն:

— Քեզ Տիրոջդ ենք յանձնում:

Ողորմիր մեզ, ով մեր Տէր Աստուած, քո մեծ ողորմութեանդ համեմատ, միաբանութեամբ ասենք ամենքս:

— Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր:

ԱՂՕԹՔ.

Համաձայնութեամբ քահանային, որ աղօթում է ծածուկ.

Ո՛վ Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծ ես քո ողորմութեամբդ, և առատ ես բարերարութեանդ պարգևներով: Որ մեր մեղաց

քաւութեան համար, այս ժամիս մէջ քո կամքովդ համբերեցիր չարչարանաց, խաչի և մահուան, և առատապէս պարգևեցիր քո սուրբ Հոգւոյդ պարգևներն երանելի Առաքեալներին, աղաչում ենք քեզ Տէր, մասնակից արա և մեզ քո Աստուածային պարգևներիդ, մեր մեղաց թողութեանը և սուրբ Հոգւոյդ ընդունելութեանը։ Որպէս զի արժանի լինենք զոհանալով փառաւորել քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ քահանան դառնում է դէպի ժողովուրդն ասելով խաղաղութիւն ամենեցուն, և ապա աղօթում է ձայնով։

ԱՂՕԹՔ.

Քո խաղաղութեամբդ, ով Քրիստոս մեր փրկիչ, որ մտքից և խօսքից շատ վեր է, ամուր և աներկիւղ պահիր մեզ ամեն չարից, հաւասարիր մեզ քո ճշմարիտ երկրպագողներիդ հետ, որք հոգւով ու ճշմարտութեամբ քեզ երկրպագութիւն են անում, վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելում է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտ։

Երբ քահանայն սաղմոսարան և հոգեթափները հանում է ի պատիւ Ս. Խորհրդոյն և աղօթում է ի ծածուկ, սարկաւագն ևս ընծայեալ հացն ու գինին Սկիհով վերաբերում է դէպի քահանայն, որ նշանակում է մեր Տէր Յիսուսի Երուսաղէմ մըտնելն յաղթական փառքով։ Եւ գոլիրներն ի ծունկս անկեալ երգում են Սրբասացութիւն՝ ըստ խորհրդոյ աւուրն, նաև ժողովուրդն ի ծունր իջանելով աղօթում է Սրբասացութեան երգի համաձայն։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ և բան Հօր, որ քո անճառ բարերարութեանդ համեմատ չըկամեցար անտես անել քո ձեռքի արարածները, այլ մարդասիրապէս գթացիր մարդկան ազգին։ Էգ Աստուած, խոնարհեցար հայրական ծոցից, մարմին առար սուրբ կոյս Մարիամից՝ Հօր կամքով և սուրբ Հոգւոյ հաճութեամբը, ամեն մարդկային կիրքը յանձն առար կրել առանց մեղքի, և քո աստուածային մարմինդ փրկութեան գինն տուիր բազմաց փոխարէն, քո առաջատաց ճշմարիտ հրամանի պէս համբերելով խաչի և մահու։ Հովհէդ քաջ, քո անձը դրիր քո բա-

նաւոր հօտի վերայ, ժողովել ցրուածները քո կաթուղիկէ սուրբ եկեղեցւոյ փարախի (իջևանի) մէջ, լինել մի հօտ և մի հովիւ, վասն որոյ և մենք ժողովուրդներ և քո արօտի ոչխարները՝ երկրամած դէմքով խոնարհուած և ծունկերի վերայ ընկած աղաչում ենք քո անբաւ մարդասիրութիւնդ, մի՛ թողուր մեզ քո ձեռքիցը, և մի՛ անտես աներ քո սուրբ արիւնով գնուած հօտը, մի՛ տար մեզ մեր հակառակ թշնամուն փորձելու, սրբիր մեզ մեղքից, և մաքրիր մեզ մեր ամեն անօրէնութիւններից, լուա՛ մեր սիրտն չար խղճից, և փրկիր մեզ անիրաւութիւններից, լոյս տուր, Տէր, մեր աչքերին, որ երբէք չը քնենք մահուան մէջ, և չը լինի թշնամուն պարծանաց տեղի, այլ քո ամենայաղթ խաչի զօրութեամբը խորտակուած ջախջախուի նորա գլուխը, և նորա մեքենայից զօրութիւնները տկարանան։ Եւ տո՛ւր մեզ առանց արգելքի և բռնադատութեան կատարել մեր կեանքը ամեն արդարութեամբ հետևելով լուսաշաւիղ և երկնագնաց ճանապարհին, դալարի տեղում բընակեցրու մեզ, և հանգստեան ջրի մօտ զար-

գացրու, որ տեսնի թշնամին և ամաչի, որովհետև քո ստեղծած և քո փրկուածն ենք, դու ես մեր օգնական և փրկիչը, որովհետև բացի քեզանից ուրիշ ոչ ոք չենք ճանաչում, և քո անունը, Տէր, կարդում ենք ամեն օր, մի՛ թողներ քո ժառանգութիւնը քո ձեռքիցը, այլ քո ամենազօր աջը՝ հովանի և պահապան լինի քո պաշտօնէից վերայ, սուրբ Աստուածածնի և քո բոլոր սուրբերի բարեխօսութեամբ, քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, որ ինձ համար փշով պսակուեցիր, և եղեգով ծեծուեցիր հրէաներից. շնորհիր մեղաւորիս, որ քո սուրբ չարչարանքների զօրութեամբը փրկուեմ մեղաց փշերից՝ և մերկանամ ամեն չարութեան զգեստները, և լինեմ քեզ ճշմարիտ երկրպագող մինչև իմ կենաց վերջը։

Քահանան սեղանի առաջ իւր մատները լուանում է, որ նշանակում է՝ թէ իւր բոլոր ներքին և արտաքին մեղքերից սրբուելով պէտք է մօտենայ սուրբ խորհրդին։

ՔԱՐՈԶ

Աղօթքի ձեւով.

Եւ առաւել հաւատով և մաքրութեամբ և երկիւղիւ աղօթքի կենանք Աստուծոյ այս սուրբ սեղանի առաջ, ոչ խղճիւ և ոչ գայթակղութիւն տալով, ոչ նենգութեամբ և ոչ խորամանկութեամբ, ոչ խաբելով և ոչ խաբեբայութեամբ, ոչ երկու մտքի լինելով և ոչ թերահաւատութեամբ: Այլ բարի վարքով, պարզ մտքով, միամիտ սրտով և կատարեալ հաւատով, և սիրով, և ամեն բարի գործերով լցուած: Աղօթքի կենանք Աստուծոյ սուրբ սեղանի առաջ, որպէս զի իւր ողորմութեան շնորհքն ընդունենք, և մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսի յայտնութիւն և միւսանգամ գալստեան օրը. ապրեցնի և ողորմի:

Ողջոյնի ժամանակ ժողովուրդն ի նշան եղբայրական սիրոյ և հաշտութեան, ողջոյն են տալիս միմեանց գլուխներն խոնարհեցնելով, ողջոյն աւոդն ասում է, Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, և ողջոյն ընդունողն պատասխանում է, օրհնուած է յայտնութիւն Քրիստոսի:

ԱՂՕԹՔ.

Աստուծոյ և մարդկան միջնորդ, ով Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ քո ամենաբարի և խաղաղարար միջնորդութեամբը հաշտեցրիր Հօրը արարածների հետ, և խաղաղութիւն արիր երկնաւորներին և երկրաւորներին, հեռաւորներին և մերձաւորներին. և նոյն խաղաղութիւնը շնորհեցիր քո Եկեղեցւոյն ասելով, խաղաղութիւն եմ թողնում ձեզ. իմ խաղաղութիւնը տալիս եմ ձեզ: Եւ այժմ, Տէր, աղաչում ենք քեզ՝ քո երկնաւոր և հաշտարար խաղաղութիւնը պարգևիր մեզ, որ խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարենք մեր կեանքն առանց մեղքի և առանց գայթակղութեան, և սուրբ սրտով սիրենք իրար, ինչպէս դու սիրեցիր մեզ. դնել անձն ընկերի վերայ, ինչպէս դու դրիր. և գթած լինել իրար, քաղցր և բարերար, ինչպէս դու արիր. հնազանդութեամբ և խոնարհութեամբ ծառայել միմեանց, ինչպէս դու խոնարհեցար քո աշակերտների ծնկներին, որով պատշաճապէս անդամ և մարմին լինել մեր Գլխիդ: Եւ

դու, Տէր, ասացիր, թէ ուր երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինեն, ես այն տեղ նորանց մէջն եմ։ Վասն որոյ և մենք ժողովուած քո անունովը քո սուրբ կաթուղիկէ և առաքելական Եկեղեցւոյ դաւթումը, և Աստուածային սուրբ ողջունովս եղանք մի անձն և մի սիրտ, սուրբ Առաքեալների պէս։ Լսիր մեր աղաչանքին, ով մարդասէր Տէր, և բնակուիր քո անունով ժողովուածներիս սրտի և հոգու մէջ։ Սրբիր, մաքրիր և պատրաստիր մեզ տաճար և բնակարան լինել քո ամենազօր շնորհայն, հեռացրու մեզանից թշնամու ամեն խորամանկութիւններ և նենգութիւնները, որ սուրբ սրտով և մաքուր մտքով, երկիւղով և արդարութեամբ ամեն օր փառաւորենք քո ամենազօր անունը. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, որ քո կենարար չարչարանքովդ պատճառ եղար անիրաւ դատաւորների հաշտութեանը, շնորհիր մեղաւորիս, որ հեռացնեմ ամեն խռովութիւններ և ոխակալութիւններն ընդդէմ իմ բոլոր

հաւատացեալ եղբայրներին, սիրով և խաղաղութեամբ կենցաղավարուիմ։

Երբ քահանայն ասում է Երկաբերանն, այն ժամանակ դպիրներն երգում են Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանցը, որ նշանակում է Ս. Երրորդութեան խորհուրդը։

ԱՂՕԹՔ.

Երեք անգամ ծունր դնելով.

Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ, ո՛վ զօրութեանց Տէր, երկինքն ու երկիրը լիքն են քո փառքովը, Սերովբէքն հրաշալի և հոգեղէն բարբառով աղաղակում են քո Աստուածութեան փառաց աթոռի առաջին, քանզի զարհուրում են քո հիանալի և հրաշալի փառքիցը. կարողութիւն չունենալով արժանապէս փառաւորելու քո անհասանելի մեծութիւնը։ Վասն որոյ անլռելի և անդադար օրհնաբանութեամբ փառաւորում են միասնական Աստուածութիւնդ, պաշտելի և համագոյ Երրորդութիւնդ։ Արդ եթէ հրեղէնքն և իմանալիքն բաւական չեն քո անչափութեանը, մենք հողեղէնքս և երկրի մէջ կործանուածներս՝ ինչպէս ենք կարող

խօսքով բովանդակել քո անչափ զթութիւնը դէպի արարածներն, և մանաւանդ դէպի մարդկան ազգը, որ նախ սկզբումը քո արարչագործ ձեռքովդ ստեղծեցիր մեր նախահայր Ադամին, պատուելով նորան աւելի քան ուրիշ արարածներին, որ միայն խօսքով ստեղծեցիր, և պատուիրանազանցութեամբ պտղի ճաշակելուցն յետ, անտես չարիր ընկած ընութիւնը, այլ օրէնք տուիր և մարգարէներ ուղարկեցիր յայտնելով օգուտն, բայց սատանայից խաբեւողներն չը ճանաչեցին քո բարերար կամքի խորհուրդն։ Ապա երկնաւոր Հայրդ ուզելով յայտնել անճառելի սէրդ սուրբ Հոգւոյդ կապակցութեամբը ուղարկեցիր ծոցածին և Միածին Բանդ, որ եկաւ մարմնացաւ սուրբ կուսից, և նոյն մարմնովը համբերեց խաչի և մահու չարչարանքներին, և եղաւ մեր մեղաց քաւութիւն։ Վասն որոյ մենք Սերովբէից հետ երգում ենք նորան ասելով, Սուրբ, Սուրբ, Սուրբ, զօրութեանց Տէր, երկինքն ու երկիրը լիքն են քո փառքովը, օրհնութիւն բարձրումը, օրհնուած է քո աշխարհ գալը, ով Քրիստոս Աստուած՝ մեր փրկութեան համար, օրհնուած է քո կենսաբեր տնօրէնութիւնը, օրհնուած է քո փրկարար չարչարանքը, որով ազատուեցինք չարչարանքից, և մեր վիճակն եղաւ անչարչարութիւն։ Օրհնուած է քո կենդանարար մահն, որով փրկուեցինք դառն մահից, և վերափոխուեցինք երկնքի արքայութեան մէջ, որ մշանջենական զոհաբանութեամբ փառք և երկրպագութիւն մատուցանենք Բարերարիդ Փրկչիդ և նորոգողիդ. յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ քահանայն ասում է. Առէք կերէք, դպիրներն զլուխ խոնարհեցնելով ասում են. Ամէն։

ԱՂՕԹՔ

Ծանրաբարութեամբ.

Օրհնուած է կենաց պարգևատուն, և անմահութեան պարգևը, մեր Քրիստոս Աստուածը։

Երբ քահանայն ասում է. Սրբէք ի սմանէ ամենեքեան, դպիրներն ևս զլուխ խոնարհեցնելով ասում են. Ամէն։

ԱՂՕԹՔ
Ծննդաբերութեամբ.

Օրհնուած է ձրի շնորհն և անապական պարգևը, մեր Քրիստոս Աստուծոյ կենդանի և կենդանարար Մարմին և Արիւնը։

Երբ դպիրներն երգում են. Հայր երկնաւորը։

ԱՂՕԹՔ.
Երկրպագութեամբ.

Ո՛վ երկնաւոր Հայր, բարերար և բազումողորմ Աստուած, բարեաց տուող և կենդանութեան պարգևող. որ ամենաբարի բնութեամբդ յաղթուեցեր մարդասիրութիւնից, այնպէս որ համագոյակից և արարչակից, աթոռակից և հաւասարակից Բանդ ուղարկեցեր աշխարհ, որ մարմին առնի սուրբ կուսից, և նոյն անմեղ և անպարտական մարմնովը՝ գին և փրկանք եղաւ ամեն աշխարհի, որովհետև տուիր նորան զոհ լինել, մեռանիլ և փրկութիւն լինել քո մեծ անուան բոլոր հաւատացեալների համար։ Եւ այժմ աղաչում ենք

քեզ քո Միածնի Մարմնոյ և Արեան միջնորդութեամբը՝ նայիր նորա սուրբ արեան հեղմանն, և նորա անշնչութեանն խաչի վերայ. նորա փրկական աղբերաց բացմանն, և նորա սուրբ մարմնի արիւնով թաթաւումն. և քո բարերարութեամբդ հեռացրու մեզանից մեր յանցանքի պատժի սաստկութիւնը. քանզի նորա փրկուածն ենք. խնայիր քո Միածնի սուրբ արեան գնուածներիս, և ողորմիր քո բանաւոր հօտին՝ քո անուան յուսացեալներին։

Երբ դպիրներն երգում են, Ցամենայնի օրհնեալ ես Տէրն։

ԱՂՕԹՔ.

Արժանապէս օրհնում ենք զքեզ, և արդարապէս գովում ենք և գոհանում ենք քեզանից, ո՛վ մեր Տէր Աստուած, որ քո բազում ողորմութեան պէս անտես արիր մեր անարժան գործերը, և արժանի կարգեցիր այս շնորհին, քո Միածնի Մարմնոյ և Արեան միջնորդութեան համար, մասնակից արա քո Աստուածութեան փառքին, միաւորելով քո Գե-

բապատիւ ճոխութեանդ հետ։ Վասն որոյ բոլորովին օրհնում ենք, և ամեն մասամբ ամեն օր գոհանում ենք քեզանից, ով Տէր Աստուած մեր, ողորմիր մեզ։

Որդի Աստուծոյ երդելու ժամանակ քահանայն երկրպագելով՝ Հօր և Հոգւոյն սրբոյ զօրութիւն և ներկայութիւնն է հայցում խորհրդաւոր բանիւք, և խաչակնքելով օրհնում է նուիրեալ հացն ու գինին, որ փոխարկուին ի Մարմին և յԱրիւն Քրիստոսի։

ԱՂՕԹՔ

Երկրպագութեամբ.

Ո՛վ կենաց հայր և անմահութեան բաժակ, Աստուծոյ միածին Որդի, մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած, երկնային Մանանայդ իջած վերուստից. եղար կերակուր քո բոլոր հաւատացեալներին, քո արեան թափուելովն ողորմիր քո բանաւոր հօտին, թողութիւն շնորհելով հաւատացեալների մեղացն, մահուան օրը փրկութիւն եղիր հաւատացեալներին, և քո սուրբ Մարմին և Արիւնն

տրժանապէս ճաշակողներին։ Յիշիր քո փրկարար չարչարանքն և կենատու մահը, արիւնով ճապաղուելն խաչի վերայ և անտանելի կիրքերն, որ ընդունեցիր քո մարմնի մէջ մեզ համար։ Նայիր քո արարչագործ ձեռքերի և ոտքերի խոցուածներին, և կենարար աղբիւրի բացմանն՝ որով նորոգուեցին բոլոր աշխարհք և խմեցին արարածները։ Նոյն աղբիւրովն լուա և մաքրիր մեզ մեր բոլոր մեղքերիցը, և թող մեզ մեր ամեն յանցանքը։ Խնայիր քո արեամբ փրկուած հօտին, և այց արա մեզ քո միւսանգամ գալստեան արքայութեան մէջ, քանզի մահուամբ և չարչարանքով փրկեցիր, ով Քրիստոս Աստուած մեր բարերար և նորոգող, և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ դպիրներն երգում են, Հոգի Աստուծոյն։

ԱՂՕԹՔ.

Երկրպագութեամբ.

Ո՛վ Աստուծոյ Հոգի՝ ճշմարիտ Աստուած, որ նախ սկզբումը շրջում էիր ջրերի վերայ,

և ստեղծում էիր արարածները ոչնչուց. և և պէս պէս հրաշքներ գործեցիր մարգարէների օրերումը, և քո Էակցի տնօրէնութեան ժամանակում՝ իջար Յորդանան և վերնատունն. բազմապատիկ շնորհքներով լցրիր Առաքեալներին։ Եւ այժմ աղաչում ենք քեզ, քո փառակցի սուրբ Մարմնոյ և Արեան միջնորդութեամբը, որ բազմած կայ սուրբ Սեղանիս վերայ, իջիր մեր սրտի և հոգւոյ մէջը, և մաքրիր մեզ ինչպէս Առաքեալները՝ սուրբ վերնատան մէջ, և բորբոքիր մեզանում Աստուածութեանդ սիրոյ կայծը, որ արժանապէս տաճար և բնակարան լինենք քեզ և Էակից փառակիցներիդ, և քո ամենազօր շնորհքովը փրկուած լինենք մեր նորոգման օրումը, և քեզ նորոգողիդ Աստուծոյ վայելում է փառք յաւիտեանս. ամէն։

Դպիրներն Առաքելոցի մէջ յիշատակում են բոլոր Սուրբերին, ի նշան երկնաւոր և երկրաւոր Եկեղեցւոյ միութեան։

ԱՂՕԹՔ.

Յիշիր, ո՛վ Տէր, և ողորմիր, և օրհնիր

քո սուրբ Եկեղեցւոյ ուխտ և ժառանգութիւնը. և շնորհիր մեզ քո երկնային խաղաղութիւնը, որ չը լինի մեզանում տեղ և մուտ չարին. հեռացրու մեզանից թշնամու ամեն խարդախութիւնը, և նորա ուժգնութիւնը խորտակիր բարեխօսութեամբ և յիշատակաւ սուրբ Աստուածածնին, և սուրբ Յովհաննու Կարապետին, և սուրբ Ստեփաննոսի Նախավկային, և սուրբ Գրիգոր մերոյ լուսաւորչին, և սրբոյ Առաքելոց, Մարգարէից, և սուրբ Հայրապետաց, Մարտիրոսաց, Ճգնաւորաց, Կուսանաց, և քո բոլոր երկնաւորաց և երկրաւորաց սրբոյ, որոյ յիշատակն ևս օրհնութեամբ լինի սուրբ Եկեղեցւոյս և սուրբ Պատարագիս մէջ. ամէն։

Յիշիր, ո՛վ Տէր, քո պաշտօնեաներին, մեր ծնողներին, վարդապետներին, եղբայրներին, ընկերներին, կերակրողներին, ուխտաւորներին, ճանապարհորդներին, հանգստացողներին, վաստակաւորներին, խոստովանողներին, ապաշխարողներին, գերուածներին, հիւանդներին, նեղացածներին, իշխաններին, չարարարներին, բարերարներին, թշնամիներին, ատելիներին,

և նրանց սրոնք պատուէրներ տուին մեզ հաւատով, լիշիր, Տէր, և ողորմիր։

Դպիրների հետ ժողովուրդն ևս պէտք է միաբերան ասի Գոհութիւնը։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Աղօթքի ձևով.

Գոհութիւն ու փառաբանութիւն ենք մատուցանում քեզ՝ ո՛վ մեր Տէր Աստուած, այս սուրբ սեղանիս վերայ մատուցուած սուրբ և անմահ Պատարագիս համար, որ մեր սրբութեան ու կենդանութեան համար պարգևեցիր մեզ։ Այս սուրբ Պատարագով շնորհիր սէր և հաստատութիւն և փոփոքելի խաղաղութիւն բոլոր աշխարհի, և սուրբ Եկեղեցւոյն և ամեն ուղղափառ Եպիսկոպոսներին, և Եպիսկոպոսապետին ու պատուական Հայրապետին ամենայն Հայոց. Տէր (այս անուն) Կաթուղիկոսին, նաև սրբազան Առաջնորդին սրբոյ Եկեղեցւոյս (այս անուն) Սրբ Եպիսկոպոսին, և այս պատարագս մատուցանող քահանային։ Աղաչում ենք և խնդրում

ենք, քրիստոնեայ թագաւորների և բարեպաշտ իշխաններին համար ևս, որ զօրաւոր և յաղթող լինեն. աղաչում ենք նաև մեր ննջեցելոց հոգւոց համար, մանաւանդ հանգուցեալ Հայրապետների և այս սուրբ Եկեղեցին շինողների, և ամենեցուն համար, որ Եկեղեցւոյս հովանւոյն տակ ննջած են, ազատութիւն տուր մեր գերի ընկած եղբայրներին, և առաջնիկայ ժողովուրդին շնորհք պարգևիր։ Հանգստութիւն շնորհիր հաւատով ու սրբութեամբ ի Քրիստոս կեանքները վերջացնողներին, և թող լիշատակուին նոքա այս սուրբ Պատարագիս մէջ։

Դպիրները և ժողովուրդն պէտք է միաձայն երգեն. Մեր Հայր՝ Տէրունական աղօթքն։

Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի քո անունդ, քո թագաւորութիւնդ գայ, քո կամքդ թող կատարուի. ինչպէս որ երկնքումը՝ այնպէս էլ երկրիս վերայ։ Մեր ամեն օրուայ հացը՝ տո՛ւր մեզ այսօր. և թող մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք թողնում ենք

մեր պարտականներին։ Եւ մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ փրկիր մեզ չարիցը։

Այս ժամանակ քահանայն խոնարհում է ինդրելով սուրբ Հոգուցն՝ որ խոնարհելով ողորմի երկրպագութիւն անող ժողովրդոյն, և շնորհք տայ նոցա յաւիտենական կենաց բարիքն ժառանգելու համար։ Եւ ապա բարձրացնելով Սկիհն ասում է քահանայն, ի Սրբութիւն սրբոց, ժողովուրդն պէտք է ուշադրութեամբ նայի դէպի Սրբութիւնն, և յիշի՝ թէ Սուրբն սրբոց Քրիստոս, մեր փրկութեան համար խաչի վերայ բարձրացաւ, որ իւր հաւատացողներն առ ինքն ձգէ. (Յովհ. ԺԲ. 32)։

ԱՂՕԹՔ

Ծունրադրութեամբ.

Խոստովանում եմ իմ յուսոյ Քրիստոսի Աստուծոյ ճշմարտապէս Մարմին և Արիւն՝ որ երևացիր ինձ փրկելու համար, և աղաղակում եմ դէպի քեզ. մեղայ երկնքումն և քո առաջին, սրբիր ինձ Հոգւոյ և մարմնոյ ամեն պղծութիւնից, շնորհիր ինձ ժամանակ և ցանկութիւն ապաշխարութեան, փրկիր ինձ երևելի և աներևոյթ թշնամուցն, տպաւորիր իմ

Հոգւոյ և մարմնոյ օգուտն։ Պարգևիր ինձ բարեգործութեամբ և բարեպաշտութեամբ արժանապէս ճաշակել քեզ, և փառաւորել Հայր և Որդի և սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ քահանայն ի Սուրբ ի Սուրբ ասելով դառնում է դէպի ժողովուրդն, Սկիհով խաչակնքում է ժողովրդոց վերայ, որ ծունկի վերայ խոնարհած պէտք է աղօթեն, և ապա ծածկում են վարագոյրն։

ԱՂՕԹՔ

Ծունրադրութեամբ.

Խոստովանում և հաւատում եմ, որ դա է ճշմարիտ Մարմին և Արիւն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Որդւոյն, որ բառնում է աշխարհի մեղքը։

Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս, երբ որ ինչպէս խաչիցը՝ հանգստուեցիր քո անարատ մայր Մարիամու գրկումը, և հաճեցար թրջուիլ նորա կուսական արտասուաց ցողովը, շնորհիր մեղաւորիս, որ իմ մեղքով լցուած սիրտն օթևան և առագաստ պատրաստեմ քեզ իմ

կեանք տուողիդ և անդադար ողբալով համբուրեմ մարմնոյդ խոցուածները։

Երբ զպիրներն երգում են. Քրիստոս պատարագեալն։

ՍՂՕԹՔ.

Ո՛վ Աստուծոյ Միածին Որդի և Բան Հօր, երկնաւորների և երկրաւորների Արարիչ և բոլոր արարածների լցուցիչ, որ լցնում ես ամէնն ամենի մէջ։ Բնութեամբ անբովանդակելի լինելով՝ ժողովուեցիր մարմնոյ մէջ, որ տեսանելի և շօշափելի լինես մարդկային ազգին։ Վասն որոյ ճաշակելի և կերակուր եղար բոլոր հաւատացեալներին, որ յաւիտենական կեանք տաս նոցա՝ որք հաւատով և սրբութեամբ մօտենում են քեզ, ո՛վ մարդասէր, քո անսուտ խոստման պէս։ Եւ այժմ մենք քո պատուական արիւնով փրկուածներս, հաւատով տեսնում ենք մեր փրկիչդ բոլորովին ժողովուած հայի և գինւոյ՝ երկու տեսակաց ներքոյ, հոգւով մարմնով և Աստուածութեամբ, վասն որոյ երկրպագութիւն ենք մատուցա-

նում մեզ փրկողիդ, և աղաչում ենք քո անբաւ գթութիւնը։ Արձակիր մեր մեղաց կապը, և ջնջիր մեր անօրէնութեան ձեռագիրը, լուսաւորիր մեզ քո երկիւղի և սուրբ սիրոյ մէջ, որ միշտ արժանի կոչմանն գնանք՝ որի մէջ կոչեցիր մեզ։ Տո՛ւր մեզ, ո՛վ Տէր, քո բանաւոր հօտին բոլոր սրտով հետևել միայն ճշմարիտ Հովուիդ, և կատարել քո կամքը, և լսել քո երանաւէտ բարբառը, աճել օրէցօր, և պահել քո պատուիրանքը ամեն օր։ Պարգևիր մեզ սուրբ սիրտ և խնարհ հոգի, որ ամօթալի չը լինենք քո առաջին, մաքրիր մեր միտքն ու խորհուրդները, ինչպէս քո սուրբ Առաքեալներին, որ նոցա հետ արժանի լինենք, ո՛վ Քրիստոս Աստուած մեր՝ քո սուրբ և սրբարար կենդանի և կենդանարար Մարմին և Արիւնը ճաշակել և ընդունել յաւիտենից կենաց յուսովը քո բոլոր սուրբերի հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Երբ վարագոյրն բանում են. և սարկաւագն ձայնով քարոզում է. Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք, եթէ Հաղորդութեան արժանաւոր անձինք

կը դանուին, երկիւղիւ և զղջումով պէտք է մօտենան Ս. Սեղանին և հաւատով ճաշակեն։

ԱՂՕԹՔ

Ս. Հաղորդութիւն առնելու ժամանակ.

Հաւատով հաւատում եմ ամենասուրբ Երրորդութիւնդ Հայր և Որդի և Հոգի սուրբ։

Հաւատով ճաշակում եմ քո սուրբ էենարար և փրկագործ Մարմինը, ով Քրիստոս իմ Աստուած Յիսուս, իմ մեղքերի թողութեան համար։

Հաւատով խմում եմ քո սրբարար և մաքրող Արիւնը, ով Քրիստոս իմ Աստուած Յիսուս, իմ մեղքերի թողութեան համար։

Եւ ճաշակողացն յետոյ ասում է.

Քո անապական Մարմինն լինի ինձ կեանք, և քո սուրբ Արիւնը՝ մեղքերի քաւութիւն և թողութիւն. ամէն։

ԳՈՀՈՒԹԻՒՆ.

Մեր Աստուածն և մեր Տէրը երևաց մեզ, օրհնուած եկած Տիրոջ անունովը։

Ապա քահանայն ասում է. Կեցցե՛ Տէր զժողովուրդս քո, որ նշանակում է մեր Տէր Յիսուս Քրիստոսի երևալն իւր յարութիւնից յետ։ Եւ դարձեալ վարագոյրն ծածկում են։

Երբ դպիրներն երգում են. Լցաք ի բարութեանց քոց Տէր։

ԱՂՕԹՔ.

Շնորհակալ ենք քեզանից, ով ամենակալ Հայր, Միածին Որդիդ և ճշմարիտ Հոգիդ, որ ընտրեցիր սուրբ անուանդ հաւատացեալներին սրբոց վիճակի լուսոյ մէջ, և ստացար քեզ համար սեփական ժողովուրդ, և մասնակից արիր Աստուածութեանդ փառքին. և ժառանգող քո անճառ բարութեանցն, ոչ թէ մեր արժանաւորութեան համեմատ, այլ քո անբաւ գթութեան պէս, որ միշտ առատապէս շընորհում ես և չես նախատում. փոքր ես պահանջում և մեծամեծ պարգևում։ Այո՛ օրհնելով օրհնում ենք և գոհանալով գոհանում ենք քեզանից, ով մեր Տէր Աստուած, որ այս մասին արժանաւոր կարգեցիր մեզ։ Աղաչում ենք քեզ, մի՛ թողուր մեզ քո ձեռքից այսուհետև

մինչև յաւիտեան, և գայ քո ողորմութիւնը մեր վերայ մեր կենաց բոլոր օրերումը. և քո անունն օրհնուած լինի յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա վարագոյրն բանում են, և քահանայն Ս. Աւետարանն ի ձեռին վայր է իջնում աղօթելով. Որ օրհնես զայնոսիկ:

ԱՂՕԹՔ.

Օրհնում ենք քեզ, ով Քրիստոս Աստուած, և յուսացած ենք քեզ, որ և մեզ ապրեցնես փառաւորել քո ժառանգութիւնդ, պահիր և հաստատիր քո սուրբ Եկեղեցւոյ սէրը, կատարել քո ողջունի լրումը. աղաչում ենք և մեզ փառաւորիր՝ քո Աստուածային զօրութիւնիցդ մի թողուր մեզ. ով Տէր, աղաչում ենք քեզ՝ քո խաղաղութիւնդ տուր քո ամեն եկեղեցիներին, և աշխարհի, և քահանաներին, և մեր թագաւորին, և ամեն քրիստոնէից թագաւորներին, և նոցա զինուորեալ մանկանց և ամեն ժողովրդեանս: Վասն զի ամեն բարի և պարգև Աստուած Հօրից կա-

տարուած հանգստուեց քեզանում, ով Աստուծոյ Որդի Քրիստոս Աստուած, քեզ փառք, այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կարդում է քահանայն Ս. Աւետարանն, և ապա օրհնում է ժողովրդին պահպանիչ ասելով, և արձակում է նորանց գնալ խաղաղութեամբ:

Այս միջոցին ժողովրդոյն բաշխուում է Ս. Սեղանի օրհնուած նշխարը, որով մասնակից են լինում Ս. Խորհրդոյն շնորհացը, և դպիրների հետ միասան երգում են հետևեալ սաղմոսը:

Սաղմոս ԼԳ. 2—22:

Տիրոջով թող պարծի իմ անձս. խոնարհները թող լսեն, և ուրախ լինեն:

Մեծարէք Տիրոջը ինձանով, թող իրար հետ նորա անունը բարձրացնենք:

Տիրոջից խնդրեցի և լսեց ինձ, և իմ ամեն նեղութիւններից փրկեց ինձ:

Տիրոջը մօտեցէք և լոյս առէք, և ձեր երեսները թող չամաչեն:

Այս աղքատը Տիրոջն աղաչեց, և Տէրը լսեց նորան, և ամեն նեղութիւններից փրկեց նորան:

Տիրոջ հրեշտակների բանակները՝ նորանից վախեցողների շուրջն առած պահում են նորանց։

Ճաշակեցէք ու տեսէք, որ քաղցր է Տէրը, երանելի է այն մարդն որ յուսացած է նորան։

Տիրոջից վախեցէք ո՛վ նորա ամեն սուրբեր, որովհետև նորա վախեցողների համար պակասութիւն չը կայ։

Հարուստները աղքատացան և քաղցած մնացին, բայց նորանք որ Տիրոջը կը յուսան, նորանցից բարիք պակաս պիտի չը լինի։

Եկէք իմ որդիքս, լսեցէք ինձ, ես Տիրոջ երկիւղը սովորեցնեմ ձեզ։

Ո՛վ է այն մարդը որ ապրել կուզէ, և իւր օրերը բարութեան մէջ տեսնել կը սիրէ։

Լեզուդ չար խօսելուց, և քո շրթունքներդ նենգութիւն թող չը խօսեն։

Հեռացիր չարից և գործիր բարին, խաղաղութիւն խնդրիր, և նորա հետևիցը գնա։

Տիրոջ աչքը արդարների վերայ է, և նորա ականջները նորանց աղօթքին վերայ։

Տիրոջ (բարկութեան) երեսները չարագործների վերայ է, և նորանց յիշատակը երկրիցը

ջնջում է։

Արդարները Տիրոջը աղաչեցին, և Տէրը լսեց նորանց, և իրենց ամեն նեղութիւնից փրկեց նորանց։

Տէրը մօտ է նորանց, որոց սրտերը մաշած (տրտում) են, և ապրեցնում է հոգւով խոնարհներին։

Արդարների նեղութիւնը շատ է, բայց Տէրը կը փրկէ նորանց, ու կը պահէ նոցա ամեն ոսկորները, և նորանցից մինն էլ պիտի չը փշրուի։

Մեղաւորների մահն չար է, բայց արդարին ատողն պիտի դղջայ։

Տէրը կը փրկէ իւր ծառայից անձները, և բոլոր նորանք որ Տիրոջը յուսացած են պիտի չը դղջան։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԿԱՆՈՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Զղջումն.

Մեղանչեցի ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն դէմ. մեղանչել եմ Աստուծոյ դէմ. խոստովանում եմ Աստուծոյ առաջին, և սրբուհի Աստուածածնի և քո առաջին Հայր սուրբ. ամեն մեղքերս որ գործել եմ: Որովհետև մեղանչեցի խորհրդով, խօսքով և գործով, կամայ և ակամայ գիտութեամբ և անգիտութեամբ, մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Մեղանչեցի հոգով և սորա զօրութեամբը, մտքով և սորա շարժմամբը, մարմնով և սորա զգայութեամբը: Մեղանչեցի հոգւոյս զօրութեամբը, խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ, և երկչոտութեամբ, (վախկոտութեամբ), շռայլութեամբ և ժլատութեամբ (կծծիութիւն անելով), զեղխութեամբ (անառակութեամբ) և անիրաւութեամբ, չարին հաւանելով, յուսահատութեամբ և թերահաւատութեամբ, մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Մեղանչեցի մտքիս չար խորհուրդովը, նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ (ծուռ նայուածքով), մախանօք (չար նախանձով), յաչախանօք (չար աչք տնկելով), թուլութեամբ, պոռնկական խորհրդով, արուական, իգական, անասնական, գիշեր և ցերեկ երազական գիճութեամբ (անառակութեամբ), և գարշ աղտեղութեամբ, մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Մեղանչեցի մարմնոյս ցանկութեամբը, հեշտութեամբ (փափկութեամբ), պղերգութեամբ (անհոգութեամբ), քնոյ յօրանջելով, մարմնիս շարժութեամբ, և զգուելի գործողութեամբ զանազան ախտերի մէջ, ականջացս հեշտ լսողութեամբ, աչացս արատ հայեցողութեամբ, սրտիս ցանկութեամբ, ռնգացս իգութեամբ, (քթերիս մեղաց հոտոտելովն), բերանիս պագշտութեամբ (պիղծ խօսքերով), անժուժկալութեամբ (անհամբերութեամբ), շուայտութեամբ (չափազանց կերուխումով) և արբեցութեամբս, մեղանչեցի Աստուծոյ դէմ:

Մեղանչեցի լեզուիս չարախօսութեամբը, սուտ խօսելով, սուտ երդուելով, երդմնազանցութեամբ (երդումը չը պահելով), հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ

(չարախօսութեամբ), շոգմոգութեամբ (շողոքորթութեամբ), քսու (չարախօսելով), դատարկաբանութեամբ, և ծաղրալի զրախօսութեամբ, հերձախօսութեամբ (հերձուածողի խօսքերով), և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով, մեղանչեցի Աստուծոյ դէմ։

Մեղանչեցի ձեռքերիս գողութեամբը, ագահութիւն անելով, զրկելով, հարկանելով, սպանելով, և գարշելի բաներով ձեռքերս պղծելով, մեղանչեցի Աստուծոյ դէմ։

Մեղանչեցի ամեն շինուածիս յօդուածներովը, և ամեն մարմնիս անդամներովը, հինգ զգայարանքներովս, և վեց շարժումովս, վերամբարձ ոտնահարութեամբ, (հպարտացած արհամարհութեամբ), յաջ և յահեակ խոտորելով (հոգեկան և մարմնական մեղաց մէջ մոլորուելով), զառաջնոցն մեղանչելով)առաջիններին պէս մեղանչելով), և վերջնոցն չար նշաւակ գոլով (ապագայ մարդոց չար նախատինք լինելով), մեղանչեցի Աստուծոյ դէմ։

Այլև մեղանչեցի եօթն մահացու մեղքերով, հպարտութեամբ և նորա մասունքովը

(ճիւղերովը), նախանձով և նորա մասունքովը, բարկութեամբ և նորա մասունքովը, ծուլութեամբ և նորա մասունքովը, ագահութեամբ և նորա մասունքովը, որկրամոլութեամբ (անկարգ ուտել խմելով) և նորա մասունքովը, բղջախոհութեամբ (չար ցանկութեամբ) և նորա մասունքովը, մեղանչեցի Աստուծոյ դէմ։

Այլև մեղանչեցի յանձնառական և հրաժարական՝ Աստուծոյ ամեն պատուիրանքների դէմ, որովհետև ոչ յանձնառածները կատարեցի և ոչ էլ հրաժարականներիցը հեռացայ։ Օրէնքները ընդունեցի և օրէնքներից հեղգացայ (թուլացայ), քրիստոնէական կարգի մէջ հրաւիրուեցի, և գործովս անարժան գտնուեցի, գիտելով չարն՝ կամաւ կորացայ (ծռնուեցի), և բարի գործերից ես ինձանից հեռացայ, վայ ինձ, վայ ինձ, վայ ինձ, ո՞րն ասեմ, կամ ո՞րն խոստովանուեմ, որովհետև անթիւ են իմ յանցանքները, անասելի են իմ անօրէնութիւնները, աններելի են իմ ցաւերը, և անբժշկելի են իմ վէրքերը, մեղանչեցի Աստուծոյ դէմ։

Հայր սուրբ՝ ես քեզ հաշտութեան միջնորդ և բարեխօս ունիմ Աստուծոյ Միածին

Որդեակ մօտն, որպէս զի քո իշխանութեամբդ որ տուած է քեզ՝ արձակես ինձ իմ մեղքի կապերիցը, աղաչում եմ քեզ։

Պէտք է գիտել, որ այս մեղայականները ղեղջումի մի օրինակ կամ ձև են. յիշեցնելու համար խոստովանաւորդոյն իւր մեղքերը քահանայի առաջին։ Վասն որոյ խոստովանաւորդին պարտաւոր է նախ քննել իւր խիղճը և իւր բոլոր մեղքերը՝ թէ խորհուրդով, թէ խօսքով և գործով, և ապա կատարելապէս ղղջալով անցեալ մեղքերի վերայ, իւր բերանովը անթերի խոստովանել, ինչ որ գործած է ընդդէմ Աստուծոյ տան պատուիրանացն, և ընդդէմ ամէն առաքինական գործոց և ընկերասիրութեան, և հաստատուն առաջադրութիւն անելով որ այլ ևս չը մեղանչի՝ հաւատայ և յուսայ որ Քրիստոսի չարչարանաց արդեանց շնորհիւ ինքը կը փրկուի, որպէս զի ըստ այնմ ընդունի ապաշխարանք խոստովանահայր քահանայիցը. և արձակումն անուն Յիսուս Քրիստոսի, որ պատուիրում է ամէն ղղջացող խոստովանողին, թէ՝ Երթ յայսմ հետէ մի մեղանչեր». (Յոհ. Ը. 11)։

ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

Սաղմոս Զ.

Ո՛վ Տէր, մի յանդիմաներ ինձ քո սրտմբոտութեամբը, և մի խրատեր ինձ քո բարկութեամբը։

Ողորմիր ինձ, Տէր, որովհետև հիւանդ եմ ես, բժշկիր իմ անձը, որովհետև իմ ոսկորները սարսափում են։

Իմ անձը շատ սարսափած է, և դու, ո՛վ Տէր, մինչև ե՞րբ։

Դարձիր, Տէր, և փրկիր իմ անձը. ապրեցրու ինձ քո ողորմութեան համեմատ։

Որովհետև մահի մէջ ոչ ոք քեզ չէ յիշել, կամ գերեզմանումն ո՞վ կը փառաւորէ քեզ։

Ես վաստակեցի իմ հառաչանքներովս, բոլոր գիշերը լուացի իմ անկողինը, և արտասունքներովս թրջեցի իմ մահիճը։

Բարկութիւնից վախեցաւ իմ աչքը, և ես մաշուեցի իմ բոլոր թշնամեաց վերայ։

Հեռացէք ինձանից, ո՛վ բոլոր անօրէնութիւն գործողներ։

Տէրը լսեց իմ լացի ձայնը, Տէրը լսեց իմ

աղօթքն, և Տէրը ընդունեց իմ խնդրուածքը։

Թո՛ղ ամաչեն և շատ զարհուրեն իմ թըշնամիները, յետ դառնան և շատ ամաչեն շուտով և զարհուրեն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԼԱ.

Երանի նորան, որի մեղացը թողութիւն եղաւ, և նորա բոլոր յանցանքը ծածկուեցին։

Երանի այն մարդին՝ որ Տէրն մեղք չէ համարում նորան, և նենգութիւն չը կայ նորա բերանումը։

Ես լուռ կեցայ, և իմ բոլոր ոսկորներս մաշուեցան, իմ ամեն օր աղաչանքներովս առ Տէր ցերեկ և գիշեր։

Քո ձեռքը ծանրացաւ ինձ վերայ, դարձայ թշուառութեան մէջ, որովհեաև փշերը ծածկեցին ինձ։

Ես իմ մեղքերը կը յայտնեմ քեզ, և իմ անօրէնութիւնները չեմ ծածկել քեզանից։

Ասացի թէ ես ինձէն խոստովանուեմ իմ մեղքերը, և դու կը թողնես իմ մեղաց բոլոր անօրէնութիւնները։

Սորա համար ամեն սուրբերը աղօթք կանեն քեզ, ընդունելի ժամանակում։

Բայց միայն շատ ջուրերի հեղեղները չեն հասնել նորանց վերայ։

Դու ես իմ ապաւէնը, այս նեղութիւնից որ իմ շուրջս կան։

Ո՛վ իմ ցնծութիւն, փրկիր ինձ նոցանից, որոնք պաշարեցին ինձ։

Իմաստուն կանեմ քեզ, և կը սովորեցնեմ քեզ այն ճանապարհը, որ նորանում պիտի գնաս, և իմ աչքը կը հաստատեմ քո վերայ։

Մի լինիք ինչպէս ձի և ջորի, որովհետև չը կայ նորանց մէջ իմաստութիւն, սանձով և պախուրցով կը ճմլես նորանց կզակը, որ չեն մօտենում քեզ։

Շատ տանջանք կայ մեղաւորաց համար, բայց որոնք Տիրոջն են յուսացած, Տիրոջ ողորմութիւնը կը պատէ նորանց։

Ուրախացէք և ցնցածէք արդարներ, Տիրոջով պարծեցէք բոլորդ՝ որ սրտով ուղիղ էք։

Փառք Հօր և Որդւոյ և Այլն։

Սաղմոս Ծ.

Ողորմիր ինձ, ո՛վ Աստուած, (Տես երես 67)։

Սաղմոս ՃԱ.

Ո՛վ Տէր, լսիր իմ աղօթքին, իմ աղաղակը թող քեզ մօտ գայ, մի դարձնիր քո երեսդ ինձանից։

Իմ նեղութեան օրը խոնարհեցրու քո ականջդ ինձ մօտ, այն օրը որ կանչեմ դէպի քեզ՝ շուտով լսիր ինձ։

Իմ օրերը ծուխի պէս վերջացան, և իմ ոսկորները տաշուղի պէս չորացան։

Իմ սիրտս ցամաքեց և չորացաւ խոտի պէս, իմ հառաչանքի ձայնիցը հաց ուտելս մոռացայ։

Իմ ոսկորս կպաւ իմ մարմնին, նմանուեցի անապատի հաւալուսին (թռչունին)։

Ես աւերակի բուի պէս եղայ, անքուն մընացի, և կտուրի վերայ միայնակ ճնճղուկի պէս եղայ։

Ամեն օր նախատեցին ինձ իմ թշնամիները, և իմ զովեստ տուողները երդուում են ինձանով։

Մոխիրը կերայ հացի պէս, ու իմ խմելիքս արտասունքով խառնեցի։

Քո բարկութեան և սրտմտութեան համար, որ դու բարձրացրիր և խոնարհեցրիր ինձ։

Իմ օրերս շուքի պէս անցան, և ես խոտի պէս չորացայ։

Դու, Տէր, յաւիտեան կաս, և քո յիշատակը ազգից մինչև ազգ։

Դու վերկենալով Սիոնին կը ողորմիս, որոշած ժամանակը հասած է գթալու նորա վերայ։

Քո ծառաները հաւանեցին նորա քարերին, և նորա փոշիներին խղճում են։

Հեթանոսները կը վախենան քո անունիցը։ և երկրի բոլոր թագաւորութիւնները քո փառքիցը։

Տէրը շինեց Սիոնը, և կերևայ նորա մէջ իւր փառքովը։

Նայեց նա խոնարհների աղօթքին, և չէ անարգում նորանց խնդրուածքը։

Սա պիտի գրուի եկող ազգի համար, և ստեղծուելու ժողովուրդը Տիրոջը կը օրհնէ։

Նա իւր սրբութեան բարձրութիւնից նայում է, Տէրը երկնքից նայում է երկրի վերայ։

Որ լսի կապուածների հառաչանքը, և արձակէ մահապարտների որդիքը։

Որ պատմեն Սիոնումը Տիրոջ անունը, և նորա օրհնութիւնը Երուսաղէմումը։

ժողովուրդները կը ժողովուեն միատեղ, և թագաւորութիւնները՝ Տիրոջը ծառայելու համար։

Պատասխանեց նորան իւր կենաց ճանապարհումը, իմ օրերի նուազութիւնը ասա ինձ, և մի՛ կարճացներ իմ օրերը, որովհետև քո տարիքը ազգից մինչև ազգ են։

Ո՛վ Տէր, առաջուց երկրի հիմունքը հաստատեցիր, և քո ձեռքերի գործն է երկինքը։

Նորանք կը կորչին, բայց դու կաս և կը մնաս յաւիտեան։

Ամենքը շորի պէս կը մաշուին, հագուստի պէս կը փոխես նորանց, և կը փոխուին։

Բայց դու նոյն իսկ ես, և քո տարիները չեն վերջանար, քո ծառայից որդիքը կը բնակուեն նորա մէջ, և նորանց սերունդը հաստատ կը մնայ յաւիտեան։

Փառք Հօր և այլն։

Սաղմոս ՃԻԹ.

Ո՛վ Տէր, խոր տեղերից դէպի քեզ եմ կանչում, ո՛վ Տէր, լսիր իմ ձայնին։

Քո ականջները թող լսեն իմ աղօթքի ձայնը։

Ո՛վ Տէր Տէր, եթէ իմ անօրէնութիւնները քննես, ո՛վ կարող է կենալ քո առանջին,

որովհետև քեզանից է թողութիւնը։

Ո՛վ Տէր, ես համբերում եմ քո անուան համար, իմ անձը սպասում է քո խօսքին, իմ անձը յուսացաւ Տիրոջը։

Առաւօտեան ժամանակից մինչև երեկոյ, Իսրայէլ յուսացաւ Տիրոջը։

Տիրոջիցն է շատ ողորմութիւն, և նորանից է փրկութիւն, և նա փրկեց Իսրայէլին նորա ամեն նեղութիւններից։

Փառք Հօր և այլն։

ԱՂՕԹՔ

Յովհաննու Մարգարէին, Բ. 3.

Ես իմ նեղութեան մէջը աղաղակեցի դէպի Տէրը, և Աստուած խոր անդունդից լսեց իմ աղաղակին։

Լսիր, ո՛վ Տէր, իմ ձայնին, որովհետև ընդունցիր ինձ ծովի խորը, և գետերի շրջանքը (պըտուտը) պատեցին ինձ։

Քո բոլոր ալէկոծութիւնները թափեցին իմ վերայ, և ասացի թէ ուրեմն հեռացայ քո աչքի տեսութիւնից։

Արդ երանի՜ թէ կրկին անգամ արժանանամ նայել քո սուրբ տաճարին, որովհետև թափ-

ուեցին ջրերը իմ անձնի շուրջը, և ահագին անդունդքը պատեցին ինձ։

Իմ գլուխը մտաւ լերանց ճեղքերի մէջ, ինչպէս ես երկրի խորութեան մէջ, և տեսայ նորա փականքը, որոնք էին ինչպէս յաւիտենական կղպակ, և իմ կեանքը դուրս կը գան ապականութիւնից։

Երբ իմ անձը նուազեցաւ՝ դէպի քեզ կանչեցի, ո՛վ Տէր Աստուած իմ, և քեզ մտաբերեցի, ո՛վ Տէր, որ իմ աղօթքը մտնեն քո սուրբ տաճարի մէջ։

Որովհետև նորանք որ պահում էին ունայնութիւն և սուտութիւն, իւրեանց ողորմութիւնից զրկուեցին։

Այլ ես օրհնութեան ձայնով կը փառաւորեմ քեզ, և պատարագ կը մատուցանեմ Տիրոջը, և իմ ուխտը կը կատարեմ փրկութեան մէջ։

Փառք Հօր, այժմ և միշտ։

ԱՂՕԹՔ

Մանասէ թագաւորին.

Ո՛վ Տէր ամենակալ, Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ՝ և նորանց արդար զաւակների Աստուած, ամենակալ Տէր, թող իմ մեղքը։

Որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը, և նորանց բոլոր զարդերը, ամենակալ Տէր։

Որ կապեցիր ծովը քո խօսքի հրամանով, փակեցիր խորերը, կնքեցիր քո ահաւոր և փառաւորեալ անուամբը, ամենակալ Տէր։

Որ ամեն ինչ սարսափում և դողում է քո զօրութեան երկիւղից, ամենակալ Տէր։

Անչափ է քո սրբութեան փառքի մեծ վայելչութիւնը, սաստիկ է քո սպառնալիքի բարկութիւնը մեղաւորների վերայ, անչափ և անքննելի են քո աւետեաց ողորմութիւնները, ամենակալ Տէր, թող իմ մեղքը։

Ո՛վ դու բարձրեալ Տէր, գթած, երկայնամիտ, բազումողորմ, և զղջանում ես մարդկանց չարութիւնների վերայ, ամենակալ Տէր։

Ո՛վ դու Աստուած, ապաշխարութիւն չը դրիր Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ արդարների համար, որոնք չը մեղանչեցին քեզ, ամենակալ Տէր, թող իմ մեղքը։

Այլ ինձ մեղաւորիս համար ապաշխարութիւն դրիր, որովհետև մեղանչեցի ես աւելի քան ծովի աւազն, և շատացան իմ անօրէնութիւնները, ամենակալ Տէր։

Ես արժանի չեմ նայել և տեսնել երկնքի բարձրութիւնը, իմ անօրէնութեան շատութիւնից, ամենակալ Տէր, թող իմ մեղքը։

Ես կորացել (խոնարհել) եմ երկաթէ կապանքների սաստկութիւնից, և հանգստութիւն չըկայ ինձ համար, ամենակալ Տէր։

Գրգռեցի բարկութիւնը և չարութիւն գործեցի քո առաջին, պատկեր կանգնեցրի և բարկութիւնը շատացրի, ամենակալ Տէր։

Եւ արդ Տէր, խոնարհեցնում եմ իմ սրտի ծունրը, և խնդրում եմ քո քաղցրութիւնից, ամենակալ Տէր։

Մեղանչեցի, Տէր, մեղանչեցի, և իմ անօրէնութիւնները ես ինքս ճանաչում եմ, ամենակալ Տէր։

Աղաչում և խնդրում եմ քեզանից, թող ինձ Տէր, թող ինձ, և մի կորցներ ինձ իմ անօրէնութեանս համեմատ, ամենակալ Տէր։

Յաւիտեան մի բարկանար ինձ վերայ, Տէր, և մի յիշեր իմ մեղքերը, և մի դատապարտեր ինձ չարիքներով երկրի ներքոյ իջածների հետ, ամենակալ Տէր։

Քանզի դու Աստուած՝ ապաշխարողների

Աստուածն ես, և ցոյց տուր ինձ քո բարերարութիւնդ, որ անարժան եմ, ամենակալ Տէր։

Ապրեցրու ինձ քո շատ ողորմութեանդ համեմատ, և ես կը օրհնեմ քեզ իմ կենաց բոլոր օրերումը, ամենակալ Տէր։

Օրհնում են քեզ Տէր՝ երկնքի բոլոր զուարթունքը (հրեշտակները). և քո են փառք յաւիտեանս, ամէն։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Ո՛վ Տէր, աղաչում և խնդրում եմ քեզանից, թո՛ղ ինձ իմ մեղքերը։

Բազումողորմ Տէր, ողորմիր ինձ։

Ո՛վ Աստուած, քաւիր (սրբիր) ինձ մեղաւորիս, և ապրեցրու։

Ո՛վ իմ արարիչ և յոյս Աստուած, գթութիւն արա ինձ մեղաւոր ծառայիս, և ողորմիր ինձ բազմամեղիս։

Ո՛վ ամէնօրհնեալ սրբուհի և միշտ կոյս աստուածածին Մարիամ, բարեխօսիր դէպի Տէրը ինձ մեղաւորիս համար։

Ո՛վ Աստուծոյ բոլոր սրբեր, բարեխօսեցէք դէպի Հայր երկնքումը մեզ մեղաւորներիս համար։

Ո՛վ անոխակալ Քրիստոս Որդի Աստուծոյ, ընդունիր մեր աղաչանքը. որովհետև մեր անձերը քեզ են ապաւինած։

Ո՛վ Տէր, քո սուրբ և կենդանարար և պատուական խաչի յաղթող զօրութեամբը պահպանիր մեզ։

Ո՛վ Տէր, ուղղակիր քո խաղաղութեան հրեշտակը՝ որ գայ աներկիւղ պահէ մեզ ցերեկ և գիշեր։

Եւ քո մարդասիրութեամբդ լիշիր մեզ, ո՛վ Տէր, լիշիր մեզ, երբ որ կը դաս քո արքայութեամբդ, և ողորմիր մեզ։

ՔԱՐՈԶ.

Մենք ամենքս որ եկած ենք խոստովանուելու և ապաշխարելու համար, պէտք է հաւատով մեր սրտերի մէջ յոյս դնենք Աստուծոյ Միածին Որդւոյն վերայ, խնդրելով նորանից քաւութիւն ու թողութիւն մեր ամեն մեղքերին։ Վասն զի նա ինքն է նախախնամող և յաւիտենական Աստուածը, որ Հօր կամքով եկաւ իւր արարածները փրկելու համար, ասելով թէ՝ ինքն է մեղաւորաց քաւիչ և ապաշխարողների յոյսը, և աշխատողներին հանգիստ կը շնորհէ, և կը ընդունի ծանր բեռ-

ներով ու մեղքերով վաստակածներին ապաշխարութեան մէջ թողութիւն տալով։ Արդ՝ եկէք ամենքս խոնարհած անձերով, կոտրած սրտերով ընկնենք և լանք մեր արարիչ Տիրոջ առաջին, որպէս զի իւր բարերարութեամբը հեռացնի մեզանից մեր յանցանաց պատիժ տալու բարկութիւնը։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Տէր, մեր փրկութեան Աստուած, որ ողորմած ու գթած, երկայնամիտ և բազումողորմ ես, և գութդ շարժում ես մարդոց չարութեան վերայ, որ մեղաւորի մահը չես ուզեր, այլ նրա չար ճանապարհից դառնալն ու ապրելը կուզես։ Դու Տէր՝ քո առատ ողորմութեամբդ մխիթարիր քո ծառաներդ, և ապաշխարութեան միջոց տուր նորանց։ Հաշտիր քո մարդասիրութեամբդ, և մեզ քո սուրբ Եկեղեցւոյդ անդամ արա. որպէս զի հոգւով առողջացած խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ մտնենք քո սուրբ Եկեղեցիդ, և քո ժողովրդեանդ հետ օրհնենք ու փառա-

ասրենք Հայը և Որդի և սուրբ Հոգիդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ

(Համաձայն պատարագիչ քահանայի).

Ո՛վ Հայր սուրբ Աստուած, որ քո Միածին Որդւոյդ անուանակից արիր մեզ քրիստոնեայ կոչելով։ Եւ լուսաւորեցիր մեզ հոգևոր աւազանի մկրտութեամբը։ Արժանի արա և ինձ ընդունել այս սուրբ խորհուրդը իմ մեղաց թողութիւն գտնելու համար։ Տպաւորիր իմ սրտիս մէջ քո սուրբ Հոգւոյդ շնորհքը, ինչպէս սուրբ Առաքեալներին, որք ճաշակելով այս մաքրեցին մեղքից բոլոր աշխարհը։ Եւ արդ՝ ո՛վ Տէր և բարերար Հայր, այս Հաղորդութիւնը մասն արա այն ճաշակման՝ որ խորհրդաւոր ընթրեաց երեկոյին ճաշակեցին մեր Տէր Քրիստոսի աշակերտները, և վերացրու ինձանից մեղքերի խաւարը։ Մի՛ նայիր իմ անարժանութեանս, Տէր, և մի՛ արգելեր սուրբ Հոգւոյդ շնորհքը, այլ քո անբաւ մարդասիրութեամբդ պարգևիր ինձ այս սուրբ խորհուրդը մեղաց քաւիչ և յանցանաց լու-

ծիչ, ինչպէս խոստացաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսը և ասաց, թէ՝ «Ով որ ուտում է իմ Մարմինս, և խմում է իմ Արիւնս, յաւիտեան պիտի ապրի»։ Արդ՝ աղաչում ենք քեզ, Տէր, արժանաւորութիւն շնորհիր և ինձ ճաշակել սուրբ խորհուրդս՝ իմ մեղաց քաւութեան համար, որովհետև որոնք որ ուտում և խմում են այս սուրբ խորհուրդը, կը տան օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Ս. Հաղորդութեան ճաշակման ժամին.

Սաղմոս ՃԺԸ.

Իմ բերանը բաց արի և ստացայ հոգի, իմ անձը փափաքում է քո պատուիրանքներին։

ԱՂՕԹՔ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ՑԵՏ

(Համաձայն պատարագիչ քահանայի).

Գոհանում եմ քեզանից, ո՛վ Քրիստոս Թագաւոր, որ արժանի արեցիր անարժանիս

հաղորդիլ սուրբ Մարմնիցդ և Արիւնիցդ։ Եւ այժմ աղաչում եմ քեզ, Տէր Յիսուս, որ Սա դատապարտութիւն չը լինի ինձ, այլ քաւութիւն և թողութիւն մեղաց, առողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և առաքինութեան ամեն գործեր կատարելու։ Որպէս զի սրբի Սա իմ շունչը, և՛ հոգիս և՛ մարմինս։ Եւ դարձնէ ինձ տաճար և բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ, որ արժանի լինեմ քո սրբերիդ հետ փառաւորել քեզ՝ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

ԱՂՕԹՔ

Ս. Յովհաննու Ոսկեբերանի.

Գոհանում եմ, մեծարում և փառաւորում եմ քեզ, ով իմ Տէր Աստուած, որ ինձ անարժանիս արժանի արիր այսօր հաղորդակից լինել քո Աստուածային և սոսկալի խորհրդիդ, — անարատ Մարմնոյդ և պատուական Արեանդ։ Ուստի սորանց բարեխօս ունենալով, աղաչում եմ քո սրբութեամբդ պահիր ինձ իմ կենաց ըոլոր օրերում և ժամանակներում։ Որպէս զի քո բարեգթութիւնդ լիշելով, կենդանի մնամ քեզ հետ, որ մեզ համար չար-

չարութեամբ և մեռար և յարութիւն առար։ Իմ Տէր, և իմ Աստուած, թող իմ անձիս չը մօտենայ խորտակիչ սատանան, քո պատուական Արիւնովդ կնքելով իմ անձը։ Ո՛վ Ամենակարող, այս սուրբ խորհրդով մաքրիր ինձ իմ ամեն գարշելի մեղքերիցս, քանզի դու ես միայն անմեղ։

Ամրացրու իմ կեանքս, ով Տէր, ամեն փորձութեանց դէմ, և իմ հետ պատերազմող թշնամուն յետ դարձրու ինձանից, ամօթապարտ անելով նորան, որչափ որ ուզէ յարձակուիլ իմ վերայ։ Ամրացրու մտքիս և լեզուիս ընթացքը և մարմնոյս ըոլոր ճանապարհները։ Միշտ իմ հետս եղիր, քո անսուտ խոստմանդ համեմատ թէ՝ «Ով որ իմ Մարմինս ուտում է և իմ Արիւնս խմում է, նա իմ մէջս պիտի բնակուի և ես նորա մէջ»։ Դու ասացիր, ով Մարդասէր, քո աստուածային անլուծանելի հրամանդ՝ թող կատարուի ինձ վերայ։ Քանզի դու ես ողորմութեան, գթութեան և մարդասիրութեան Աստուած, և պարգևող ամեն բարեաց, և քեզ վայելում է փառք Հօր և ամենասուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ։

Ա.Ղ.Օ.Թ.Քի ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:

Մեր Հայր, որ երկնքումն ես:

Սաղմոս ԾԴ. 14:

Ես դէպի Աստուած կանչեցի, և նա լսեց երեկոն, առաւօտն և կէսօրին:

Սպասում էի իմ Աստուծոյն, և ակնկալում էի կենարարին, որ փրկէ իւր ծառաներին և ապրեցնէ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սաղմոս ԶԵ.

Ո՛վ Տէր, խոնարհեցրու քո ականջը և լսիր ինձ, որովհետև աղքատ և խեղճ եմ ես:

Պահիր իմ անձը, սուրբ Տէր, և փրկիր քո ծառային, ո՛վ իմ Աստուած, որ քեզ եմ յուսացել:

Ողորմիր ինձ, Տէր, որ դէպի քեզ աղաղակեցի ամեն օր, ուրախ արա քո ծառայի անձը, որ դէպի քեզ բարձրացրի իմ անձը, ո՛վ Տէր:

Որովհետև դու, Տէր, բարի ես և ուղիղ, շատ ողորմած ես բոլոր քեզ կանչողներին:

Ականջ դիր իմ աղօթքին, ո՛վ Տէր, և նայիր իմ խնդրուածքի ձայնին:

Իմ նեղութեան օրը դէպի քեզ կանչեցի, և դու լսեցիր ինձ:

Քեզ նմանը չ'կայ աստուածների մէջ, Տէր, և չ'կայ քո գործերի պէս:

Ամեն ազգերն, որ ստեղծեցիր, կը գան և երկրպագութիւն կանեն քո առաջին, և կը փառաւորեն քո անունը յաւիտեան:

Մեծ ես դու, Տէր, և հրաշք ես գործում. և դու ես միայն Աստուած:

Առաջնորդիր ինձ քո ճանապարհի մէջ, որ գնամ քո ճշմարտութեան մէջ, և ուրախանայ իմ սիրտը քո անունից վախենալով:

Գոհանում եմ քեզանից, ո՛վ Տէր իմ Աստուած, իմ բոլոր սրտով յաւիտեան փառաւորում եմ քո անունը:

Քո ողորմութիւնդ մեծ է ինձ վերայ, Տէր, և դու փրկեցիր իմ անձը ներքին դժոխքիցը։

Ո՛վ Աստուած, ամբարտաւանները վեր կացան ինձ դէմ, և բռնաւորների ժողովը ուզում է իմ անձը. և քեզ չեն համարում Աստուած իրենց առաջին։

Բայց դու, ո՛վ Տէր, զթած Աստուած ես և ողորմած, երկայնամիտ, բազումողորմ և ճշմարիտ, նայիր ինձ վերայ և ողորմիր ինձ։

Քո զօրութիւնը տուր քո ծառային, ապրեցրու քո աղախնոյ որդւոյն, և բարութեան նշան արա ինձ վերայ։

Որ ինձ ատողներն տեսնեն և ամաչեն, որովհետև դու։ Տէր, օգնեցիր ինձ և մխիթարեցիր ինձ։

Փառք Հօր և Որդւոյ, այժմ և միշտ։

ՄԱՂԹԱՆՔ.

Փառք քեզ, ո՛վ Աստուած, փառք քեզ, Տէր, ամենի համար փառք քեզ։

Սաղմոս ՃԼԹ.

Ո՛վ Տէր, ապրեցրու ինձ չար մարդից, անիրաւ մարդից փրկիր ինձ։

Անօրէնութիւն խորհեցին իրենց սրտերումը, ամեն օր պատրաստուեցին կռուելու։

Իրենց լեզուները սրեցին օձի նման, և իժ օձի թոյն կայ իրենց շրթունքների տակ։

Տէր, պահիր ինձ մեղաւորի ձեռքից, և չար մարդից փրկիր ինձ։

Ամբարտաւանները խորհեցին խափանել իմ ընթացքը, որոգայթ լարեցին ինձ համար։

Պարաններ և որոգայթ ձգեցին իմ ոտներին, իմ ճանապարհումն արգելք դրին ինձ համար։

Ես ասացի դու ես իմ Տէր Աստուածը, Տէր, լսիր իմ աղաչանքների ձայնին։

Ո՛վ Տէր Տէր, իմ փրկութեան զօրութիւնը, դու հովանի ես իմ գլխին կռուի օրումը։

Տէր, մի՛ տար ինձ մեղաւորաց ցանկութեանը, որոնք խորհեցին ինձ համար, և ինձ մի՛ ձգեր քո երեսիցը։

Որ երբէք չը բարձրանան նորանք, և չը կատարուեն նրանց խորհուրդները. իրենց շրթունքների վաստակը պիտի ծածկէ նորանց։

Թող կրակի կայծակները ընկնեն նորանց վերայ և կործանեն, որ բնաւ չը կարենան

փրկուել չարչարանքներից։

Զարախօս մարդը չի հաստատուել երկրի վերայ. չարիքը կը որսայ մեղաւոր մարդին կոխտեան մէջ։

Գիտեմ, որ դու Տէր, դատաստան կանես աղքատի համար, և իրաւունք՝ խեղճի համար։

Արդարները կը գոհանան քո անունիցը, և ուղիղները կը բնակուեն քո առաջին։

(ՃԽ.) Ո՛վ Տէր, ես կանչեցի դէպի քեզ, և լսիր ինձ, նայիր իմ աղօթքի ձայնին՝ երբ կանչում եմ դէպի քեզ։

Իմ աղօթքը թող ընդունելի լինի ինչպէս խունկ քո առաջին, Տէր, իմ ձեռքերի բարձրանալը՝ երեկոյեան պատարագի պէս։

Տէր, պահապան դիր իմ բերանին, և ամուր դուռն՝ իմ շրթունքներին, որ իմ սիրտը չը մոլորուի չար բանով։

Որ չարութեամբ վատ գործեր չ՚գործեմ անօրէնութիւն անող մարդկանց հետ, և չը լինիմ կից նորանց ընտրուածներին։

Արդարը թո՛ղ խրատէ և յանդիմանէ ինձ քաղցրութեամբ, մեղաւորի իւղը չի օծել իմ գլուխը, այլ իմ աղօթքն կը լինի նորա բարի

կամելու համար։

Նրանց դատաւորները քարի մօտ արգելուեցին, և նորանք իմ խօսքերը կը լսեն որ քաղցրանան։

Ինչպէս հողի թանձրութիւնը որ ցրուած է երկրի վերայ, այնպէս կը ցրուին նորանց ոսկորները գերեզմանի մօտ։

Ո՛վ Տէր Տէր, իմ աչքերը դէպի քեզ են նայում, ես քեզ եմ յուսացած, հոգիս մի հաներ ինձանից։

Պահիր ինձ այն որոգայթից որ լարեցին ինձ համար, և չարագործների արգելքից։

Մեղաւորները իրենց ցանցերի մէջ պիտի ընկնեն, մինչդեռ ես միայնակ անց կը կենամ։

(ՃԽԱ.) Ես իմ ձայնով դէպի Տէրն աղաղակեցի, իմ ձայնով Տիրոջն աղաչեցի։

Իմ աղօթքը կը տարածեմ Տիրոջ առաջին, իմ նեղութիւնը կը պատմեմ նորա առաջին։

Երբ որ հոգիս մաշւում է ինձանում, դու Տէր, ճանաչեցիր իմ գնացքը, այն ճանապարհումը՝ որ գնում էի, որոգայթ լարեցին ինձ համար։

Նայելով աջ կողմից տեսնում էի, մինը

չ'կար որ ճանաչէր ինձ, իմ փախնելու ապաստանը կորաւ ինձանից, և մինը չ'կայ որ իմ անձը խնդրէ։

Տէր, դէպի քեզ աղաղակեցի և ասացի, դու ես իմ լոյսը և իմ բաժինը կենդանեաց երկրումը։

Նայիր, Տէր, իմ աղօթքին, որ ես շատ խեղճ եղայ, փրկիր ինձ իմ հալածողներից որ ինձանից զօրաւոր են։

Տէր, իմ անձը հանիր բանտից որ գոհանամ քո անունից։

Արդարները սպասում են քեզ, մինչև հատուցումն անես նոցանց։

Փառք Հօր և Որդւոյ, այժմ և միշտ։

ՄԱՂԹԱՆՔ.

Օրհնուած ես ով Տէր, որ երկնքի բարձրութեան մէջ ես բնակւում, և օրհնուած են քո մեծութեանդ փառքը, որ բարձրութեան մէջ լուսաւոր մարմիններ հաստատեցիր. և երկնքիցը լոյս ծագեցիր բոլոր արարածների վերայ, Արեգակը ստեղծեցիր՝ որ լոյս տայ ցերեկին. և լուսինն ու աստղերը՝ որ լոյս տան

գիշերին, և ճրագի լոյսը։ Դու ես գովելի, սուրբ և առաջին լոյսը, քեզանից փախչում է խաւարն։ Ով Տէր, քո կենդանութիւն տուող լոյսդ ծագիր մեր սրտերի մէջ, և մենք միաբան կ'ասենք, օրհնուած է քո փառաւոր սուրբ անունդ. և քեզ օրհնութիւն և փառք կ'երգենք Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ՓԱՌՔ.

Մենք որ հասած ենք երեկոյիս ժամին՝ ամենքս բարձրացնելով մեր ձեռքերը փառաւորում ենք քեզ, ով մեր Տէր Աստուած, որ շնորհեցիր մեզ խաղաղութեամբ անցկացնել ցերեկս, և հասնել այս երեկոյեան ժամին։ Արժանի արա մեզ, Տէր, սուրբ սրտով, հրեշտակային երգով՝ գոհաբանութիւն մատուցանենք, ամենակալ Տէր Աստուածդ, ապրեցրու և ողորմիր։

Ողորմիր մեզ մեր Տէր Աստուած, քո մեծ ողորմութեանդ համեմատ, ասենք ամենքս միաբանութեամբ։

Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր։

ՄԱՂԹԱՆՔ.

Մենք ամենքս հասնելով այս երեկոյեան ժամին, անդադար փառաւորում ենք Հայր և Որդի և սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ.

Ամենքս միաբանութեամբ ասենք, Տէր ողորմիր։ (Տես երես 45)։

ՔԱՐՈԶ

Սուրբերի տօնի և պահոց օրերին.

Աղաչում ենք ամենակալ Աստուծոյն, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօր՝ խաղաղութեան թագաւորին, աշխարհիս խաղաղութեան համար, և մի սուրբ, Կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցւոյ համար, որպէս զի խաղաղութեամբ շատ տարիներ պարգևի մեզ մեր Տէր Աստուածը, և խաղաղարար թագաւորներ ուղարկէ մեզ՝ իւր սուրբ, մեծ և ահաւոր անուան համար։ Եւ խաղաղութեան մէջ պահի, գաւառապետները, զօրավարներն ու զօրագլուխները, և ժողովուրդը, և մեր մուտ ու ելքը՝

և թշնամւոյ ամեն պատերազմները խորտակի, ամենակալ Տէրը, ապրեցնի և ողորմի։

ԱՂՕԹՔ.

Լսէր մեր ձայներին, ով մեր Տէր Աստուած, ընդունէր մեր աղաչանքը, մեր ձեռքերի բարձրացնելը և մեր աղօթքի խօսքերը, սրբելով մեր այս երեկոյեան պատարագը՝ որ անուշահոտ խունկերի պէս քեզ հաճելի կերպով պատրաստուած լինի։ Աւելցրու մեր սրտի մէջ, ով Տէր ամենակալ, հաւատք, յոյս և սէր, և ամեն առաքինութեան գործեր, որպէս զի քո բարեսէր կամքիդ համեմատ՝ միշտ բարեպաշտութեամբ մեր կրօնքը պաշտելով ցերեկ ու գիշեր արժանի լինենք աղաչել քեզ Տէր, մեր անձերի փրկութիւնը և հոգևոր կեանքդ ստանալու համար, և քեզանից շնորհք և ողորմութիւն գտնել. և գոհանալով փառաւորել Հայր և Որդի և սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Քեզ երկրպագութիւն տալով մեր Տէր Աստ-

ուած, գոհանում ենք քեզանից՝ որ խաղաղութեամբ անցկացրիր մեզանից այս օրուայ երկայնութիւնը։ Աղաչում ենք քեզ Տէր, շնորհիր մեզ այս երեկոյս և առաջիկայ գիշերս առանց մեղքի և առանց դայթակղութեան անցկացնել, հաստատուն կենալ և մնալ հաւատոյ, յուսոյ և սիրոյ, և քո պատուիրանքդ պահելու մէջ. խնդրելով նաև ամեն աշխարհի խաղաղութիւն և քո սուրբ Եկեղեցւոյդ հաստատութիւն, և մեր անձերին փրկութիւն։ Որպէս զի մեր խնդիրքը քեզանից ընդունելով, մեծ ու վայելչական փառաբանութիւն առաքենք միշտ դէպի երկինք, քո ամենազօր Տէրութեանդ, ով մեր Քրիստոս Աստուած, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ ասում են Սուրբ Աստուած ըստ պատշաճի,

ՄԱՂԹԱՆՔ.

Փրկել մեզ, Հայր. (Տես երես 50)։

ՔԱՐՈԶ.

Լսելի լինելու, Հայրն. (Տես երես 50)։

Սաղմոս ՃԻ.

Ես բարձրացրի իմ աչքերը դէպի սարերը, որտեղից կը գայ իմ օգնութիւնը։

Իմ օգնութիւնը Տիրոջից կը գայ, որ երկինքն ու երկիրս արաւ։

Մի՛ դողդողացներ քո ոտքը, և մի՛ թողներ քո պահապանդ ննջի։

Ինչպէս որ Իսրայէլի պահապանը չի ննջել քնի մէջ։

Տէրը կը պահպանէ քեզ, և Տէրը իւր աջոյ ձեռքովը կընդունի քեզ։

Ցերեկը արեգակը չի վնասել քեզ, և ո՛չ էլ լուսինը գիշերումը

Տէրը կը պահպանէ քեզ ամեն չարից, Տէրը կը պահպանէ քո անձը։

Տէրը կը պահպանէ քո մտնելը ու դուրս գալն՝ այսուհետև մինչև յաւիտեան։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ զթած Հայր և բարեխնամող, ամեն

արարածոց Ս.բարիչ, ընդունիր քո ծառանե-
րիդ աղաչանքը այս երեկոյեան ժամիս, որ
առատ ես դէպի ամենը քո բարերարութեանդ
պարգևներովը։ Ողորմիր Տէր, բոլոր աշխար-
հի և քո սուրբ Եկեղեցւոյդ, հիւանդներին,
վշտացեալներին, ճանապարհորդներին, նաւով
գնացողներին, խոստովանողներին, ապաշխա-
րողներին, և հանգուցեալ հոգիներին։ Քանզի
դու, ո՛վ ամենակալ Տէր, գիտես մեր պէտքն
ու կարօտութիւնները աւելի քան՝ ինչ որ խնդ-
րում ու իմանում ենք, և քեզ վայելում է Որդ-
ւոյ և ամենասուրբ Հոգւոյդ հետ՝ փառք իշ-
խանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս Ղ.

Որ բնակուած է, և այլն։ (Տես երես 79)։
(ՃԻԲ.) Ո՛վ Տէր, դէպի քեզ եմ բարձրացնում
իմ աչքերը, որ բնակուած ես երկնքումը։

Ինչպէս ծառայի աչքերը իւր Տիրոջ ձեռ-
քումն են, և ինչպէս աղախնի աչքերը իւր
տիկնոջ ձեռքին։

Այնպէս էլ մեր աչքերը դէպի քեզ են,

ո՛վ մեր Տէր Աստուած, մինչև ողորմիս մեզ
վերայ։

Ողորմիր մեզ, Տէր, ողորմիր մեզ, որ շատ
անարգանքով լցուեցինք։

Շատ լցուած է մեր անձը նախատինքով,
և ամբարտաւանների անարգանքովը։

(ԾԳ.) Ո՛վ Աստուած, քո անունովը, և այլն։
(Տես երես 89)։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

ՄԱՂԹԱՆՔ.

Բարձրեալ Քրիստոսին կ՚անենք մեզ ապա-
ւէն (յոյս), որ չարիքը չ՚հասնեն մեզ, և տան-
ջանքը չ՚մօտենան մեր բնակարանների մէջ։

ԲԱՐՈՁ.

Եւ մենք միաբան Տիրոջիցը ողորմութիւն
խնդրելով, ասում ենք ամենքս միաբանու-
թեամբ։

Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմի՛ր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Քրիստոս Աստուած, որ կեանքի

յոյս ես, աղօթքի ընդունող, մեղքի քաւող, և խնդրուածքների կատարող, ընդունիր մեր պաղատանքը այս երեկոյեան ժամիս, սուրբ Աստուածածնիդ բարեխօսութեամբ և քո ամեն սրբոց աղաչանքովը։ Լսիր մեզ Տէր, և ողորմիր, ներիր քաւիր և թող մեր մեղքերը, արժանի արա կոհութեամբ փառաւորել քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն

ՓՈՔՐ ԿԻՐԱԿԱՄՏԻՑ

Սաղմոս ՃԼԳ.

Այստեղ Տիրոջ ամեն ծառաներ օրհնեցէք Տիրոջը, որ կենում էք մեր Տէր Աստուծոյ տան և գաւթի մէջը։

Գիշերով բարձրացրէք ձեր ձեռքերը դէպի սրբութիւն, և օրհնեցէք Տիրոջը։

Տէրը կը օրհնէ մեզ Սիօնիցը, որ երկինքն ու երկիրս արաւ։

(ՃԼԷ.) Գոհանում եմ քեզանից, Տէր, բոլոր սրտովս հրեշտակների առաջին քեզ սաղմոս կ'ասեմ։

Որովհետև լսեցիր իմ բերանի խօսքը, երկրպագութիւն կ'անեմ քո սուրբ տաճարի առա-

ջին, և կը գոհանամ քո անունիցը քո ողորմութեան և ճշմարտութեան համար։

Մեծացրիր բոլորովին քո սուրբ անունը, այն օրում որ կանչեցի քեզ, շուտով լսիր ինձ. և շատացրու քո զօրութիւնները իմ անձումը։

Երկրի բոլոր թագաւորները գոհանում են քեզանից, որ քո բերանի խօսքերը լսեցին, և քո ճանապարհները օրհնում են։

Տիրոջ փառքը մեծ են, Տէրը բարձր է, և տեսնում է խոնարհները, նաև հեռուից ճանաչում է բարձրամիտ մարդիկները։

Եթէ նեղութեան մէջ գնամ ես, կ'ապրեցնես ինձ իմ թշնամու բարկութիւնիցը։

Զգեցիր քո ձեռքը և քո աջը փրկեց ինձ, և Տէրը կ'հատուցանէ իմ փոխարէն։

Տէր, քո ողորմութիւնը յաւիտեան է, քո ձեռքի գործերը երեսից մի՛ ձգեր։

(ԾԳ.) Ո՛վ Աստուած քո անունովը, և այլն։

(Տես երես 89)

Փառք Հօր և Որդւոյ, այժմ և միշտ։

ՔԱՐՈԶ.

Հաւատով միաբանութեամբ խնդրում ենք

Տիրոջիցը, որ իւր ողորմութեան շնորհն ածէ մեզ վերայ։ Տէրն ամենակալ ապրեցնէ և ողորմի։— Ապրեցրու Տէր (ձայնիւ)։

Տէր ողորմիր, Տէր ողորմիր, Տէր ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Քրիստոս Աստուած, խաղաղութեան թագաւոր, որ մեր անձերի օգնական և փրկիչդ ես, ամուր պահիր քո ժողովուրդը քո սուրբ և պատուական խաչի հովանու ներքոյ խաղաղութեամբ։ Փրկիր երևելի և աներևոյթ թշնամուց։ Արժանի արա գոհութեամբ փառաւորել քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ ԽԱՉԻ.

Սուրբ խաչովս աղաչենք Տիրոջը, որ սորանով փրկի մեզ մեղքերից, և ապրեցնի իւր ողորմութեան շնորհով։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Քրիստոս Աստուած, պահպանիր մեզ քո սուրբ և պատուական խաչի հովանու ներքոյ խաղաղութեամբ, փրկիր երևելի և աներևոյթ թշնամուց։ Արժանացրու գոհութեամբ փառաւորել քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։
Մեր Հայր, որ երկնքումն ես,

Սաղմոս ԶԷ.

Ո՛վ Տէր, իմ փրկութեան Աստուած, ցերեկ և գիշեր կանչեցի քո առաջին։

Թող իմ աղօթքը մտնեն քո առաջը Տէր, թող խոնարհուի քո ականջը իմ խնդրուածքներին։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս Գ.

Երբ որ կանչեմ լսիր ինձ, ո՛վ Աստուած, արդարութեանդ համեմատ, նեղութիւնիցը ինձ ազատեցիր, ողորմիր ինձ և լսիր իմ աղօթքը։

Ո՛վ մարդկանց որդիք, մինչև ե՞րբ պիտի խստասիրտ լինէք, և ունայն բան պիտի սի-

լէք, և ստութիւն պիտի խնդրէք։

Ճանաչեցէք, որ Տէրը զարմանալի բարիք է արել իւր սուրբերին, Տէրը լսում է, երբ որ կանչում ես նորան։

Երբ որ բարկանում էք, մի՛ մեղանչէք. ինչ որ ասում էք ձեր սրտերի մէջ, զղջացէք ձեր անկողիններումը։

Արդարութեան պատարագներ ընծայեցէք, և Տիրոջը յուսացէք։

Շատերն ասում էին ինձ, թէ Տիրոջ բարիքը ո՞վ ցոյց կը տայ մեզ, յայտնի նշանուեց մեզ վերայ քո երեսիդ լոյսը, և ուրախութիւն տուէր մեր սրտերին։

Նորանց ցորենի, գինու և ձիթենու պտղոց լցրեցրիր։

Եւս խաղաղութեամբ կը քնենք և կ՚զարթնենք, որովհետև դու Տէր, քո առանձին յուսովը բնակեցրիր մեզ։

(Զ.) Ո՛վ Տէր, մի՛ յանդիմաներ ինձ քո սրտմտութեամբը, և մի՛ խրատեր ինձ քո բարկութեամբը։

Ողորմիր ինձ, Տէր, որովհետև հիւանդ եմ ես, բժշկիր իմ անձը, որովհետև իմ ոսկերքը

սարսափում են

Իմ անձը շատ սարսափած է, և դու, ով Տէր, մինչև ե՞րբ։

Դարձիր Տէր, և փրկիր իմ անձը, ապրեցրու ինձ, Տէր, քո ողորմութեանդ համեմատ։

Որովհետև մահի մէջ ոչ ոք քեզ չէ յիշել, կամ գերեզմանումը ով կը փառաւորէ քեզ։

Ես վաստակեցի իմ հառաչանքներովը, բոլոր գիշեր լուացի իմ մահիճը, և արտասուքներովս թրջեցի իմ անկողինը։

Բարկութիւնից զարհուրեց իմ աչքը, մաշուեցի ես իմ բոլոր թշնամեաց վերայ։

Հեռացէք ինձանից, դուք բոլոր անօրէնութիւն գործողներ։

Տէրը իմ լացի ձայնը լսեց, Տէրը իմ աղօթքին լսեց, և Տէրը ընդունեց իմ խնդրուածքը։

Թող ամաչեն և շատ զարհուրեն իմ ամեն թշնամիները, յետ դառնան և ամաչեն շուտով և զարհուրեն։

(ԺԲ.) Ո՛վ Տէր, մինչև ե՞րբ պէտք է մոռանաս ինձ խսպառ, մինչև ե՞րբ պէտք է դարձնես քո երեսն ինձանից։

Մինչև ե՞րբ պիտի հոգս անեմ իմ անձուն-

մը, և ցաւեր ունենամ իմ սրտումը օր օրերով։

Մինչև ե՞րբ պիտի իմ վերայ բարձրանայ իմ թշնամին, նայիր և լսիր ինձ, ով իմ Տէր Աստուած։

Լուսաւորիր իմ աչքերը, որ մահի մէջ չը ննջեմ երբէք։

Որ իմ թշնամին չ՚ասէ թէ ես յաղթեցի նորան, կամ իմ նեղացողները չ՚ուրախանան, որ ես տեղիցս շարժուեցի։

Ես քո ողորմութեանն եմ յուսացած, ով Տէր, իմ սիրտը ցնծացաւ քո փրկութեամբը, ես իմ բարերար Տիրոջը կ՚օրհնեմ։

(ԺԵ.) Պահիր ինձ, ով իմ Աստուած, որովհետև ես քեզ յուսացայ, ասացի Տիրոջը, թէ դու ես իմ Տէրը, և իմ բարիքը քեզանից են։

Քո սուրբերին՝ որ երկրումն են, փառաւորեցիր նորանց վերայ իմ բոլոր հաճութիւնը։

Կը շատանան նորանց ցաւերը, բայց յետոյ շտապելով կը դառնան։

Ես չեմ ժողովուել նորանց ժողովների մէջ՝ որ արիւնից են, և նորանց անունները չեմ յիշել իմ շրթունքներովը։

Դու ես Տէր, իմ ժառանգութեան և իմ

բաժակի բաժինը, որ ինձ կը դարձնես իմ ժառանգութիւնը։

Ինձ վիճակ ընկաւ ընտրեալների հետ, և իմ ժառանգութիւնը հաճելի եղաւ ինձ։

Ես կը օրհնեմ Տիրոջը՝ որ իմաստուն արաւ ինձ, և գիշերն էլ իմ երիկամունքները խրատում են ինձ։

Ես առաջուց տեսնում էի Տիրոջն իմ առաջին ամեն ժամանակ, որովհետև նա իմ աջ կողմն է, որ ես չը շարժուեմ։

Սորա համար իմ սիրտը ուրախացաւ, և իմ լեզուն ցնծաց նաև իմ մարմինս կը բնակուի յուսով։

Որովհետև իմ անձը չես թողնել գերեզմանումը, և քո սրբին ապականութիւն տեսնել չես տալ։

Դու ինձ ցոյց տուիր կեանքի ճանապարհը, և լցրիր ինձ քո երեսի ուրախութեամբը, և քո աջ կողմի վայելչութեան քաղցրութիւնից յաւիտեան։

(ԺԶ.) Ո՛վ Տէր, լսիր արդարութեան, և նայիր խնդրուածքներիս, ականջ դիր իմ աղօթքին։ որ սուտ շրթունքներով չէ։

Թող քո երեսից դուրս գայ իմ իրաւունքը, և թող իմ աչքերը տեսնեն ուղղութիւն։

Դու փորձեցիր իմ սիրտը, և գիշերումը քննեցիր, դու փորձեցիր ինձ, և անիրաւութիւն չը գտնուեց ինձանում։

Թող չը խօսի իմ բերանը մարդկանց որդւոց գործերը, քո շրթանց խօսքի պէս ես կը պահեմ խիստ ճանապարհներ։

Հաստատեցիր իմ գնացքը քո ճանապարհումը, որ ոտքերս չը գլորուեն։

Ես կանչում եմ քեզ, Տէր, որ դու լսես ինձ, ո՛վ Աստուած, ականջդ ինձ մօտ խոնարհեցրու. և լսիր իմ խօսքերը։

Փառաւոր արա քո ողորմութիւնը, ո՛վ դու որ քո յուսացողներին փրկում ես նորանցից, որ քո աջ ձեռին հակառակ են կենում։

Պահիր ինձ ինչպէս աչքի բիբ, և քո թևերի տակ ծածկիր ինձ, այն ամբարիշտներից՝ որ չարչարեցին ինձ։

Թշնամիքը իմ չորս կողմը պաշարեցին, և փակում են իրենց պարարտ սիրտը, և նորանց բերանները ամբարտաւանութիւն են խօսում։

Հեռացրին ինձ, և այժմ դարձեալ իմ չորս

կողմը պատեցին, մտադիր են որ ինձ դեռնի վերայ ձգեն։

Նորանք առիւծի նման են, որ պատրաստուում է որսի, և ինչպէս առիւծի ձագ որ ծածուկ տեղումը նստած է։

Վեր կաց, Տէր, հասիր նորանց առաջը, և խափանիր նորանց, փրկիր իմ անձը ամբարշտների սրիցը և թշնամու ձեռքիցը։

Ո՛վ Տէր, երկրի երեսիցը կորցրու նորանց, բաժանիր և խափանիր նոցա իրենց կենաց մէջը։

Քո գաղտնի գանձերովը լցուեցին նորանց փորերը կերակուրներով կ՚շտացան, և մնացածները թողին իրենց երեխաներին։

Ես կուզեմ արդարութեամբ երևալ քո երեսի առաջին, և կըշտանալ՝ երբ որ կ՚երևայ քո փառքը։

(ԽԲ.) Դատաստան արա ինձ, ո՛վ Աստուած, և իրաւունք արա իմ դատաստանի մէջ։

Անսուրբ ազգիցը, մեղաւոր և նենգաւոր մարդիցը փրկիր ինձ։

Դու, ո՛վ Աստուած, որ իմ զօրութիւն ես, ինչո՞ւ մոռացար ինձ, ինչո՞ւ տրտում գնամ

ես իմ թշնամու նեղացնելու համար։

Ուղարկիր, ո՛վ Տէր, քո լոյսը և քո ճըշմարտութիւնը, որ առաջնորդեն ինձ, և տանեն ինձ դէպի քո սուրբ լեառը, և դէպի քո բնակարանները։

Ես կը մտնեմ Աստուծոյ սեղանի առաջը, իմ Աստուծոյ մօտ, որ ուրախացնի իմ մանկութիւնը։

Կը գոհանամ քեզանից օրհնութեամբ, ո՛վ իմ Աստուած Աստուած։

Արդ՝ ինչո՞ւ տրտում ես, ո՛վ իմ անձը, կամ ինչո՞ւ կը շփոթես ինձ, յուսացիր Աստուծոյն, գոհացիր նորանից, որ իմ երեսի փրկութիւնը և իմ Աստուածն է։

(ԿԻ.) Ո՛վ Աստուած, օգնելու համար, ևայլն։

(Տես երես 64)։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ.

Երեկոյիս մօտենալու ժամանակը, ձեռքները բարձրացնում ենք սրբութեամբ, և ինչ

մեղք որ գործեցինք այսօր խորհրդով, խօսքով, կամ գործով. մեր անկողինների մէջ զղջում ենք նորանց վերայ, և խոստովանում ենք մեր սրտի գաղտնիքը, ծածուկները գիտացող Աստուծոյդ առաջին, քո ողորմութեանդ վերայ յուսալով։ Ուստի միաբան գոչում ենք, լիշիր մեզ Տէր, երբ որ քո արքայութեամբդ գաս և ողորմիր մեզ։

ՔԱՐՈԶ.

Գոհանում ենք Տիրոջիցը, որ իւր ողորմութեամբը առաջնորդեց մեզ ցերեկուայ գործերի մէջ, և շնորհեց մեզ միաբան գալ հասնել գիշերային հանգստութեան մէջ։ Եւ մենք ամեն ժամանակ աղաչում ենք մարդասէր Աստուծոյն, որ մեր անձերի պահապանը լինի, և նա իւր ողորմութեամբը պահէ մեզ. և առաջնորդելով հասցնէ իւր բարութեան հանգստեան մէջը, որ խոստացաւ իւր սիրելիներին ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս ամենակալ Տէրը, ապրեցնէ և ողորմի։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ Տէր բարերար, որ քո մեծ գթութեամբ

յաւիտենական հանգիստը պատրաստեցիր առաքինութեամբ աշխատողների համար. և քաղցր ձայնով դէպի քեզ կանչեցիր մեղքով ծանր բեռի տակ ընկածներն ու վաստակածները. հանգստութիւն խոստանալով նորանց։ Շնորհիր և մեզ, ո՛վ Տէր, անխռով խաղաղութեամբ անցկացնել այս գիշերս, և քո ողորմութեամբդ ապահով արա մեզ մեղաց ծանրութիւնից վատակածներիս, և արժանի արա մշտենջենաւոր հանգստութեանն քո ամեն սուրբերիդ հետ, որ գոհանալով փառաւորենք քեզ Հօր, և ամենասուրբ հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Մեր Տէր Աստուած, որ բարիք պարգևող ու խաղաղութեան աղբիւր ես, ամեն սատանայական խռովութիւններից խաղաղացրու մեր միտքն ու խորհուրդները այս գիշերուան մէջ և ամեն ժամանակ։ Որպէս զի այս անցաւոր աշխարհիցը քեզանով առաջնորդուելով հասնենք երկնքի յաւիտենական արքայութեանդ, որ աշխարհի սկզբիցը քո սուրբերիդ համար

պատրաստեցիր։ Եւ նորանց հետ գոհանալով փառաւորենք Հայր և Որդի և սուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ԻԶ.

Տէրն է իմ կեանքը, ես ո՞ւմնից պիտի վախենամ, Տէրն է իմ կեանքի յոյսը, ես ո՞ւմնից պիտի դողամ։

Չարերը ինձ վերայ են մօտենում, որ իմ մարմինը ուտեն, իմ նեղացողները և իմ թշնամիները տկարացան և վայր ընկան։

Եթէ պատերազմ իմ վերայ պատրաստուի, իմ սիրտը չի վախենալ, և թէ զօրաբանակ էլ վեր կենայ ինձ դէմ, դարձեալ, ո՛վ Տէր, ես քեզ եմ յուսացած։

Մի բան եմ խնդրում Տիրոջիցը, և այս եմ աղաչում, որ Տիրոջ տանը բնակուեմ իմ կեանքի բոլոր օրերը։

Որ տիրոջ վայելուչ փառքը տեսնեմ, և նորա տաճարումը հրաման տալ։

Չար օրերումը նա ծածկեց ինձ իւր խորանի մէջ, նա գաղտնի պահում է ինձ իւր խորանի ծածուկ տեղումը։

Նա բարձրացրեց ինձ վիմի վերայ, և այժմ իմ գլուխը բարձրացրեց իմ թշնամիների վերայ։

Ես նորա խորանի շուրջը պատելով, օրհնութեան պատարագ կը մատուցանեմ նորա խորանի մէջ, կ՚օրհնեմ և սաղմոս կ՚ասեմ Տիրոջը։

Լսիր, Տէր, իմ ձայնին, որ կանչեցի դէպի քեզ, ողորմիր ինձ, և լսիր ինձ, որովհետև իմ սիրտը ասում է քեզ. թէ իմ երեսը քեզ խնդրեց, Տէր, ես էլ խնդրում եմ քո երեսը։

Մի դարձներ ինձանից քո երեսը, և մի հեռանար ծառայիդ քո բարկութեամբ։

Տէր, դու իմ օգնականն եղիր, մի անարգեր ինձ, և մի թողներ ինձ, ո՛վ իմ փրկութեան Աստուած։

Իմ հայրս ու մայրս թողին ինձ, և իմ Տէրը ընդունեց ինձ։

Սովորեցրու ինձ, Տէր, քո օրէնքի ճանապարհը, և առաջնորդիր ինձ ուղիղ ճանապարհում։

Իմ թշնամիների համար մի մատներ ինձ

իմ նեղայնողների ձեռքը։

Վեր կացան ինձ վերայ մեղաւոր վկաներ, և իրենց անօրէնութեամբը սուտ կասեն ինձ դէմ։

Ես հաւատացի Տիրոջ բարութիւնը տեսնել կենդանեաց երկրումը, սպասիր Տիրոջը, թող սիրտդ պինդ և զօրաւոր լինի, և սպասիր Տիրոջը։

Փառք Հօր և Որդւոյ, այժմ և միշտ։

ՄԱՂԹԱՆՔ.

Տէր, քո երեսը մի դարձներ ինձանից, բարերար Տէր, աղաչում ենք քեզ, ինձ օգնական եղիր Տէր, մի անարգեր ինձ, և մի թողներ ինձ, ով իմ փրկիչ Աստուած։

ՔԱՐՈԶ.

Աղաչում ենք ամենակալ Աստուծուն, և խնդրում ենք նրանից, որ խաղաղութեան հրեշտակը ուղարկէ, որ գայ պահէ մեզ այս երկիւղալի գիշերիս մէջ, և ամբողջ պահելով մեր հոգին ու մարմինը դիւական խռովութիւնից մինչև մեր կենաց ժամանակի կատարումը։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ՍԱՂՄՈՍ.

Ո՛վ բարիք շնորհող, և ամեն պարգևներովդ առատ ու անմահ Տէր, աղաչում ենք քեզ, փարատիր մեր անձերից մութ և խաւար խորհուրդները։ Բանսարկու սատանայի խաբէութիւնից պահիր մեզ, և շնորհիր մեզ հաւատով ապաւինել ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Աղուհացի մնած պահոց մէջ այստեղ ասւում է Անրիծք սաղմոսը ՃԺԸ. Եւ անեալ են անրիծք.— Բաժին իմ ես դու, և Աբարի իրաւունս, որը աղօթասէրք առանձին կարող են ասել. իսկ ուրիշ օրերում, Մեր Հայր, որ երկ. և վերջ)։

ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԻՆ.

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս ամէն։

Մեր Հայր, որ երկնքումն ես։

Սաղմոս ԽԲ. 4.

Ուղարկիր, ո՛վ Տէր, քո լոյսը, և քո ճշմարտութիւնը, որ առաջնորդեն ինձ, և տանեն ինձ դէպի քո սուրբ լեառը, և դէպի քո բնակարանները։

Ես կը մտնեմ Աստուծոյ սեղանի առաջը, իմ Աստուծոյ մօտ, որ ուրախացնի իմ մանկութիւնը։

Գոհանում եմ քեզանից օրհնութեամբ, ո՛վ իմ Աստուած Աստուած։

Սրդ՝ ինչո՞ւ տխուր ես, ո՛վ իմ անձը, կամ ինչո՞ւ կ'շփոթես ինձ, յուսացիր Աստուծուն, գոհացիր նորանից, որ իմ երեսի փրկութիւնը և իմ Աստուածն է։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ՃԺԸ. 41—56։

Տէր, թող քո ողորմութիւնը գայ ինձ վերայ, և քո փրկութիւնը քո խօսքին պէս։

Ես կը պատասխանեմ ինձ խօսքով նախատողներին, որովհետև քո խօսքին եմ յուսացած։

Քո ճշմարտութեան խօսքը ամենևին մի հեռացներ իմ բերանից, որովհետև քո իրաւունքներին եմ յուսացած։

Քո օրէնքը պահեցի ամեն ժամանակ՝ յաւիտեանս յաւիտենից։

Անդորրութեան մէջ կը գնամ, որովհետև քո պատուիրանքները խնդրեցի։

Քո վկայութիւնը կը խօսեմ թագաւորների առաջին, և չեմ ամաչել։

Քո պատուիրանքների վերայ կը խորհեմ, որ նորանց սիրեցի։

Իմ ձեռքերը կը բարձրացնեմ դէպի քո պատուիրանքները որ սիրեցի, և քո արդարութեան վերայ կը մտածեմ։

Յիշիր քո ծառայի վերայ եղած խօսքը, որ ինձ նորան յուսալ տուիր։

Սա կը մխիթարէ ինձ իմ խոնարհութեան

մէջ, ովովհետև քո խօսքը ապրեցրեց ինձ։

Ամբարտաւանները շատ անիրաւութիւն են անում ինձ, այլ ես քո օրէնքիցը չեմ ծռվում։

Տէր, յիշեցի ես քո իրաւունքները յաւիտենից, և մխիթարուեցի։

Տխրութիւն բռնեց ինձ մեղաւորներից, որ քո օրէնքը թողին։

Քո իրաւունքները ինձ համար գովելի են՝ իմ պանդխտութեան տեղումը։

Տէր, գիշերն յիշեցի քո անունը, և պահեցի քո օրէնքը։

Այս եղաւ ինձ ճանապարհ կեանքի մէջ, որ քո արդարութիւնները խնդրեմ։

113—120. Ես անօրէնները ատեցի և քո օրէնքը սիրեցի։

Իմ օգնական և փրկիչս դու ես, և ես քո խօսքին յուսացայ։

Հեռի կացէք ինձանից, ով չարեր, որ ես պահեմ իմ Աստուծոյ պատուիրանքները։

Օգնիր ինձ քո խօսքի համեմատ, և ապրեցրու ինձ, և ամօթ մի՛ աներ ինձ իմ յուսոյ համար։

Օգնիր ինձ և ապրեցրու ինձ, և ես ամեն

ժամանակ քո իրաւունքների վերայ կը մտածեմ։

Դու անարգեցիր այն ամենքին, որ քո արդարութիւններիցը հեռանում են, որովհետև նորանց խորհուրդները անիրաւութեամբ էին։

Ես յանցաւոր համարեցի երկրի բոլոր մեղաւորները, սորա համար՝ ես սիրում եմ քո պատուիրանքները։

Բևեռիր իմ մարմինը քո երկիւղովը, որ քո դատաստանիցը վախենամ։

169—176. Տէր, թող իմ խնդրուածքը մօտենան քո առաջին, և քո խօսքի պէս իմաստուն արա ինձ։

Տէր, թող իմ աղօթքը մտնեն քո առաջին, և քո խօսքովը փրկիր ինձ։

Իմ շրթունքները քո օրհնութիւնները կը ըղխեն, երբ որ քո արդարութիւններդ կը սովրեցնես ինձ։

Թող իմ լեզուն խօսի քո խօսքերը, որովհետև քո բոլոր պատուիրանքները արդարութեամբ են։

Թող քո ձեռքդ ապրեցնէ ինձ, որովհետև ես ընտրեցի քո պատուիրանքները,

Տէր, ես ցանկացայ քո փրկութեանը, և

քո օրէնքն է իմ խօսքը։

Թող իմ անձը ապրի և օրհնէ քեզ, և քո իրաւունքները օգնեն ինձ։

Ես մոլորուեցի ինչպէս կորած ոչխար, խնդրիր քո ծառային, որովհետև քո պատուիրանքները ես չը մոռացայ։

ԼԵ 12. Թող ամբարտաւանների ոտքը իմ վերայ չը գայ, և մեղաւորների ձեռքերը չը դողացնեն ինձ։

Այնտեղ վայր կ'ընկնեն բոլոր անօրէնութիւն գործողները, կը հեռացուեն և էլ չեն կարող վեր կենալ։

Ես Տիրոջն յուսացայ, կը ցնծամ և կ'ուրախանամ իմ փրկիչ Աստուծովը։

Տէր, Տէրը տուեց ինձ զօրութիւն, և իմ ոտները դրեց հաստատութեան մէջ, իմ թշնամու պարանոցի վերայ հաստատեց ինձ, և շուտով հանգստացրեց ինձ։

Ղ. Որ բնակուած է բարձրեալ, և այլն. (Տես երես 79)։

ՃԻԲ. Ո՛վ Տէր, դէպի քեզ, և այլն. (Տես երես 170)։

ԾԳ. Ո՛վ Աստուած քո անունովը, և այլն.

(Տես երես 89)։

Դան. Դ. Օրհնուած ես դու, մեր հայրերի Տէր Աստուած, գովուած և աւելի բարձրացած յաւիտեան։

Եւ օրհնուած է քո սուրբ փառքի անունը, գովուած և աւելի։

Օրհնուած ես քո սրբութեան փառաց տաճարումը, գովուած և աւելի։

Օրհնուած ես քո արքայութեան աթոռի վերայ, գովուած և աւելի։

Օրհնուած ես՝ որ նստում ես քերովբէների վերայ, և նայում ես անդունդները, գովուած և աւելի։

Օրհնուած ես երկնքի հաստատութեան վերայ, գովուած և աւելի։

Օրհնեցէք Աստուծուն նորա սրբութեան մէջ. օրհնեցէք նորան նորա հաստատութեան զօրութեան մէջ։

Օրհնեցէք նորան նորա զօրութեան մէջ, օրհնեցէք նորան նորա շատ մեծութեան մէջ։

Օրհնեցէք նորան օրհնութեան ձայնով, օրհնեցէք նորան սաղմոսներով և օրհնութեամբ։

Օրհնեցէք նորան ցնծութեամբ, գովեցէք նորան ուրախութեամբ։

Օրհնեցէք նորան քաղցր խօսքերով, գովեցէք նորան լսելի բարբառով։

Օրհնեցէք նորան գոհութեան ձայնով, ամեն հոգիք օրհնեցէք Տիրոջը։

Ղուկ. Բ. 29—32. Արդ արձակում ես քո ծառային, ո՛վ Տէր, քո խօսքի պէս խաղաղութեամբ։

Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկութիւնը, որ պատրաստեցիր ամեն ժողովուրդների առաջին։

Լոյս հեթանոսներին լուսաւորելու, և փառք քո Իսրայէլ ժողովուրդի համար։

Սաղմ. ՃԼԷ. 7, 8. Ձգեցիր քո ձեռն, և քո աջը փրկեց ինձ, և տէրը կը հատուցանէ իմ փոխարէն։

Տէր, քո ողորմութիւնը յաւիտեան է, քո ձեռքիդ գործերը երեսիցդ մի ձգեր։

Սաղմ. ՃԽԱ. 7, 8. Տէր, իմ անձը հանիր բանտիցը, որ գոհանամ քո անունիցը։

Արդարները սպասում են քեզ, մինչև բարի հատուցումն անես նորանց։

Ղուկ. Ա. 47—55. Թող իմ անձը փառաւորէ Տիրոջը, և իմ հոգին ուրախանայ իմ փրկիչ Աստուծովը։

Իւր աղախնի խոնարհութեան վերայ ողորմութիւն արեց, այսուհետ բոլոր ազգերը երանութիւն կը տան ինձ։

Հզօրը մեծամեծ բաներ արաւ ինձ, և սուրբ է նորա անունը։

Նորա ողորմութիւնը ազգից ազգ նորանից վախեցողների վերայ է, զօրութիւն արաւ իւր բազուկներովը։

Ցրուեց ամբարտաւաններին իրենց սրտի մտածմունքներից, և զօրաւորներին վերցրեց աթոռներից։

Խոնարհներին բարձրացրեց, կարօտներին բարութեամբ լցրեց, և մեծատուններին դատարկ արձակեց։

Իւր Իսրայէլ ծառային օգնեց, իւր ողորմութիւնը յիշելով։

Ինչպէս մեր հայրերի հետ խօսեց, Աբրահամին և նորա զաւակին՝ մինչև յաւիտեան։

Սաղմ. ՁԵ. 15, 16, Քո զօրութիւնը տուր քո ծառային, ապրեցրու քո աղախնի որդւոյն,

և բարութեան նշան արա ինձ վերայ։

Որ ինձ ատողները տեսնեն և ամաչեն, որովհետև դու, Տէր, օգնեցիր ինձ և մխիթարեցիր ինձ։

Փառք Հօր, այժմ և միշտ։

ՄԱՂԹԱՆՔ.

Իմ անձը քո ձեռքումն է ամեն ժամանակ, և քո սուրբ խաչին եմ յուսացել, երկնաւոր Թագաւոր, քո սուրբերիդ բազմութիւնը բարեխօս ունինք դէպի քեզ։ Դու որ երկայնամիտ (համբերող) ես բոլորին, մի անտես աներ քեզ ապաւինողներին, այլ պահիր քո պատուական և սուրբ խաչովդ խաղաղութեան մէջ։

ԲԱՐՈՁ.

Աղաչենք ամենակալն Աստուծուն, և խնդրենք նորանից, որպէս զի խաղաղութեան հրեշտակը ուղարկի, որ գայ և պահէ մեզ երկիւղալի գիշերիս մէջ, դիւական խռովութիւնից ամբողջ պահելով մեր հոգին ու մարմինը, մինչև մեր կենաց ժամանակի կատարումը։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ո՛վ մեր Տէր Աստուած, դու պահիր մեզ խաղաղութեամբ այս գիշերիս մէջ և ամեն ժամանակ։ Քո սուրբ երկիւղի մէջ բևեռած պահիր մեր միտքն ու խորհուրդները։ Որպէս զի ամեն ժամանակ քեզանով պահպանուած մնանք թշնամու որոգայթներից։ Եւ քեզ օրհնութիւն և փառք մատուցանենք Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն

Աստուծոյ երկրպագեսցուք

Ո՛վ Տէր զօրութեանց, խաղաղութեան հրեշտակին յանձնիր մեր անձերը, որ գայ անխռով պահի մեզ ցերեկ և գիշեր, արթուն և քուն եղած ժամանակ, վասն զի դու ես լոյսի արարիչն և գիշերի ստեղծողը։ Եւ այժմ աղաչում ենք քեզ, մեր Տէր Աստուած, այս գիշերիս հանգիստը՝ շնորհիր խաղաղութեամբ անցնել, և հասնել առաւօտուայ պաշտօնին, երկրպագելու և փառաբանելու համար ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ ՁՕՐԱՒՈՐՔ
ԳԻՇԵՐԱՑԻՆ ՁԱՐՀՈՒՐԱՆՔԻ
Ս. Գրիգոր Նարեկացւոյ

Բան. ԺԲ.

Տէր Աստուած հզօր, քաղցրութեամբ ընդունին դառնացողիս աղաչանքը, գթութեամբ մօտեցիր դէպի դէմքով ամաչողիս. ամենապարգև, փարատիր ամօթալի տխրութիւններս, ողորմած, վերացրու ինձանից անտանելի ծանրութիւններս, հնարաւոր, ջոկիր մահացու կրթութիւններս, միշտ յաղթող, աւերիր խաբողի (սատանայի) կամքը, վերնային, հեռացրու մոլորողի մթութիւնը, կեցուցանող, խափանիր կորցնողի ընթացքը, ծածկատես, ցրուիր բռնողի չար հնարքը, անքննին, խորտակիր կռուողի գնացքը, խաչակնքիր քո անունովդ բնակարանիս երդի լուսամուտը, ծածկիր քո ձեռքովդ տաճարիս ծածկը, նշանագրիր քո արիւնովդ սենեկիս սեմոց մուտքը, ձևացրու քո խաչիդ նշանը աղաչողիս ճանապարհի վերայ, ամրացրու քո աջովդ հանգստեանս ննջարանը, յորոգայթից

մաքրիր անկողնիս ծածկարանը, քո կամքովդ պահիր տառապեալ ոգւոյս անձը, անվնաս արա քո շնորհած մարմնոյս շունչը, շրջապակ հաստատիր երկնային զօրաց բազմութիւնը, կարգիր յանդիման դևերի դասին։ Ուրախութեան հանգիստ տուր մահանման քնիս այս գիշերիս խորութեան մէջ. սուրբ Աստուածածնիդ և ամեն ընտրելոց աղաչանքի բարեխօսութեամբը։ Ամփոփուած պահպանիր աչքիս տեսութիւնը, որ է մտքիս իմաստից զգայարանքը՝ աներկիւղ քնի հանգստութեամբ, ալէկոծուած խռովութիւնից, աշխարհային զբաղմունքից, երազական երևոյթից, անվնաս պաշտպանիր քո յուսոյդ յիշատակովը։ Եւ ամենազգաստ արթնութեամբ և նորոգուած հոգւով կրկին զուարթանալով քնի ծանրութիւնից՝ հաստատուիմ քեզանում, այս մաղթանքի ձայնը՝ հաւատով երգակից անելով երկնագումար փառաբանողաց խմբի հետ երկինքը կուղարկեմ քեզ, ով ամենօրհնեալ անճառելի փառաց թագաւոր։ Որովհետև դու փառաւորուած ես ամեն արարածներից յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ

Սրբոյն Գրիգորի.

Բան. ԽԱ.

Կենդանի Աստուծոյ Որդի օրհնուած բոլորովին, ահաւոր Հօրդ անքննելի ծնունդ, որ ոչինչ բան չի տկարանալ քեզանից։ Երբ որ ծագում ես քո ողորմութեան փառքի նշոյլը՝ (լոյսը) կը հալուեն մեղքերը, կը հալածուեն դեւերը, կը ջնջուեն յանցանքները, կը կտրուեն կապանքները, կը խորտակուեն շղթայները, կը կենդանածնուեն մեռածները, կը բժշկուեն հարուածքները, կ՚առողջանան վէրքերը, կը բարձուին ապականութիւնները, կը հրաժարուին տխրութիւնները, կ՚անհետանան հառաչանքները, կը փախնի խաւարը, կը հեռանայ մէգը, կը մերժուի մառախուղը, կը փարատուի մշուշը, կը վերջանայ խաւարը, կը վերանայ մութը, կը գնայ գիշերը, կը հեռանայ տագնապը, կ՚ոչնչանան չարիքը, կը հալածուին յուսահատութիւնները. և կը թագաւորէ քո ամենակարող ձեռքը՝ բոլորի թողութիւն տուող։ Որ չեկար մարդկանց հոգիքը

կորցնելու, այլ ապրեցնել, թող ինձ իմ անթիւ չարիքը քո շատ ողորմութեամբդ։ Որովհետև դու ես միայն անպատմելի երկնքումը, և անքննելի երկրումս, գոյացեալ բնութեան մէջ, և աշխարհի վերջին ծայրերումը. ամենի սկիզբն և ամբողջապէս բոլորի մէջը, օրհնուած երկնքի բարձրութիւնումը, և քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ հետ փառք յաւիտեանս. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Սրբոյն Գրիգորի.

Բան. ՂԳ.

Աստուած յաւիտենական, բարերար և ամենակալ. լուսոյ ստեղծող, և գիշերի հաստատող, կեանք մահի մէջ, և լոյս խաւարի մէջ, ակնկալողների յոյս, և տարակոյսների երկար համբերութիւն, որ քո ամենարուեստ իմաստութեամբը մահուան ստուերը դարձնում ես առաւօտի մէջ, աննուազ ծագումն և անմուտ արեգակը. քանզի գիշերի խաւարը չէ կարող ծածկել քո տէրութեան փառքը։ Որում բոլոր արարածների երկնաւորների և երկ-

բաւորների և սանդարամետականների երկրպագութեան ծունր է կրկնում, որ լսում ես կապուածների հառաչանքը. և նայում ես խոնարհների աղօթքին. և ընդունում ես նորանց խնդրուածքները, ո՛վ իմ Աստուած և իմ թագաւոր, իմ կեանք և իմ ապաւէն, իմ յոյս և իմ վստահութիւն. Յիսուս Քրիստոս ամենի Աստուած, Սուրբդ հանգստուած սուրբերի հոգւոց մէջ, վշտացեալների մխիթարութիւն և մեղաւորների քաւարան, որ ամեն բան գիտես յառաջ քան նորանց լինելը, ուղարկիր քո աջի պահպանողական զօրութիւնը և փրկիր մեզ գիշերի երկիւղից և չար դէպքից։ Որպէս զի քո սոսկալի և սուրբ անուանդ յիշատակը միշտ համբուրելով՝ հոգւոյս շըրթունքներովը, շնչաց փափաքներովը, պահպանուած ապրեմ նորանց հետ՝ որ բոլոր սրտով աղաչում են քեզ։

Եւ քո խաչիդ նշանի խաչակնքելովը՝ որ քո Աստուածային արիւնովը ներկուած նորոգեցիր, և նոյն որդեգրութեան շնորհի մէջ մեզ մկրտեցիր. և քո փառաց պատկերի նման նկարուած ստեղծեցիր, այս Աստուածային

պարգևներովը կ՚ամաչի սատանան, կը քանդուին պատերազմի գործիքները, կը վերցնուին որոգայթները, կը յաղթուին կռուողները, կը պակասին սուր զէնքերը, կը մերժուի մթութիւնը, կը փարատուի խաւարը, կը հեռանայ մառախուղը։ Քո բազուկը հովանի կը լինի, և քո աջը կը հաստատէ, որովհետև դու գթած ես և ողորմած, և քո անունը կոչուած է քո ծառաների վերայ. և քեզ Հօր հետ սուրբ Հոգւովդ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԱՂՕԹՔ

Քրիստոսի հաւատացելոց իւրաքանչիւր անձի համար

Գրել է Սուրբ Ներսէս Շնորհալին

Հաւատով խոստովանում եմ, և երկրպագութիւն եմ տալիս քեզ, ո՛վ Հայր և Որդի և սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, ստեղծող հրեշտակներին, մարդկանց և ամեն եղածներին, և ողորմիր քո արարածներիդ և ինձ շատ մեղաւորիս։

Հաւատով խոստովանում եմ, և երկրպա-

գութիւն եմ տալիս քեզ, ո՛վ անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մէկ Աստուածութիւն, ստեղծող լոյսի և հալածող խաւարի, հալածիր իմ մեղքի և տգիտութեան խաւարը, և լուսաւորիր իմ միտքս այս ժամիս մէջ, որ աղօթք անեմ քեզ. ինչպէս որ դու կ՚ուզես, և ընդունել իմ խնդրուածքս, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ Հայր երկնաւոր ճշմարիտ Աստուած, որ քո սիրելի Որդիդ ուղարկեցիր մոլորեալ ոչխարը խնդրելու, մեղայ երկնքի դէմ և քո առաջիդ, ընդունիր ինձ անառակ որդւոյ պէս, և հագցրու ինձ իմ առաջին պատմուճանս որ մեղքովս հանեցի, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ Որդի Աստուծոյ ճշմարիտ Աստուած, որ խոնարհեցար Հայրական ծոցից, և մարմին առիր սուրբ կոյս Մարիամիցը մեզ փրկելու համար, խաչուեցար, թաղուեցար և մեռելներից յարութիւն առիր, և փառքով Հօրդ մօտ համբարձաւ, մեղայ երկնքի դէմ և քո առաջիդ, յիշիր ինձ աւազակին պէս, երբ որ կրգաս քո արքայութեամբ, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ Հոգի Աստուծոյ ճշմարիտ Աստուած, որ Յորդանանու գետն ու վերնատունը իջար, և լուսաւորեցիր ինձ սուրբ Աւազանի մկրտութեամբ, մեղայ երկնքի դէմ և քո առաջիդ, մաքրիր ինձ կրկին քո Աստուածային կրակովդ. ինչպէս կրակէ լեզուներով մաքրեցիր սուրբ Առաքեալներին, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ անեղ բնութիւն, մեղք գործեցի քեզ դէմ իմ մտքովս, և իմ հոգովս ու մարմնովս, մի՛ յիշիր իմ առաջին մեղքերս քո սուրբ անունիդ համար, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ ամեն բան տեսնող, մեղք գործեցի քեզ դէմ, խորհրդով, խօսքով ու գործով, ջնջիր իմ յանցանքիս ձեռագիրն, և գրիր իմ անունս կենաց գրքիդ մէջ, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ գաղտնիքների քննող, մեղք գործեցի քեզ դէմ, կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութիւն շնորհիր մեղաւորիս որ սուրբ Աւազանից ծնած օրէս մինչև այսօր մեղանչած եմ քո Աստուածութեանդ առաջին, իմ զգայարանքովս և մարմնիս բոլոր անդամներով, և ողորմիր քո արարածն:

Ո՛վ ամենախնամ Տէր, քո սուրբ երկիւղդ

պահապան դիր իմ աչքերիս, որ երբէք անպարկեշտ աչքով չը նայեմ, և իմ ականջներիս՝ որ չ'ախորժեմ լսել չարութեան խօսքեր, և բերանիս՝ որ սուտ չը խօսեմ, և սրտիս՝ որ չարութիւն չը խորհեմ, և ձեռքերիս՝ որ անիրաւութիւն չը գործեմ, և ոտքերիս՝ որ անօրէնութեան ճանբայ չը գնամ, այլ ուղղիր սորանց բոլոր շարժումները, որ միշտ քո պատուիրանացդ համեմատ լինեն ամէն բանի մէջ, և ողորմիր քո ար։

Ո՛վ Քրիստոս, որ կենդանութիւն տուող կրակ ես, քո սիրոյդ կրակը որ աշխարհի մէջ ձգեցիր, բորբոքիր իմ անձիս մէջ, որպէս զի այրէ իմ հոգւոյս ախտերը, և սրբէ իմ խղճմտանքս, և վառի իմ սրտիս մէջ քո գիտութեանդ լոյսը, և ողորմիր քո ար։

Ո՛վ իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն, որ բարի բաներ խորհեմ խօսեմ և գործեմ քո առաջիդ ամեն ժամանակ, չար խորհուրդներից չար խօսքերից ու չար գործերից փրկիր ինձ, և ողորմիր քո ար։

Ո՛վ բարի կամեցող, Տէր կամարար, մի՛ թողուր ինձ որ իմ կամքի ուզածին պէս գնամ,

այլ առաջնորդիր ինձ միշտ քո բարեսէր կամքիդ համեմատ վարուել, և ողորմիր քո ար։

Ո՛վ արքայ երկնաւոր, տուր ինձ քո արքայութիւնդ՝ որ խոստացար քո սիրելիներիդ, և զօրացրու իմ սիրտը, մեղքը ատել և քեզ միայն սիրել և քո կամքդ կատարել, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ ամեն արարածների խնամող, քո խաչիդ նշանովը պահիր իմ հոգիս ու իմ մարմինս՝ մեղքի խաբէութիւնից, դևերի փորձութիւնից, և անիրաւ մարդկանցից, և հոգւոյ և մարմնի ամեն վտանգներից, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ Քրիստոս, որ ամենի պահապանն ես, քո աջդ թող հովանի լինի իմ վերայ գիշեր ցերեկ, տան մէջ նստած, ճանբայ գնացած, և քնելու և արթնանալու ժամանակ, որ երբէք փորձանք չը պատահի ինձ, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ իմ Աստուած, որ քո ձեռքդ բանում ես և լցնում ես ամեն արարածներդ քո ողորմութեամբդ, քեզ եմ յանձնում իմ անձս, դու հոգա և պատրաստիր իմ հոգւոյ ու իմ

մարմնիս պէտք եղածները, այսուհետ մինչև յաւիտեան, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ մոլորեալների դարձնող, դարձրո՛ւ ինձ իմ չար սովորութիւններից դէպի բարի սովորութիւն, և տպաւորիր իմ հոգւոյս մէջ մահուան սոսկալի օրը, դժոխքի երկիւղը ու արքայութեան սէրը, որպէս զի մեղքերից զղջամ և արդարութիւն գործեմ, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ անմահութեան աղբիւր, աղբիւրի պէս ապաշխարութեան արտասունք բղխիր իմ սրտից պոռնկի պէս, որպէս զի լուանամ իմ մեղքերս այս աշխարհից ելնելէս յառաջ, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ ողորմութիւն պարգևող, շնորհիր ինձ ուղղափառ հաւատով, ու բարի գործով, և քո սուրբ Մարմնիդ ու Արիւնդ ճաշակելով զամ քո մօտդ, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ բարերար Տէր, բարի հրեշտակի յանձնիր ինձ, քաղցրութեամբ աւանդել իմ հոգիս, և երկնքի տակ եղած չար հոգւոց միջից խաղաղ անցնել, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանի արա

իմ հոգւոյս ուրախութեամբ տեսնել քո փառքիդ լոյսը կանչուելու (դատաստանի) օրումն, և բարի յուսով արդարների օթևանին մէջ հանգստուել, մինչև քո նորից գալուդ մեծ օրը, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ արդար դատաւոր, երբ որ կը գաս դատել կենդանիքն ու մեռածները, քո ծառայիդ հետ դատաստան մի՛ մտներ, այլ փրկիր ինձ յաւիտենական կրակից, և արդարների հրաւիրող ձայնը երկնքի արքայութեանդ մէջ՝ ինձ լսելու արժանի արա, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ ամենողորմած Տէր, ողորմիր ամեն քեզ հաւատացողներին, ազգականներիս և օտարներին, ծանօթներին և անծանօթներին, կենդանիներին և մեռածներին, թողութիւն շնորհիր նաև իմ թշնամիներիս, և իմ հետ ատելութիւն ունեցողներին, ինձ դէմ գործած յանցանաց, և դարձրո՛ւ նորանց իրենց չար դիտաւորութիւնից՝ որ ինձ համար ունեն, որպէս զի քո ողորմութեանդ արժանի լինեն, և ողորմիր քո արարածն։

Ո՛վ փառաւորուած Տէր, ընդունիր քո ծառայիդ աղաչանքը, և ի բարին կատարիր իմ

խնդիրքս, բարեխօսութեամբ սրբուհի Աստուածածնին, և Յովհաննէս Մկրտչին, և սուրբ Ստեփաննոս նախավկային, և մեր սուրբ Գրիգոր լուսաւորչին, և սուրբ Առաքեալներին, Մարգարէներին, Վարդապետներին, Մարտիրոսներին, Հայրապետներին, Ճգնաւորներին, Կոյսերին, և քո ամեն երկնաւոր և երկրաւոր Սուրբերդիդ։ Եւ քեզ անբաժանելի սուրբ Երրորդութեանդ վայելում է փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՄԱՂԹԱՆՔ.

Սրբուհի Աստուածածնի բարեխօսութեան համար, Տէր, ընդունէր մեր աղաչանքը, և ապրեցրու մեզ։

ԲԱՐՈՁ.

Սուրբ Աստուածածինն և ամեն սուրբերը բարեխօս անենք դէպի Հայր երկնքումը, որ կամենայ ողորմութիւն անել, և գթալով ապրեցնի իւր արարածները։ Ամենակալ մեր Տէր Աստուած, ապրեցրու և ողորմիր։

ԱՂՕԹՔ.

Ընդունէր, Տէր, մեր աղաչանքը, քո Միա-

ծին Որդւոյդ անարատ ծնող սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ, և քո ամեն սուրբերի աղաչանքովը. (և որոնց այսօր է յիշատակ), լսիր Տէր, և ողորմիր, ներիր, քաւիր և թող մեր մեղքերը։ Արժանի արա գոհութեամբ փառաւորել քեզ, Որդւոյդ և սուրբ Հոգւոյդ հետ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնուած մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն։

Մեր Հայր, որ երկնքում ես։

ՄԱՂԹԱՆՔ.

Մարդասէր Աստուած, քո բարերար կամքին հաճոյ լինելու համար՝ ընդունին այս հանգստեան աղօթքն ու աղաչանքը, մեր մեղքերին և շատ յանցանքներին թողութիւն շնորհիր, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Փառք քեզ, մեր Տէր Աստուած, որ այս օրս պարգևեցիր բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել։

Օրհնուած մարդասէր Աստուած, առաջի-

կայ գիշերս որ գալու է մեր վերայ, մեղքից փրկիր, չարից ազատիր, և բարի գործոց մէջ առաջնորդիր. ամէն:

Աստուծոյ օրհնութեանցն և փառաբանութեանցն արժանի արա քո սուրբ անուանդ ամեն հաւատացողներին, և պահիր խաղաղութեան մէջ. ամէն:

Մեր Տէր Աստուած՝ քո խաղաղութիւնդ տուր ամեն աշխարհի, ցասումն և պատուհասը վերացրու քո արարածներիցը. ամէն:

Ողորմիր մեր կենդանի և հանգուցեալ հայրերին և եղբայրներին. ամէն:

Ողորմիր եկեղեցի և դպրատուն շինողներին, երախտաւորներին. պտուղ տուողներին, սպասաւորներին, և նորանց՝ որ սուրբ Եկեղեցւոյ հովանու տակ հանգստուած են. ամէն:

Մեր Տէր Աստուած, օգնիր քրիստոնէից թագաւորներին, և բարեպաշտ իշխաններին, զօրքերին և նորանց զաւակներին՝ խաղաղութեան մէջ պահելով. ամէն

Մեր Տէր Աստուած, մեր Առաջնորդներն և եղբայրութիւնը ամբողջ և խաղաղ պահիր քո ողորմութեանդ կամքի մէջ. ամէն:

Քո սուրբ և պատուական խաչիդ նշանովը հալածիր երևելի և աներևոյթ թշնամին մեր սահմաններից և բնակութիւնից: Փրկիր մեզ յաւիտենական կրակից, և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Թող օրհնուած լինէք սուրբ Հոգւոյ շնորհիցը, հանգստուէք խաղաղութեամբ, և Տէրը լինի բոլորիդ հետ. ամէն:



ՅԱՆԿ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ 5
ԱՂՕԹՔԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ . 9
ԲԱՐԻՈՔ ԱՂՕԹՔ ԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆ-
ՆԵՐԸ 11
ՊԱՇՏԱՄՈՒՆՔ 16
Աղօթք, Ս. Եկեղեցի մտնելու ժամանակ 20
Աղաչում ենք . . Քարոզ —
Տաճարիս մէջ . . Աղօթք 21
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԻՆ . 22
Ո՛վ Տէր, եթէ իմ շրթունքս . . —
Ո՛վ Տէր, ինչպէս շատացան Սաղմոս 23
Մենք ամենքս . . Քարոզ 30
Գոհանում ենք քեզանից Աղօթք 33
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԻՆ . 36
Լցուեցինք, ո՛վ Տէր Աստուած Սաղմոս —
Օրհնուած ես մեր Հայրերի
Աստուած . . Փոխ 37
Օրհնեցէք բոլոր արարածներ Մաղթանք 42

Փառք Աստուծոյ երկնքումը . . 43
Փառք պատիւ . . Մաղթանք 45
Ամենքս միաբանութեամբ Քարոզ —
Բարեխօս ունենք . Մաղթանք 47
Փառաւորում ենք ամենա-
կալն Աստուծոյն Քարոզ 48
Գոհանում ենք քեզանից Աղօթք —
Փրկել մեզ փորձութիւնից Մաղթանք 50
Լսելի լինելու համար Քարոզ —
Օրհնեցէք մանկունք Սաղմոս —
Բոլոր աշխարհի, և Քարոզ 52
Սուրբ ես . . Աղօթք —
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԻՆ . 54
Տիրոջ անունը օրհնուած լինի . . —
Արևելքիցն մինչև . Քարոզ —
Արևելքից մինչև . Աղօթք 55
Աղաչում ենք ողորմիր Մաղթանք 56
Սուրբ ճգնաւորներովը Քարոզ —
Սուրբ ես Տէր . . Աղօթք 57
Ո՛վ իմ Աստուած Աստուած Սաղմոս 58
Ո՛վ Քրիստոս քո լուսովդ Մաղթանք 60
Փառաւորենք ամենակալն Քարոզ 61

Ո՛վ ամենակալ . . Աղօթք 61
Տէրը կը հովուէ . Սաղմոս —
Ո՛վ Տէր ուղղիր . Մաղթանք 65
Աղաչենք ամենակալ . Քարոզ 66
Օրհնուած ես . . Աղօթք —
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԵՐԲՈՐԴ ԺԱՄԻՆ . . . 67
Ողորմիր ինձ . . Սաղմոս —
Ամեն ժամանակ . Մաղթանք 69
Ամենքս միաբան . Քարոզ 70
Ո՛վ Յիսուս . . Աղօթք 71
Հաւատով խնդրենք . Քարոզ 72
Ո՛վ մեր Տէր Աստուած Աղօթք 73
Գոհաբանելով աղաչենք Քարոզ —
Ո՛վ սուրբ Հոգիդ . Աղօթք 74
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄԻՆ . . 75
Արթուն մտքով . Քարոզ —
Ո՛վ մեր Տէր Աստուած Աղօթք 76
Աղաչենք մեր Փրկիչ Քարոզ 77
Ո՛վ մեր Տէր Աստուած Աղօթք 78
Երանի նորան . . Սաղմոս 79
Հաւատով խնդրենք . Քարոզ 81

Ո՛վ Հայը գթութեանց Աղօթք 82
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԻՆՆԵՐՔՐԴ ԺԱՄԻՆ . . 83
Ամեն ժամանակ . Մաղթանք —
Սուրբ սրտով . . Քարոզ —
Ո՛վ Տէր զօրութեանց Աղօթք 85
Աղաչենք մեր կենսատու Քարոզ 86
Ո՛վ բարերար . . Աղօթք 87
Ես սիրեցի . . Սաղմոս —
Մեր սաղմոսերգութիւններն Մաղթանք 90
ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ
ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴԻ . 91
Աղգ . . . . . —
Այս Մարգարէների Աղօթք 93
Ո՛վ մեր Տէր Յիսուս Քրիստոս » 95
Ո՛վ իմ Տէր Յիսուս . » 96
Այս սուրբ տանս . » —
Ո՛վ իմ Տէր Յիսուս Քրիստոս » 97
Խոստովանում եմ և հաւատում » 98
Իւղ թափուած . . » 100
Սուրբ Աստուած . . » 101
ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱԻԱՏՈՅ » 103
Հաւատով աղաչում ենք Քարոզ 106

Ո՛վ Տէր և փրկիչ Աղօթք 107
Քո խաղաղութեամբդ » 108
Ո՛վ Տէր մեր Յիսուս Քրիստոս » 109
Ելս առաւել հաւատով Քարոզ 112
Աստուծոյ և մարդկան միջ-
նորդ . Աղօթք 113
Սուրբ, Սուրբ, Սուրբ » 115
Օրհնուած է կենաց . » 117
Օրհնուած է ձրի շնորհն » 118
Ո՛վ երկնաւոր Հայր . » —
Արժանապէս օրհնում ենք » 119
Ո՛վ կենաց հաց . . » 120
Ո՛վ Աստուծոյ Հոգի . » 121
Յիշիր ո՛վ Տէր . . » 122
Գոհութիւն և փառաբանութիւն » 124
Ո՛վ մեր Հայր . . » 125
Խոստովանում եմ . . » 126
Խոստովանում և հաւատում եմ » 127
Ո՛վ Աստուծոյ միածին Որդի » 128
Հաւատով հաւատում եմ » 130
Մեր Աստուածն . Գոհութիւն —
Շնորհակալ ենք քեզանից Աղօթք 131
Օրհնում ենք քեզ . » 132

Տիրոջով թող պարծի Սաղմոս 133
ԿԱՆՈՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ . 136
Զղջումն . . . . . —
ԱՂՕԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ
Ո՛վ Տէր . . Սաղմոս 141
Երանի նորան . . » 142
Ողորմիր ինձ . . » 143
Ո՛վ Տէր, լսիր . . » 144
Ո՛վ Տէր, խոր տեղերից . » 146
Աղօթք Յովնանու Մարգարէին . 147
Աղօթք Մանասէ թագաւորին . 148
Մենք ամենքս . Քարոզ 152
Ո՛վ Տէր . . Աղօթք 153
ԱՂՕԹՔ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ 154
ԱՂՕԹՔ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏ 155
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԻՆ . 158
Ես դէպի Աստուած . Սաղմոս —
Ո՛վ Տէր խոնարհեցրու » —
Փառք քեզ . . Մաղթանք 160
Ո՛վ Տէր ապրեցրու . Սաղմոս —
Օրհնուած ես ո՛վ Տէր Մաղթանք 164
Մենք որ հասած ենք Քարոզ 165

Մենք ամենքս հասնելով Մաղթանք 166
Ամենքս միաբանութեամբ Քարոզ —
Աղաչում ենք ամենակալ » —
Լսիր մեր ձայնին . Աղօթք 167
Ես բարձրացրի իմ . Սաղմոս 169
Ո՛վ Հայր գթած . Աղօթք —
Որ ընակուած է . Սաղմոս 170
Բարձրեալ Քրիստոսին Մաղթանք 171
Եւ մենք միաբան . Քարոզ —
Ո՛վ մեր Քրիստոս Աստուած Աղօթք —
Այստեղ Տիրոջ . . Սաղմոս 172
Հաւատով միաբանութեամբ Քարոզ 173
Ո՛վ մեր Քրիստոս Աստուած Աղօթք 174
Սուրբ խաչովս աղաչենք Քարոզ —
Ո՛վ մեր Քրիստոս Աստուած Աղօթք —
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԻՆ . 176
Ո՛վ Տէր իմ . . Սաղմոս —
Երբ որ կանչեմ . » —
Երեկոյին մօտենալու Մաղթանք 183
Գոհանում ենք Տիրոջից Քարոզ 184
Ո՛վ Տէր բարերար . Աղօթք —
Տէրն է իմ կեանքը . Սաղմոս 186

Տէր, քո երեսը . Մաղթանք 188
Աղաչում ենք ամենակալ Աստուծոյն . Քարոզ —
Ո՛վ բարեք շնորհող . Աղօթք 189
ԱՂՕԹՔԻ ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՆԳԱՏԵԱՆ ԺԱՄԻՆ . 190
Ուղարկիր ո՛վ Տէր . Սաղմոս —
Տէր, թող քո ողորմութիւնը » 191
Իմ անձը քո ձեռքումն է Մաղթանք 198
Աղաչենք ամենակալն Աստուծոյն . . Քարոզ —
Ո՛վ մեր Տէր Աստուած Աղօթք 199
Տէր Աստուած հզօր . Մաղթանք 200
Կենդանի Աստուծոյ Որդի Աղօթք 202
Աստուած յաւիտենական Մաղթանք 203
Հաւատով խոստովանում եմ Աղօթք 205
Սրբուհի Աստուածածնի բարեխօսութեան . Մաղթանք 212
Սուրբ Աստուածածինն Քարոզ —
Ընդունիր Տէր . . Աղօթք —
Մարդասէր Աստուած Մաղթանք 213

ԱՒՕ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

ԳԻՆՆ ԷՍՕՂՈՒՆ